Մեղմ հրեց նրան ու հոգսոտ, լռին
Մոտեցավ հրից ազատված իրին։
«— Դե, պատմի՛ր, պատմի՛ր, այս ի՞նչ ես անում.
Մեղքս ի՞նչ պահեմ. ես չեմ հասկանում—
Գցել ես դու քեզ այդ կրակն անել...
Բայց հրի միջից այդ ի՞նչ ես հանել...»։
Ու տխուր ժպտաց Լեգեոնը ծեր.
«— Դիակ է, ասաց, մեռած աղջկա.
Դիակներ են լոկ այստեղ մնացել—
Ուրիշ ժողովուրդ այս երկրում չկա...»։
— Բայց դու, Լեգեոն, դու ի՞նչ ես անում։
— Կրակի միջից ես բուրդ եմ հանում...

— Բայց ինչո՞ւ համար, Լեգեոն ընկեր...
«— Ախ, Ահո՛, Ահո՛... Մեծ աղետը մեր
Պե՞տք է վերջապես մի կերպ մեղմանա...
Դուք ի՞նչ գիտեք որ... Ես ներկա եղա
Մեր ժողովրդի սոսկալի բախտին.
Ես ներկա եղա Հայ ազգի գաղթին
Եվ համոզվեցի, հասկացա ես, որ
Ամենից առաջ բուրդ է հարկավոր
Մեր անտերացած, որբ ժողովրդին.
Միթե՞ չգիտես, որ ձմռան ցրտին
Նա դաշտում թափված, անտեր պիտ մնա.
Բաց դաշտի վրա, ձյուների վրա
Ու պետք է մեռնի անտուն ու անտեղ—
Ո՞վ կտա նրան անկողին այնտեղ...
Է, ես խոսելու չունեմ ժամանակ.
Գործ է հարկավոր և ո՛չ թե հանաք։
Եվ դու էլ, Ահո, սաս բոլորին,
Որ իմ հետևից հանձնվեն հրին՝
Բուրդ-բամբակ հանեն կրակի տակից—
Իսկ երբ հանեցինք բուրդը կրակից՝
Կերթանք, կգտնենք ժողովուրդը մեր
Եվ բուրդ կտանենք մենք նրան նվեր։
Եվ ժողովուրդը մեր որբ, արնաքամ,
Բուրդը գնելով մեր կյանքի գնով—
Հանգիստ կքնի առաջին անգամ
Մի եղեմական, մի անո՞ւշ քնով...»։
Երբ Ահոն այս մեծ խոսքերը լսեց
Ընկերոջ առաջ խոնարհվել ուզեց—
Ուզեց համբուրել ոտքերի փոշին.
Զարմացավ նրա հանճարի ուժին։
Հենց այն էր՝ իսկույն ուզում էր փորձի,
Բայց ընկերն ասաց.—«Ուրեմն — գործի,

Շո՛ւտ գործի անցեք. գիտեք, որ հիմա
Ձմեռ է այնտեղ, ու քամի, ու մահ,—
Իսկ որբերը մեր պառկած են հողին—
Մերկ... գետնի վրա... առա՛նց անկողին»։
Ու նետվեց նորից նա կրակը թեժ,
Որպես զոհ կարմիր, որպես ողջակեզ...

## 16

Ու հետևելով սուրբ օրինակին,
Բոլորը իրենց տվին կրակին—
Ստվար խմբերով կրակը ընկան...
— Ախ, գործում նրանց եռանդ կար այնքան,
Որ ես, ընկճված նրանց եռանդից,
Հայհոյում էի, ատում էի ինձ,
Որ չեմ աշխատում, չեմ գործում ես է՛լ,
Որ գիտեմ միայն երգել ու խոսել.
(Ախ, չէր մոռացել իմ խենթ սիրտը դեռ,
Որ երգիչ եմ ես... երկնքի թիթեռ...)
Աստված իմ, աստված, ի՛նչ եռանդ էր այդ։
Ես չէի տեսել այդպիսի եռանդ.
Չէի է՛լ լսել աշխարհում այս սին
Այդպիսի հսկա եռանդի մասին...
Չէր անցել գուցե և մի ակնթարթ
(Սրան են ասում իսկական եռանդ)—
Կրակի մե՛ջ էլ բուրդ չէր մնացել.
Ե՛վ հանել էին, և հարմար բարձել
Ջիերի վրա բուրդը արնակեզ.
Այն արնոտ բրդի մի քարվան էր մեծ,
Որ ճամփա ընկավ երգով հաղթական
Դեպի հեռավոր վայրը գաղթական,
Ուր թափվել էր վար խուռը, բազմահոծ,
Հրդեհից փախած ժողովուրդն հայոց։

Օ, Իսահակյան եղբայր Ավետիք,—
Քանի կան կյանքում Թորգոմյան որդիք—
Աբուլ Ալաներ չեն պակսիլ կյանքից...
Սիրելի եղբայր, հավատա՛ դու ինձ,
Որ երբ ես տեսա երազիս միջում,
Թե ինչպես քա՜ղցր է, քա՜ղցր է ղողանջում
Բրդի քարվանը Լեգեոն մեծի—
Աբուլ Ալայիդ քարվանն հիշեցի...
Մի՞թե այս բանում մեղավո՞ր եմ ես—
Ավո ջան, հոգի՛ս, խնդրում եմ.. ներես...
Մի՞թե չգիտես, որ մարդ երազում
Երբեմն հիմար բաներ է ասում։—
Ես էլ, երբ որ այդ քարվանը տեսա—
«Աբուլ Ալայի քարվանն է սա»—
Չգիտեմ ինչու ասացի հանկարծ...
Ախ, չէր մնացել խելքի մի առկայծ
Այդ նվիրական, այդ սուրբ վայրկյանին,
Երբ աչքիս առաջ օրորվում էին
Ձիերը՝ բարձած արյունոտ բրդով
Եվ Լեգեոնը, երբ սուրբ եռանդով
Նրա առաջից քայլում էր հանդարտ...
Նույնիսկ ես տեսա, որ լուսե մի վարդ
Վառվում էր Նրա բյուրեղ ճակատին
Ու լույս էր տալիս աշխարհի մութին...
Ես այդ վայրկյանին շա՜տ էի հպարտ,
Որ մեր ազգն ունի այդպիսի մի մարդ։
Ու սիրտս Նրան օրհնեք էր ասում
Իմ տարօրինակ, իմ խենթ երազում—
Երբ տեսա, որ այդ քարավանը մեծ
Հին Արարատյան դաշտի մեջ կանգնեց։

Եվ ես լսեցի, որ դաշտում այդ մութ
Զարանցում է մի մեռնող ժողովուրդ…

. . . . . . . .

## 18

Ձյուն, բուք էր դաշտում։ Գիշեր ու քամի։
Ոռնում էր քամին, փնչում էր ու մի
Մահվան երգ դարձած, ձուլված խավարին,
Գնում էր դիպչում հին Մասիս սարին։
Ախ, ինչե՞ր ասես այդ երգում չկար.
— Մեռնող պառավի կանչեր խելագար.
Ձյունը ճանկռող հիվանդի հառաչ,
Քաղցից անասուն դարձածի բառաչ,
Մանկան մղկտանք, որ նվում է խուլ—
Մորթում են կարծես նոր ծնված մի ուլ…
Ու լալիս էին, ու քրքջում էին.
Քրքջում էր քամին, երգում էր քամին,
Նվում էր քամին հուսահատ ու խուլ—
Ու այս էր ասում այդ երգը մխուր.—
«Մա՞հ է այստեղ. հազա՞ր-հազա՞ր
Հեռանում են ու մարում—
Այս անիծված, անհավասար,
Արյունահեղ աշխարհում։
Բուք է այստեղ, ձմեռ ու մուժ,
Մահվան սարսուռ ու քամի—
Տեր է այստեղ մահը խուժդուժ՝
Բարեկամ ու թշնամի։
Համրվում են ժամերն անդարձ -
Ու աշխարհից ցուրտ ու մութ
Հեռանում է անվերադարձ
Մի արնաքամ ժողովուրդ…»։

*Երգում էր քամին, հեծկլտում էր խուլ—*
*Նվում էր կարծես մորթվող մի ուլ...*

. . . . . . . .

## 19

*Երբ լսում էի այս խուլ երգը ես—*
*Մի վայրկյան միայն մոռացա ասես*
*Բրդի քարվանը Լեգեոն մեծի,—*
*Բայց երբ որ հանկարծ նրան հիշեցի*
*Սրտիցս կարծես հեռացավ մի ամպ*
*Եվ սիրտս լցվեց անհուն բերկրությամբ։*
*Դաշտը մի վայրկյան լուսացավ կարծես —*
*Ու սիրտս նորից դադարել ուզեց.*
*Տեսա, որ դաշտում, անտուն, անկրակ,*
*Ձյուների վրա պառկած են նրանք,*
*Ձյուների վրա, և ո՛չ թե հողին,*
*Ձյուների վրա — առանց անկողին...*
*Ու սրտիս զարկով նորից հիշեցի*
*Բրդի քարվանը Լեգեոն մեծի—*
*Ու սիրտս նորից շունչ առավ հանդարտ.*
*— Ախ, նրանց համար փրկություն էր այդ...*
*Եվ ճիշտ որ՝ տեսա՝ վեհանձն, անձնվեր,*
*Ահա անձնուրաց հերոսները մեր,*
*Վեհ գործով տարված, մտազբաղ, լռին,*
*Բուրդ են բաժանում գաղթականներին...*
*Երկնքից իջած մի հրաշք էր այդ.*
*Մի վայրկյան չանցած, կամ մի ակնթարթ,*
*Ես տեսա հանկարծ, որ բոլորն արդեն*
*Պատրաստվում են, որ տեղերը հարթեն*
*Եվ մոռանալով ձմեռ ու մշուշ —*

Անկողին մտնեն ու քնեն անուշ…
Ու սիրտս ճախրեց, որպես մի թիթեռ.
Վայր ընկավ կարծես սրտիցս մի բեռ.
Աշխարհը կարծես լույս դարձավ ու փայլ.
— Օրհնե՛նք քեզ հավերժ, Լեգեոն եղբայր…
Այդ անրջական վայրկյանին ես, ա՛խ,
Որբերի քնին շա՛տ էի ուրախ…
Շա՛տ էի ուրախ նրանց հանգստին.
Ուրախ էի, որ նրանք վերստին
Գոնե մի գիշեր քնելու են կուշտ՝
Անո՛ւշ մոռացած զրկանք ու կորուստ…
Երբ հաջորդ պահին բախտից խելագար
Ես թաց աչքերով նայում էի վար—
Դրախտավայել ժպիտը շրթին
Ժողովուրդը իմ քնել էր արդեն…
Ու չկար արդեն ձյուն, ձմեռ ու մուժ.
Ժպիտը շրթին քնել էր անուշ,
Քնել էր հանգիստ ժողովուրդը խեղճ
Եվ իր երկնային երազում անվերջ
Տեսնում էր գուցե նա աշխարհը հին,
Երբ երկրի վրա հոգսեր չկային,
Երբ մարդը ուներ ժպիտներ ու թև
Ու երգը շրթին ապրում էր թեթև…
Նայում էի ես իմ ժողովրդին—
Ու դրախտային ժպիտը շրթին
Այնքան քաղցր ու խոր խռմփում էր նա,
Որ ես վախեցա… որ էլ չարթնանա…
Բայց վախս միայն մի վայրկյան տևեց.
Անխուսափ մի միտք սիրտս արևեց.
— Օ, թո՛ղ չարթնանա, ասացի ես ինձ.
Գիշեր է դուրսը մի մահու թախիծ,
Գիշեր է դուրսը ու ձմեռ է ցուրտ—
Քնի՛ր, օ, քնի՛ր, իմ խեղճ ժողովուրդ…

Ժպտում էի ես այդ ակնթարթին—
Ու հանգստացած իմ ժողովրդին
Նայում էի ես երկնի դրախտից
Ու լալիս էի անսահման բախտից...
Ու լույս էր շուրջս, հրաշք էր կարծես.
Հրճվանքից այնպես դողում էի ես,
Որ սիրտս կանգնեց ուրախությունից—
Եվ ես, քրտնաթոր, արթնացա քնից...
Արթնացա տեսա՝ անկողնում եմ — ես...,
Ու սառը ջուր լցրին իմ գլխին ասես։
Ուզեցի ճչամ ու կանչեմ մեկին,
Ուզեցի սեղմեմ աչքերս կրկին.
Գուցե պատահի, որ զարթնումը այս
Մի վայրկյան է սուտ, մի տխուր երազ...
Ու սիրտս ասաց, որ երկրում իմ ցուրտ,
Ուր բուք է, քամի ու գիշեր է մութ—
Բոլորը հիմա պառկել են հողին՝
Մերկ... գետնի վրա... առանց... անկողին...
Ու տիրեց սրտիս անհույս մի հուզում,
Կյանքին հավատալ ես չէի ուզում։
Ինչե՞ր չէի տա ես այն վայրկյանին,
Թե երազ դառնար արթնացումը իմ...
Եվ ահա հանկարծ վայրկյանին այդ մութ
Վառվեց իմ սրտում մի կրակ աղոտ.
Մի միտք սկսեց իմ սիրտը հուզել—
Եվ սկսեցի ես ինձ համոզել.
«Մի՞թե չգիտես, ասացի ես ինձ,—
Որ չի տարբերվում կյանքը երազից։
Միրաժ է կյանքը, երազ ու տեսիլ—
Քո այդ երազում դու կյա՛նքն ես տեսել։
Կյանքը աշխարհում մի երազ է հենց,
Օ, ցնդած պոետ Եղիշե Չարենց...»։

# 1918

## ՀԱՏՎԱԾ

...Օրերը այստեղ են բերել
Եվ ես
Այստեղից
Անցնում եմ՝ տարտամ ու երեր։

Նորից
Քայլերս դարձել են տարտամ։
Նորի՞ց ծանրացել է
Սրտիս մեջ թախիծը
Անկամ։

Գնում եմ,
Գնում եմ—
Նորից.
Գիտեմ, որ անցնում է տարին։
Գիտեմ, որ
Նորից ու նորից
Ոտքերս առել են քարի՛...

Ու շուրջս խավար է։
Ու շուրջս մշուշ է
Ու մահ։
Գիշեր է — ու վարը
Հիմա
Խարխուլ, խուլ ծփում է
Խոնավ
Խորխորատը
Հնի.
Թափվում է, թափվում է
Արյան պես կարմիր մի
Գինի...

Հեյ ո՞ւր եմ հիմա ես—
Ես ո՞ւր եմ—
Ես ո՞ւր եմ
Հասել.
Եվ ո՞ւր է,
Երկի՛ր, ի՛մ,
Քո հուրը—
Փրփուրը—
Լույսը։

Էն ո՞վ է սրտին քո
Դրել իր
Կապարը—
Էն ո՞վ է թքել քո
Հրին.
Հե՜յ ո՞վ է կոփել կուռ,
Անդուլ այս խավարը՝
Մահե շիրմաքարը
Լռին։

Եվ ո՞վ է
Տվել քեզ
Այս խեղճ հոգնությունը,
Այս խեղճ հոգնությունը
Հիմա—
Երբ քո հոգնությունը
Քարի հոգնություն է—
Քարի՞ հոգնություն է
Ու մահ։

Իսկ է՞ն, որ թռել ես,
Հոգով
Փրփրել ես,
Սրտում քո կրել ես
Հուրե՞ր ու հուրե՞ր.
Հազա՞ր դար քո կամքը
Կոփել ու կռել ես—
Սրել ես քո կամքը
Հրե...

Իսկ է՞ն, որ սրտիս մեջ
Հազա՞ր դար կրել եմ
Քո քաղցր գալիքը լուսե.—
...Օրերը եկե՞լ են,
Օրերը հասե՞լ են,—
Ու հուրը դարձել է քո — սև...

Եվ ի՞նչը,
Էլ ինչը
Պիտի փոթորկի քո
Հին սիրտը — իմ սիրտը հիմա.
Էլ ո՞ւմ նետե՛մ ես

Անզոր իմ այս ճիչը,
Երկիր իմ, մորմոք իմ ու մահ...

Մենք, լուռ, շվարե՜լ ենք,
Լույսերս
Մարել ենք—
Հույսերս էն ո՞ւմ ենք տվել...
Եվ ո՞վ մեզ,
Էլ ո՞վ մեզ,
Էն ո՞վ պիտի տա—
Երկի՛ր իմ, թռիչք ու թևեր...

# ՍՈՄԱ

## I

*Որպես քուրմը Գանգեսի,*
*Կարոտակեզ, սիրակեզ—*
*Կյանքս տվե՛լ եմ լույսիդ*
*Եվ երգում եմ քեզ։*
*Քե՛զ եմ երգում այս կարմիր*
*Աշխարհում հիմա,—*
*Քե՛զ եմ երգում, քա՛ղցր քույր,*
*Խելագա՛ր Սոմա՛։*

## II

*Դարեր շարունակ, անվերջ, անդադրում,*
*Ու սիրտս — գարուն,*
*Կյանքս երգ շինած՝ քե՛զ էի փնտրում*
*Այս չար աշխարհում։*

*Ու չէի գտնում, Սո՛մա, ո՛չ մի տեղ*
*Քո դեմքը հրե,—*
*Բայց ես գիտեի, որ մեռնում է նա,*
*Ով որ քեզ սիրե։*

Ու սիրտս տված մահի անուրջին,—
Մա՛հ էի տենչում,—
Բայց տեսա հանկարծ քո դեմքը վերջին
Այս աղջամուղջում։

Քո դեմքը տեսա, որպես սրբազան
Մի զոհաբերում.
Քո դեմքը տեսա աշխարհասասան
Այս հրդեհներում։

Եվ քեզնով հարբած՝ կանչեցի՛ նրանց
Հրդեհի պարին,—
Եվ կյանքս տվի, պարզ ու սրտաբաց,
Վառվող աշխարհին...

## III

Սո՛մա, ես գիտեմ՝ մի աղջիկ ես դու,
Երկնային մի քույր,
Որ տալիս է մեր սուրբ ծաղիկներին
Թույն, թախիծ ու բույր։

Երկնքից իջած քո ցո՛ղն է սերում
Բույսերը բոլոր.
Քո՛ւյր, պարում ես դու մեր սուրբ բույսերում
Քաղցր ու ահավոր։

Մենք այդ բույսերից խմիչք ենք շինում,
Գինի հրակեզ,
Եվ այդ սրբազան խմիչքով հարբած—
Ցանկանում ենք քեզ։

Վառվում ես, Սո՛մա, մեր երակներում
Դու, որպես գինի,—
Եվ քեզնով հարբած ուզում ենք մենք էլ,
Որ այս աշխարհում քո կամքը լինի...

## IV

Սո՛մա, օ, Սո՛մա, սրբազան խմիչք,
Սրբազան դու սեր,
Ոգեորության դու քա՜ղցր գինի,
Երկունքի գիշե՛ր։

Արշալույսների սրբազան արգանդ,
Ոգու Կաթն Ծիր.
Արևից առաջ դո՛ւ երկնից անցար,
Ոսկի փռեցիր։

Օ, Սրբազան հա՛րս դու ազատության,
Դու — ազատությո՜ւն,
Դու — վերջին ցնորք վերջի՛ն քաղցրության,
Դու — ոգու խնդում։

Դո՛ւ, որ սրտերում փրփրում ես վառ,
Հոսում ես արագ,
Ու փրփուր-փրփուր եփվելով սրտում
Վառվում ես հանկարծ, դառնում ես կրակ։—

Սո՛մա, օ, Սո՛մա, օրհնվի՜ թող այն
Վայրկյանը կարմիր աշխարհում այս չար,
Երբ մարդու սրտում առաջին անգամ
Հրի փոխվեցիր ու Ա՛գնի դարձար...

Ու հրդե՛հ դարձար, ու կրակ, ու հուր,
Սրտից ծփալով — անցար աշխարհին,
Եվ կյանքը այս չար, այս կյանքը տխուր
Հանձնեցիր հրին։

Ծփում ես հիմա մարդկանց սրտերում.
Ու ողջ աշխարհում հրդեհ ես վառել.
Քո՛ւյր, դո՛ւ ես միայն թխպոտ օրերում՝
Մեզ մխիթարել...

Վառե՛լ ենք հիմա աշխարհը նորից,
Ուխտի ենք եկել խենթ ու խելագար.
Օրհնվի՛ թող քո անունը նորից,
Որ հուր դարձրեց մեր սրտերը քար։
Հուրըդ մեր սրտում թող սուրբ փրփրի.
Խմե՛լ ենք արդեն, ելել ենք պարի,
Խառնել ենք իրար հիմա կյանք ու մահ.
Բոցնկվի՛ր կրկին ու կրկին անգամ,
Վառվի՛ր մեր սրտում, ծփա՝ արնաքամ,
Խելագա՛ր. Սո՛մա...

## V

Քո՛ւյր, քո գինին մեր սրտերում
Մխացել է դա՛ր ու դարե՛ր.
Քո՛ւյր, քո գինին մեր սրտերում
Քանի՞ ոսկի ջահ է վառել...
Քանի՞ ոսկի ջահ է վառել
Երկրի մուժում,
Քանի՞ ոսկի ջահ է վառել
Կյանքի փոշում։
Դա՛ր ու դարեր մեր սրտերում

Վառվել է վառ,
Բայց հրդեհվել չի կամեցել
Աշխարհը քար։

Ո՞վ չի տեսել, երբ իջնում է թանձր գիշեր—
Շիրիմներից դուրս են թռչում ոսկի լույսեր։
Փոշիացող ոսկորներից լույս է ծորում.
Գինի՛դ է այն, որ չի վառվել մարդու օրում։
Գինի՛դ է այն, որ զուր հուզվել, բայց չի՛ վառել՝
Գինի՛դ է այն, որ մարդ իր հետ վա՛ր է տարել.

Ու գիշերի թանձր մթում—
Հրե մի սուր—
Դուրս է թռչում գերեզմանից՝
Վառվում է զուր...
Սո՛մա, գինիդ, որով հարբել,
Խենթ ենք հիմա —
Դա՞ր ու դարե՞ր ավել է մեզ
Երկունք ու մահ.
Մա՛հ է ավել ու գերեզման,
Հող ու անհուն—
Որ դուրս թռչի, ազատ վառվի—
Գերեզմանում...
Ու չէր վառվում դա՞ր ու դարեր
Աշխարհը քար.
Հիմա վառվեց... Խե՞նթ ենք մենք էլ
Ու խելագար։—

Գա՞ր ենք բռնել խելագար,
Հրդեհում ենք ու վառում—
Այն ամենը, ի՛նչ որ կար
Հազարամյա աշխարհում։

Ու արյունը մեր՝ խառնըված հրին՝
Վառվում է ագահ,—
Ու լույս է տալիս վառվող աշխարհին
Դեմքդ հեռակա։

## VI

Ու դառնում է մեր շուրջպարը արագ,
Եվ մեր շուրջպարում — հրդեհի պարում
Հեքիա՛թ է կյանքը, ու մարդը — կրակ։

Հրթի՛ռ-հրթի՛ռ վեր են թռչում
Կյանքերը մեր կարևեր,
Ու վառվում է աղջամուղջում
Ողջակիզվող սիրտը մեր։

Ամբոխները զրահապատ
Ծափ են զարկում ու պարում,
Ջա՛հ է դարձել ամեն մի մարդ
Կրակապատ աշխարհում։

Ու պար բռնած ու խելագար
Ե՛րգ ենք ասում կրակին —
Ու վառվում է աշխարհը քար
Մրրիկներում կրակի։

Կիրակի է կյանքն հիմա —
Ջահազարդվա՛ծ, կրակուն—
Ու պարում են կյանք ու մահ,
Սո՛մա, քո սուրբ կրակում...

## VII

Հե՜յ, հեռավոր ընկերներ ու եղբայրներ,—
Դուք չե՞ք լսում. ձե՛զ ենք կանչում,—
Զվարթ ու սեգ,
Եկե՛ք, մտե՛ք շուրջպարը մեր—
Եկե՜ք, եկե՜ք։

Օ, կո՜ւյր է նա, ով չի տեսնում
Երկինք հասած կրակը թեժ.
Եկե՛ք, եկե՛ք, ով սիրտ ունի
Ողջակիզվող ու հրակեզ։
Ով որ եկավ — պետք է իր հետ
Ողջակիզվող մի սիրտ բերի—
Եկե՛ք. հսկա պարը մտեք
Աշխարհային հրդեհների։

Ու ծավալվի՛ թող
Աշխարհովը մեկ
Հրդեհը մաքրող,
Բոցը հրաշեկ։

Կյանքը հնամյա,
Որ մխում է զուր—
Թող մոխի՛ր դառնա
Ու անցնի իզուր։

Հո՛ւրը թող մնա,
Հրդեհը հոգու,
Որ հրաշք դառնա
Սո՛մա, խոսքը քո։

## VIII

Ու գալիս են անվե՜րջ, անվե՜րջ
Ամբոխները ահագին,
Որ կյանքը հին ու սնամեջ
Ողջակիզեն կրակին։

Ու հուրն ընկած, անդարձ, անել,
Այրվում է կյանքը քար—
Ու հրդեհում պար են բռնել
Ամբոխները խելագար։

Ու արյունը մեր, խառնըված հրին,
Վառվում է հրում՝ զո՛հ է սրբազան—
Ու ժպտում է քո դեմքը աշխարհին
Այս հրդեհներում աշխարհասասան...

## IX

...Թվում է հիմա կյանքը իմ հոգում
Մի ոսկի տեսիլ.
Ինչ լա՜վ է, Սո՛մա, որ կյանքի հոգուն
Հիմա՛ եմ հասել.
Ինչ լա՜վ է, Սո՛մա, որ քո կրակում
Վառվում եմ ես էլ...

Կվառվեմ հիմա, որպես զոհ կամքիդ
Ու զոհաբերում,
Եվ եթե մարի հրդեհը այս մեծ,
Որ չունի մարում—
Դու էլի՛ հազար հրդեհ կվառես
Այս չար աշխարհում...

*Սո՛մա, սերը քո թույն է ու գինի,*
*Բայց քա՛ղցր է այնքան.*
*Սո՛մա, կաս դու միշտ, բայց անցնում եմ ես*
*Ու վաղը չկամ.*
*Սո՛մա, աշխարհում թող կամքդ լինի*
*Տիեզերական։—*

*Կյանքս կմարի՝ հին, չնչին մի կայծ*
*Քո ոսկի հրում—*
*Բայց վառվի՛ պիտի սիրտս մոխրացած*
*Քո բոլո՛ր գալիք արշալույսներում...*

# ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐՎԱԾ

## I

Հեռո՜ւ, մոտիկ ընկերներին,— աշխարհներին,
արևներին,—
Նրանման հոգիներին։—
Բոլո՜ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ,—
Բոլո՜ր նրանց հոգիներին արևավառ։—
Կյանքի՜, մահի՜ այս ամենի մղջամուղջում՝
Ողջակիզվող հոգիներին — ողջո՜ւյն, ողջո՜ւյն։—

## II

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն։
Արևը, բորբ՝ մայր էր մտնում արևմուտքում։
Դաշտի վրա փռվել էր մուժ արյունամած՝
Թույն էր կարծես՝ բորբ արևի սրտից քամած։
Արևը, թեժ՝ մայր էր մտնում արևմուտքում—
Ու արյուն էր դաշտի վրա, թո՛ւյն էր թքում։
Հորիզոնում վառել էր մի կարմիր քուրա—
Ու արնավառ փայլ էր փռում դաշտի վրա։
Ու արտերը, ալեծածան, վառվել էին
Արեգակի կարմիր փայլով իրիկնային։—
Դաշտը, անծայր ու անսահման, լայնատարած՝
Հրակարմիր տարածվել էր նրանց առաջ։—
Ծով էր կարծես, որ սկիզբ ու սահման չունի—
Ծով էր կարծես՝ մշուշի մեջ իրիկունի։—

## III

Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված՝
Այդ հին դաշտում կռվում էին ամբոխները խելագարված։
Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու մոտ՝
Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ։
Ով քաղաքից էր հեռացել — նա թողել էր մշուշը ծեր,—
Մշուշը, որ կյանքի վրա մխաշաղախ ամպ էր դարձել։
Ով եկել էր գյուղից հեռու — նա թողել էր հողը խոնավ,
Որի վրա կյանքը հլու ո՛չ մի ոսկի հասկ չծնավ։
Ով եկել էր ստեպներից, նա թողել էր անծայրածիր
Լայնությունը հորիզոնի, որ իր համար բանտ էր դարձել։
Ով քաղաքից էր հեռացել, ուր մառախուղ էր անորոշ՝
Նա բերել էր թոքախտավոր սիրտը, որպես կարմիր դրոշ,—
Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր մութը գյուղի,
Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի։
Ով եկել էր ստեպներից, ուր ապրում էր որպես գերի —
Բերել էր իր լուրթ աչքերում լայնությունը ստեպների...
Ըմբոստացած, խելագարված, չտանելով հին կյանքը էլ՝
Անծիր դաշտում այդ հավաքված՝ նրանք կռվի էին ելել։

## IV

Մայր էր մտնում իրիկնային արևը՝ թեժ լույսով վառված։—
Ու երգելով կռվում էին ամբոխները խելագարված։—
Դաշտն էր գեմը՝ փռված էր նա շառագունված ու արևոտ,—
Ու հեռվում, ճամփի վրա հսկա քաղաքն էր երևում։—
Ծո՛ւյլ նազանքով, իրիկնային արևի տակ անփույթ փռված՝
Պսպղում էր քաղաքը հին՝ հազարերանգ մի զանգըրված։
Հեռո՛ւ, հեռո՛ւ, անծայր ու լայն, տարածվել էր քաղաքը հին—
Լողանում էր կարծես մարմանդ մշուշի մեջ իրիկնային։
Հաղթ շենքերը, բարձր ցցված, կարծես կախված կարմիր օդում՝
Հետըզհետե մթնում էին, անգունանում ու աղոտում։
Հեռու հրով միայն վառված պատուհանները ապակի
Փայլում էին արյունամած վերջին հրին արեգակի.
Արևի դեմ փայլում էին հրաբոսոր՝
Բոընկվել էր նրանց սրտում տագնապը սուր...
Եվ երկընքի սիրտը մխված բևեռների պես արնաքամ՝
Փայլում էին արյունամած ծխնելույզներն հսկայական։
Ծուխ չէր ելնում նրանց փողից՝ չէին փնչում երկինքն ի վեր.
Չէր կարծրանում նրանց ծուխից իրիկնային երկինքը էլ։—
Լոկ մշուշը իրիկնային թանձրանում էր հետզհետե—
Ու մշուշում կորչում էին ծխնելույզները երկաթե։—

## V

Իսկ քաղաքից դեպի հարավ՝ անհատեսիլ ու
հաղթական՝
Երևում էր երկաթուղու կայարանը հսկայական։
Լսվում էր մերթ շոգեկառքի սուլոցը սուր հեռու
մուժում—
Մորթում էին կարծես այնտեղ խելագարված
մի անասուն...
Ծչում էր սուր, հուսակտուր, ու հուսահատ
ձայնը նրա,
Որպես անդարձ մահի մի լուր տարածվում էր
դաշտի վրա։—
Ցրված էր նա, կայարանը, հսկա ու հաղթ,
նրանց առաջ։—
Ու հանգույցից կայարանի, դաշտովը մեկ
լայնատարած՝
Դեպի հյուսիս, դեպի հարավ, ու արևմուտք,
ու արևելք—
Ուղիները երկաթագիծ ձգվել էին ամենուրեք։—
Երակների պես երկաթե քաղաքամոտ կայարանից
Հեռո՜ւ, հեռո՜ւ ձգվել էին ուղիները երկաթագիծ։
Երակների պես երկաթե՝ ամուր գրկած
կուրծքը հողի՝
Սեղմըվելով հետզհետե՝ փախչում էին
գաղտագողի...
Ու ցցված էր ուղիների խաչակնքման սեղմ
հանգույցում—
Կայարանը, որպես մի հարց, որպես հսկա
մի քարացում։
Ուղիների ճամփամիջում հանգույց էր նա
կարծես կապված—

Ու անդրիջում կռվում էին ամբոխները խելակարված։
Կարծես նետված մի հաղթ ձեռքով՝ աշխարհային կամքին հլու՝
Գնո՛ւմ էին կռվո՛վ, երգո՛վ կայարանը գրավելու—

## VI

Կռվում էին։ Սուրում էր մի իրիկնային մարմանդ քամի։
Դեմը քաղաքն էր տարածվել՝ հազարամյա մի թշնամի։
Սֆինքսի պես հսկայական, շեկ ծծերը դրած հողին՝
Նա կտրել էր արևակա՛մ ամբոխների կարմիր ուղին։—
Ու կայարանը՝ հաղթանդամ, իրիկնային կարմիր մուժում,
Հաղթ նստել էր նրա առաջ, որպես նրան հսկող մի շուն։
Հաղթ նստել էր նրա առաջ ու տիրուհու կամքին գերի՝
Երթն էր հսկում գետնատարած, երկաթագիծ ուղիների։
Ու գծերի մոտ երկաթե, դեպի հյուսիս, դեպի առաջ՝
Ձգվել էին ալիքաձև խրամատներ գետնատարած։
Թշնամին էր պահվել նրանց ալիքաձև գետնափորում
Ու մատներով արյունոտած դեմը փռված դաշտն էր փորում։
Մտել էր չերմ կուրծքը հողի՛, հողի սրտում դարան մտած՝
Կրակում էր գաղտագողի, նենգ ձեռքերով արյունոտած։

Կռվում էին՝ մոտենալով, մոտենալով հետզհետե։
Պայթում էին գռընգալով հրանոթները Երկաթե։ —
Ե՛րգ էր կարծես կռիվը այդ, որ դնգում էր մայրամուտում.
Նայես՝ թռավ մի հրանոթ ու թունդ պայթեց խրամատում...

## VII

Կռվում էին, ու կռվելով անցնում էին նրանք առաջ։
Ու դաշտերում իրիկնային մա՜հն էր քրքջում համատարած։
Երգում էր նա՝ երգը խառնած հրանոթի գռնգոցին, —
Անցնում էին նրանք առաջ ու կրակված կռվում էին։
Ե՛րգ էր սիրտը ամեն մեկի, երգ էր հայացքը կրակոտ.
Վառվում էր սիրտը ամենքի, որպես կարմիր մի առավոտ։
Ե՛րգ էր կարծես արևը հին՝ իրիկնային լույսով վառված —
Եվ երգելով կռվում էին ամբոխները խելագարված...

## VIII

Եվ երգում էր մեկը՝ հզոր, հուժկու ձայնով անհեղագոչ,
Գո՛վքն էր երգում կռվի եկած, արիացած իր ընկերոջ։ —
Որպես բազե՝ երգը նրա սլանում էր հեռո՜ւ, հեռո՜ւ —
Եվ երգելով կռվում էր նա՝ լուսաժպիտ ու անհարկու։
Երգում էր նա։ Մայր էր մտնում արևը հին՝ կարմիր քուրա։

Եվ դաշտերում իրիկնային — զանգ էր կարծես ձայնը նրա։
Զա՜նգ էր կարծես, զանգում էր գիլ, որ ողջ աշխարհը իմանա—
Բորբ կարոտով անծայրածիր, կրակելով երգում էր նա։—

## IX

«...Ստեպներից, անտառներից, քաղաքներից հեռու ու մոտ—
Մենք մեր սիրտն ենք բերել նորից՝ հուսավառված ու կրակոտ։
Այստեղ հիմա կռիվ է, մահ, ու աղջամուղջ է անորոշ,—
Մենք մեր սիրտն ենք պարզել հիմա — մահի հանդեպ՝ կարմիր դրոշ։
Արյունաքամ մա՛յր է մտնում հազարամյա արևը հին.
Արյունավառ ժպտում է մեզ այս աշխարհը իրիկնային...
Ու խնդասիրտ կռվում ենք մենք, ե՜րգ ենք ասում կռվում հիմի.
Կուրծք է տվել աշխարհը ողջ՝ հազարամյա մի թշնամի...
Բայց անվհատ կռվում ենք մենք, ու մահը՝ սեգ, ժպտում է մեզ—
Շատերս, ախ, պիտի զոհենք սրտերը մեր կարոտակեզ։—
Անզո՛ք է երթը այս սեգ, ինչպես կարմիր կարոտը մեր—
Կրակեցե՛ք, կրակեցե՛ք, խելագարված իմ ընկերներ...»։

# X

Մայր էր մտնում իրիկնային արևը՝ թեժ լույսով վառված։
Ու անվհատ կռվում էին ամբոխները խելագարված։
Աչքերի մեջ՝ կարմիր մի հուր, ու սրտերում — կարմիր կրակ՝
Վերջին թափով մի ամրակուռ՝ անգայթ կռվում էին նրանք։
Խենթ երգելով, կրակելով նրանք անցնում էին առաջ —
Ու թշնամին փախուստ տվեց՝ ահաբեկված ու վտարված։ —
Մութ էր արդեն, մայր էր մտել արեգակի շողը վերջին.
Երբ գրոհով մի անվեհեր կայարանը գրավեցին...

# XI

Մութ է հիմա։ Գիշերը, խոր, իջել է վար։
Մութ է հիմա, թանձր խավար։
Երկաթուղու կայարանում, ուր ո՛չ մի լույս չկա վառված,
Խմբվել են հազարանուն ամբոխները խելագարված։ —
Գիշերի մեջ չեն երևում հաղթ կամարները երկաթե՝
Լույս չեն վառել կայարանում, որ թշնամին չնկատե։
Սպասում են՝ աչքերն հառած խավարամած հեռուներին՝
Մութը իջավ համատարած, մինչ կայարանը վերցրին։ —
Սպասում են, որ մինչև լույս գոնե մի քիչ հանգստանան

Ու առավոտ դուրս գան նորից ու քաղաքի
վրա գնան:
Աչքերն հառած թանձր մութին, սրտատրոփ,
անապաքեն՝
Սպասում են առավոտին, որ կռիվը շարունակեն։
Մի քիչ առաջ, արյունաքամ, երբ դեռ դաշտում
կռվում էին—
Մո՞տ էր թվում քաղաքն այնքան երկաթուղու
կայարանին...
Եկան իրենք, կռվով, երգով գրավեցին
կայանը մեծ —
Իսկ թշնամին փախուստ տվեց ու քաղաքում
պատսպարվեց։
Սպասում են իրենք հիմա, որ մինչև լույս
հանգստանան—
Ու առավոտ դուրս գան նորից և քաղաքի վրա գնան։

## XII

Ու մթի մեջ հազարամյա, գիշերի մեջ խորը, անհուն՝
Խռնվել են նրանք ահա երկաթուղու կայարանում։
Դաշտն է դեմը, խավարակուռ ձգված է նա։
Չկա մի ձայն, չկա քամի, մութ է հիմա։
Դաշտն է դեմը՝ անծիր, անծայր մի զանգված
խավարամութ,
Ուր նստել է անաչք, անլույս խորհրդավոր
կասկածը մութ։
Շնթռկել է, որպես մի շուն, ու խավարն է
հսկում հիմի,—
Շնթռկել է թանձր մուժում, որպես անտես
մի թշնամի։

Մութ նստել է կասկածը հին ու աչքերով խավարամած
Նայում է նա կայարանին, որ կանգնած է իրա դիմաց։
Շարժվում է մութը կարծես ու խավարով իր աչքերի—
Նայում է նա լուրթ աչքերին խելագարված ամբոխների։—
Ու տագնապով անլռելի, հայացքներով անթարթ լարված՝
Նայում են մութ հեռուներին ամբոխները խելագարված։
Լուրթ աչքերով խորը, տխուր — մո՛ւթն են դիտում նրանք անհուն—
Ու դժժում է աղմուկը խուլ գիշերային կայարանում...

## XIII

Հոծ բանակով, հսկայական կայարանի դեմ խռնված՝
Լուրթ աչքերով արևակամ — դաշտն են դիտում խավարամած։
Մո՛ւթ է դեմը, ու խավարում, որ բացվել է, որպես անդունդ՝
Երևում է հեռո՜ւ-հեռո՜ւն կարմիր լույսով վառվող մի գունդ։
Աչքերի դեմ մթակալված, հայացքների դեմ ակընդետ—
Հեռու մթում լույսն այդ վառված գո՛ւնդ է թվում, կարմիր մի կետ։

Գիշերի մեջ — կարմի՜ր, կարմի՜ր, տագնապալից վառվում է նա՝
Գիշերի մեջ վառել են, որ զորքը պատրաստ, արթուն մնա։
Անծայրածիր մթում հեռվի կարծես կարմիր գլուխ է շան—
Վառել են այն, որպես կոչի ու տագնապի ազդանշան։
— Քաղաքն է այն հազարամյա, ուր տագնապ ու տենդ կա հիմի։
Պահվել է նա, որպես վախից խելագարված մի թշնամի։
Ու կրակը այդ կարմրակեզ — ահանշան ու վիթխարի—
Մի արնագույն կետ է կարծես ուղեղի մեջ խելագարի։
Բռնկվել է հույսով հետին, հոգևարքի տենդով վառված—
Ու նայում են կարմիր կետին ամբոխները խելագարված.

## XIV

Գիշերի դեմ խավարամած, աչքերն հառած կարմիր կետին՝
Ամբոխները խելագարված սպասում են առավոտին։
Ու վառվում է խավարակուռ հոգիներում նրանց անգայթ
Կետը այդ մութ, որպես հեռու, հրաբոսոր մի ճառագայթ։
Սուր մխվել է նրանց սրտում, որպես մի թեժ, կարմիր բեկոր—

Թույն է լցնում, ու բորբոքում, ու երազներ աշխարհավեր…
Արթնեցնում է նրանց սրտում մորմոքը հին, հազարամյա —
Տենդ է սփռում ու խլրտում նրանց անդայթ սրտում հիմա.
Լուրթ աչքերում փայլում է վառ արյունամած մի ցանկություն —
Ու աչքերը միլիոնավոր թո՛ւյն են թքում, արյուն ու թույն.
Բարձրանում է նրանց սրտից տարիների մաղձը աղի —
Ու վառվում է լուրթ աչքերում՝ արյունալից ու կատաղի.
Ու աչքերը արյունամած անթարթ հառած կարմիր կետին՝
Ամբոխները խելագարված սպասում են առավոտին.

## XV

…Գիշերի՛ դեմ գիշեր է մութ խավարամած նրանց հոգին,
Որ կարոտով մի կրակոտ սպասում է առավոտին.
Խավար է մեծ սիրտը նոցա, բայց խավարում անծայրածիր—
Երկինքնե՞ր կան կապուտաչյա, հորիզոննե՞ր՝ անծա՞յր, անծի՞ր.
Ու աչքերում նրանց կապույտ, ուր իջել է գիշերը մութ —
Հազա՞ր.բողբոջ կա կրակոտ, ու արշալույս, ու առավոտ.

Նրանց ձգված մկաններում ո՛ւժն է նստել
խոնավ հողի —
Եթե ուզեն՝ արևներին նոր տե՛մպ կըտան ու
նոր ուղի...
Եթե ուզեն՝ արեգակնե՞ր կշպրտեն երկինքն ի վեր.
Եթե ուզեն՝ վա՛ր կըբերեն երկինքներից
արեգակներ...
Եթե ուզեն՝ կամքով արի ու աշխարհի հրով
վառված...
Ինչե՞ր միայն չեն կատարի ամբոխները
խելագարված...

## XVI

Ու հոսում է գիշերը մութ, մոտենում է առավոտին։
Հոսում է պաղ ու անօգուտ սպասումի ժամը
հետին։
Դաշտից ահա սուրում է զով, մարմանդ քամին
առավոտի—
Ու վառվում է վերջին լույսով կրակը այն
կարմիր կետի։
Նոսրանում է խավարն ահա, գունատվում է
հետզհետե—
Ճեղքում է մութն արևելքում հսկայական, հրե մի թև։
Ու սուրում է հեռուներից առավոտվա
կիսամթում—
Մարմա՛նդ, մարմա՛նդ, բուրումնալից,
գարնանային մի թարմություն։
Շարժըվում է խավարը թեն ու հեռևում խավարամած
Երևում է քաղաքն արդեն՝ մութ, անորոշ մի
դանգըրված։

Հաղթ շենքերի պատերը հաղթ որոշվում են հետզհետե,
Երևում են ահա հպարտ ծխնելույզները երկաթե…
Ու բորբ սրտում ամբոխների թո՛նդ է առնում կարոտը վառ,
Երկինքներում լուրթ աչքերի վառվում է տենդը հոգևոր…
Բո՛րբ աչքերով նայում են մեծ, խավարակուռ զանգըվածին—
Ու վառվում է սիրտը նրանց, որպես հրդեհ արեգնածին…
—Պիտի երթան առա՜ջ հիմա, պիտի առնեն քաղաքը մեծ,
Պիտի թափե՛ն նրա վրա հազարամյա մաղձը իրենց.
Քանդե՜ն պիտի ու ավերեն, տեղը փոշի՜ պիտի փռեն—
Հազարամյա քաղաքը այդ քանդե՜ն պիտի ու ավերեն.—
Այրե՜ն պիտի, խելագարված պիտի պարե՜ն հրդեհներում,
Ու կարմրավառ-կրակ ու կայծ պիտի փռեն երկրի հեռուն.—
Ու մնացած մոխիրը ձիգ պիտի այրե՜ն նրանք նորից,
Որ կյանքը հի՛ն, որպես փյունիկ, չբարձրանա՜ մոխիրներից…
Քամո՜ւն տալով մոխիրը այն, որ տանի ու ես չբերի՛
Դեպի հեռո՜ւն պիտի երթան դեռ չծնված արևների…

## XVII

...Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում հրաշուշան —
Կարմիր վառվեց արևը բորբ, որպես կռվի ազդանշան,
Երբ բռնկվեց արևելքում արևը՝ նոր լույսով վառված —
Դո՞ւրս նետվեցին կայարանից ամբոխները խելագարված...
Դեմը դաշտն էր անծայրածիր, ուր մշուշ էր արևագույն,
Ու մշուշում շոգիացող, աղավնոտի մարմանդ միգում,
Կրկեսի պես մի վիթխարի, խայտաբղետ, խայտանկար —
Եզերքի մոտ ճանապարհի երևում էր քաղաքը քար...
Աչքերն հառած հեռո՞ւ-հեռո՞ւն կարմիր վառվող արեգակին՝
Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին.
Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
Դեպի Արև՞ն էին գնում ամբոխները խելագարված...

. . . . . .
. . . . . .

# 1920

•

## ՆԱՅԻՐԻ ԵՐԿՐԻՑ

*Եկել — երկաթե երգ եմ ձեզ ասում*
*Ես — կարմիր պոետ — Եղիշե Չարենց։*
*Ծ՛ս եմ՝ Նայիրցի մի հսկա պոետ—*
*Եկել եմ ահա դարերի հեռու*
*Ու հին մշուշից—*
*Մշուշի միջից անթիվ դարերի.*
*Եկել եմ ահա ու կանգնել եմ, սեգ,*
*Եվ երգ եմ ասում հիմա բոլորիդ—*
*Երկաթե մի երգ։*

*Ոտքերս, ամուր, հողի մեջ մխած,*
*Գլուխս աստղերում,*
*Անսասան, հաստատ կանգնած հողմային*
*Օրերի հրում —*
*Իմ հավերժատես, պայծառ աչքերով*
*Նայում եմ հեռուն։*

Դեմս — հողմակոծ աշխարհն է անծայր,
Հեռո՜ւ ու հեռո՜ւ,—
Շաչում է, վնգում, ահեղ ու պայծառ—
Բոսո՜ր հողմերում։
Գլխիս վրայով
Թռչում են, շաչում օրերը արագ,
Հողմերի նման հավիտենության
Ծեծում են կուրծքս վիթխարի թափով,—
Ծեծում են կուրծքս, շաչում ու իրենց
Երկաթ թևերով թռչում են հեռու—
Ու հեռուներում ոռնում են անտես,
Ոհմակների պես քաղցած գայլերի,
Որ գազազել ու շշմել են ասես
Հողմերում հրի։

Ու կանգնել եմ ես՝
Ոտքերս ամուր հողի մեջ մխած
Ու գլուխս տո՜թ խառնարաններում
Անցած ու գալիք անթի՜վ օրերի։—

Ու կանգնել եմ ես
Լեռների վրա իմ ավեր երկրի,
Կանգնել եմ հաստատ ու երգ եմ ասում
Խնդասիրտ, արի,
Եվ նետում եմ իմ երգը հողմաձայն
Ժողովուրդներին բոլո՜ր կողմերի—
Բոլո՜ր կողմերում տառապող մարդուն։
Եվ ասում եմ ես.
— Եկե՜լ եմ պահ.
Եկե՜լ, հասել եմ դարերի մուժից,
Անբոց մշուշից հեռու դարերի —
Եվ բերել եմ ձեզ, կարմիր ձեր երթին,
Սի՛րտը Նաիրի…

Բերե՛լ եմ կարմիր սիրտը Նայի՛րի
Ձեր կարմիր Հրին — կարմիր ողջակեզ.
Եվ տեսել եմ ես
Ժողովուրդներին բոլո՛ր կողմերի,
Բոլո՛ր կողմերում տառապող մարդու.
— Լսե՜ք, Հե՜յ, լսե՜ք,—
Բոլոր կողմերում տառապող՝ մարդիկ,
Բանվորներ արի — բոլոր կողմերի,
Եվ գյուղացիներ, զինվորներ բոլոր
Ռազմադաշտերից տուն դարձող արդեն.—
Լսե՛ք, Հե՜յ, լսե՛ք.
Դուք, որ Հաղթակամ
Ելե՜լ եք արդեն ու կռվով ըմբոստ,
Ճաչող, շառաչող օրերի միջով
Գնում եք դեպի Կարմիր Ապագան—
Լսե՜ք, Հե՜յ, լսե՜ք, իմ ողջույնը սեզ
Ու եղբայրական...

Նայիրի երկրից — իմ ողջույնը ձեզ.
Ձեր կարմիր Հրին — Նայիրի կարմիր
Սիրտը — ողջակեզ։

Ո՞վ գիտե արդյոք՝
Բերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու ձեր մեծ ու հզոր երգին
Մի երգ — ավելի՛ ըմբոստ ու արի,
Քան իմ երգը մեծ — երգը Նայիրի...

Ո՞վ գիտե արդյոք՝
Բերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու հզոր, բոսոր ձեր սրտին
Մի սիրտ—ավելի՛ ըմբոստ ու արի,
Քան իմ սիրտը թեժ — սիրտը Նայիրի։

Եվ ո՞վ, ո՞վ կասի՝
Նետե՞լ է արդյոք մեկը աշխարհում
Այսօրվա կարմի՛ր, կարմիր ձեր՝ երթին
Ողջույն — ավելի՛ առնական, արի,
Քան ողջույնը քո, երկիր արնաքամ,
Կարմի՛ր Նայիրի…

. . . . . . . .

Ծաղկի պես կարմիր, հրասիրտ, զվարթ,
Բացվել է այսօր սիրտս Նայիրյան
Աշխարհի սրտում—
Թեժ, կարմիր սրտում՝ վառվող աշխարհի։
Իմ հազա՛ր անգամ ու հազա՛ր սրով
Արնոտած, խոցված սիրտը Նայիրյան
Բացվել է այսօր աշխարհի սրտում.
Հուզում է հոգիս անհուն մի խնդում,
Խնդում մի հրե—
Եվ երգում եմ ես, ահե՛ղ ու պայծառ,
Քո էն երգը մեծ, տիեզերական,
Երկի՛ր Նայիրի…
Երգում եմ հիմա քո երգը էն մեծ,
Որ սրտիս տվեց տառապանքը քո,
Քո աշխատունակ հաղթ ժողովրդի
Տառապանքը մեծ։

Ե՛ս — ե՛ս եմ նորից.—
Դարերից եկած անհո՞ւն մի պոետ—
Եղիշե Չարենց—
Նայիրի երկի՛ր, քո երգիչը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու զավակը մեծ…

Ե՛ս — ե՛ս եմ նորից.—
Ոսկի երակը հնամյա ցեղիս,
Իմ ջլաբազուկ, հաղթ ժողովրդի
Օղակը վերջին,
Տվել եմ սիրտս գալիք օրերի
Երկաթե երգին,
Կապել եմ կյանքս Գալիքի հետ վառ—
Եվ կրում եմ իմ մեծ, հսկա սրտում—
Մի երկաթակուռ, նո՞ր, հզո՞ր աշխարհ։

Ու կանգնել եմ ես, հզո՛ր ու հաստատ,
Լեռների վրա քո հավերժաձյուն —
Կանգնել եմ, պայծառ, ու շուրջս հիմա
Գալիքի կարմիր թևերն են շաչում—
Եվ կարծրանում ու պնդվում է հոգիս
Նրանց շառաչում։

Ու հպա՞րտ եմ ես, հպա՞րտ է ու խենթ
Քո կարմիր հրով լցված իմ հոգին.
Հպարտ եմ, որ ես — անհուն մի պոետ.
Ձայնով խնդագին—
Խառնում եմ այս նո՞ր, հզոր ե՞րգը քո—
Բոլորի՞ երգին...

## ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ

Լցված է անհուն իմ հոգին հիմա
Շփոթ երգերով ու աղմուկներով.
Լցված է սիրտը իմ՝ էլեկտրական
Բորբ հոսանքներով։

Ռադիոկայան է իմ հոգին հիմա
Ամբո՛ղջ աշխարհի ու մարդկանց հանդեպ.
Ու բա՛րձր է, բա՜րձր է կայանն իմ հոգու՝
Մասիսի նման բա՛րձր է ու հաստատ —
Հզո՛ր, անհարկո՛ւ։

Օրերում այս վառ, հողմավար, շփոթ—
Հեռու ու մոտիկ միլիոն սրտերի
Ե՜րգն է վիճակվել ինձ երգել այսօր.
Իմ բազմամիլիոն, բյուր ընկերների
Խինդը այսօրվա ու թռիչքը մեծ—
Գալիք օրերին նետե՛լն է երգիս
Վիճակվել այսօր։

Ահա՛ թե ինչո՛ւ է երգս հաղթական,
Ահա՛ թե ինչու է իմ ձայնն այսօր
Հավերժի նման համա՜ռ ու հաստա՛տ։

Ահա՛ թե ինչու
Վիթխարահսկա, որպես Էյֆելյան
Աշտարակը մեծ,
Անցած ու գալիք դարերի շեմքին
Հզոր, բարձրաբերձ՝
Կանգնել եմ ամբողջ հասակովս մեկ
Եվ երգում եմ ես։
Եվ հոգիս հիմա՝ ռադիոկայան՝
Իր հրակարմիր ե՛րգն է ուղարկում
Հեռո՜ւ ու հեռո՜ւ,—
Բոլո՛ր սրտերին, որ ապրում են, կան
Բոլո՛ր կողմերում։

Երգում է հոգիս, հրեղեն հնչում։
Գիտեմ՝ այսօրվա իմ երգի առաջ—
Իմ հոգու կարմիր կայծերի հանդեպ—
Ռադիոկայան է ամե՛ն մի հոգի,
Ո՛ւր էլ նա լինի։—
Ամե՛ն մի հոգի, որ ապրում է, կա
Եվ կրում է իր թևերի վրա
Նո՛ւյն խորհուրդը մեծ, խորհուրդը հսկա
Օրերի այս վառ,—
Այս վառ օրերի խորհուրդը պայծառ։
Ամե՛ն մի հոգի,
Որ իր երկաթե թևերով այսօր
Ձգում է, շաչում—
Եվ փնտրում է նո՜ր հանգիստ ու օրոր
Միլիո՛ն թևերի ըմբոստ շառաչում...

Գիտե՞ք, որ հիմա
Այստեղ — Նայիրի իմ երկրում ավեր
Ու հեռու-հեռուն—

Կարմիր Մոսկվում,
Տիբեթում դեղին,
Սան-Ֆրանցիսկոյում, Լոնդոնում հսկա
Ու Սինգապուրո՛ւմ —
Բոլո՛ր վայրերում, բոլո՛ր կողմերում
Աշխարհը մի նո՜ր երգով է հղի։

Հե՜յ, հեռո՜ւ — մոտիկ
Հանքահորերում,
Գործարաններում,
Լայն ստեպներում ու անտառներում —
Բոլո՛ր վայրերում, բոլո՛ր կողմերում,
Երկաթի՛, բրոնզի՛, հողի՛ ու հանքի
Երգով օրորված իմ բյո՜ւր եղբայրներ,—
Ո՞վ ունի այսօր կամքը մեր հրե,
Ուժը մեր բոսոր
Ու վառ բախտը մեր
Տիեզերական։

Ո՞վ ունի այսօր...

Մենք ենք, որ նո՜ր ենք, հազա՜ր ենք ու բյո՛ւր։

Երկաթե հսկա մի դիսկի նման
Բյո՛ւր եղբայրների կամքը մեր արի,
Տիեզերական—
Նետե՛լ ենք արդեն թափով վիթխարի
Դեպի հողմերը գալիք օրերի,
Դեպի — Ապագան...

## ԲՐՈՆԶԵ ԹԵՎԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԳԱԼԻՔԻ

*Ճաչում է աշխարհը, զնգում է հիմա,*
*Ճաչում ու զնգում են աշխարհի վրա*
*Բրոնզե թևերը Կարմիր Գալիքի։*

*Որպես երկաթե մի մրրկահավ՝*
*Թռչում է կարմիր մեր կամքը հիմա*
*Աշխարհի հեռուն—*
*Ու շաչում է հաղթ, երկաթ թևերով*
*Հեռու ու մոտիկ ռազմադաշտերում։*

*Փողփողում է վառ արևի առաջ*
*Մեր կամքը հիմա, որպես վիթխարի*
*Մի կարմիր դրոշ,*
*Որի արնագույն, կարմրավառ փայլից*
*Հնավանդ, զազիր քաղաքները քար,*
*Ցուլերի նման վիթխարահսկա,*
*Վախից խելագար,*
*Կանգնում են հետին ոտքերի վրա,*
*Փորում են հողը ոտքերի տակի*
*Ու սարսափահար*
*Իրենց վայրենի վա՛խն են մռնչում*
*Աշխարհովը մեկ —*
*Վա՛խը վայրենի, որ հնչում է մեր*

Բոսոր սրտերում, որպես հաղթության
Ու փառքի մի երգ։

Օ՜, բառաչը այդ խելագար վախի,
Օ՜, սարսափահար ճիչը հոգևար
Ու տագնապը սուր՝
Հին, հազարամյա, քա՛ր քաղաքների
Տագնապը զաղիր...
Օ՜, սարսափը այդ հուսահատական,
Մեռնող ցուլերի բառա՛չը վերջին
Կրկեսների մեջ հսկավիթխարի,—
Օ՜, սարսափը այդ նրանց հուսահատ,
Որ մեր սրտերում, կրծքերում երկաթ
Փոխվում է կարմիր, խնդացող հրի...

Ճչում են հիմա
Թերթերը բոլոր մայթերի վրա,
Հաղթ կայանները ռադիո-գրի,
Գոց, կրահապատ գնացքներն շտապ
Ու շչակները գործարանների,
Սավառնակների թևերը շաչող,
Աղմուկը մաշվող ավտոշինների,
Թնդանոթների ամբոխները ծույլ,
Որ հիմա արնոտ ռազմադաշտերից,
Գործադուլ արած բանվորների պես
Տուն են շտապում քայլերով տարտամ,—
Ֆանտաստիկական, ահե՛ղ առօրյան
Ճչում է հիմա
Նրանց անամոք, նրանց հոգևար
Տագնապի նման հուսահատական,
Ճչում է խռպոտ իր ձայնով վերջին—
Ու հասնում է այդ ճիչը հուսահատ
Լոնդոնից — Փարիզ — Ցեյլոն — Հնդուչին...

Զգվել են ցանցեր,
Երկաթե անտես ցանցեր ու ցանցեր
Աշխարհում անծիր,—
Սրտից սիրտ հիմա, քաղաքից քաղաք —
Վառ, կարմիր ցանցեր...

Մեր կա՛մքն է այդպես հզոր շղթայել
Աշխարհը համակ,—
Մեր կամքը՝ թռչող, որպես փոթորիկ,
Ու տոկուն, համառ, որպես ժամանակ։—

Ե՛ս եմ — եղբայրս — ընկերս — օ՜, ո՛չ.
Կա՛մքը իմ, կա՛մքը քո — ու էլի՛, էլի՛
Կամքեր նույնազոր — հազար ու հազար
Ու էլի, էլի,
Ու էլի՛, էլի՛,—
Զգո՞ւմ ես՝ հոգիս, հոգիդ ու նրա—
Հեռու, անծանոթ ընկերոջ հոգին—
Նո՛ւյն արեգնական խորհրդով է լի։
Ու էլի՛, էլի՛,—
Ու էլի՛, էլի՛,—
Ամեն տեղ հիմա, բոլո՛ր կողմերում՝
Մոսկովից — Փարիզ, Լոնդոնից — Հռոմ...

Մինչև — Հնդուչին...

Թնդանոթների բառաչը վերջին։
Տանկերը արնոտ ռազմադաշտերում՝
Կետերի նման երկաթազրահ...
Գնդացիրների ծարավը ագահ,
Գործարանների շչակները լուռ...
Օրերը՝ երկաթ ու պղինձ հագած

Սավառնակների նման ումբաձիգ—
Օրերը, որ թեժ ռումբեր են նետում
Ու թռչում են—
Ո՞ւր...

Անծի՜ր դաշտերում — բանակներ կարմիր։
Քաղաքներ մեռնող ու գյուղեր անմարդ։
Օրերի միգում — տագնապ ու գրգիռ։
Ոսկի ու բռունցք, արյուն ու երկաթ։
Ու տագնապը մութ, անկուշտ ու ագահ,
Հրեշի նման դեղին, հազարաչ,—
Ու բազմամբոխ աշխարհի վրա—
Բրոնզե կարմիր թևերի շառաչ։
Ու երգը իմ նոր պիտի ավետի
Վաղը աշխարհին առաջին անգամ
Թռիչքի՛ մասին անկուշտ կարոտի
Մեր հավերժական։

Ու նրանք, որ դեռ աշխարհում չկան,
Որ դեռ նոր պիտի ապրեն աշխարհում,
Դեռ նոր պիտի գան,—
Կարո՞ղ են, թող մեր թռիչքն այսօրվա
Անձկորեն ըզգան...

Նրա՛նք, որ պիտի ապրեն աշխարհում
Կարմիր Ապագան։

Նրանք, որ դեռ նո՜ր, դեռ նո՜ր պիտի գան...

# ԽՐԳ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

## I

*Երկիրը մե՜ծ էր ու լայն։— Տափաստաններ*
*ընդարձակ,*
*Անծայրածիր հովիտներ ու ստեպներ հեռանիստ,*
*Հորիզոնից-հորիզոն ձյունե դաշտեր սպիտակ,*
*Լա՜յն երկնքի տակ փռված գյուղեր անդորր ու*
*հանգիստ։*
*Մե՜ծ էր երկիրն՝ հյուսիսի վերի ծովից մինչ հարավ.*
*Ու արևի մի ծագից մինչ մյուս ծագն արևի։*
*Նստել էր էդ ընդարձակ երկրի մեջ ցարն անիրավ*
*Ու իշխում էր սանձարձակ, որպես դաժան*
*թշնամի։*
*Խեղճ էր ապրում ժողովուրդն՝ հազարբարիք*
*երկրի էդ՝*
*Ծորտ էր, գերի, հողազուրկ՝ աշխատում էր,*
*աշխատում,*
*Բայց մնում էր անոթի ու ապրում էր անհեթեթ,*
*Անիմաստ կյանք մի դժվար, որպես լծկան անասուն։*
*Նստել էին էդ անբախտ ժողովրդի շլինքին*
*Գոռ իշխաններ զանազան, հողատերեր ամեհի.*
*Քշում էին տեղից-տեղ զուրկ, անկրակ մուժիկին,*
*Ու լռում էր մուժիկն էլ՝ աչքը ահի ու մահի։*

Էդ ընդարձակ աշխարհում, ուր հողը շատ էր այնքան,
Որ երկրի կեսը հաճախ մերկ ու խոպան էր մնում —
Հողազուրկ էր գյուղացին ու տառապում էր կարկամ,
Ուրիշի հողն էր վարում առավոտից-իրիկուն։
Լուռ տառապում էր էդ խեղճ ժողովուրդը հողազուրկ
Հացի տեղ քար էր ուտում ու մեռնում էր անօթի,
Վշտից օղի էր խմում կաբակներում բազմաղմուկ
Ու քնում էր օրն ամբողջ, որ չարթնանա ու չուտի։
Ու հավատում էր մեկ էլ, աղոթում էր աստծուն
Ժողովուրդը էդ թշվառ,— հավատում էր, որ վերից
Լույս կբացվի մի օր էլ — հող կտրվի գյուղացուն,
Եվ ժողովուրդը ազատ ու լի՝ կապրի էդ օրից։
Բայց ո՛չ աղոթքն էր փրկում ժողովուրդին էդ թշվառ,
Ոչ էլ օղին՝ դառնահամ կաբակներում աղմկուն.
Երկիրը ծով էր արյան ու կարիքը — անսպառ,
Սովն էր երկրում թափառում՝ արյունըռուշտ ու անքուն։
Հազա՛ր տարի էդ երկրում արևն ելավ արյունոտ
Ու մայր մտավ արյունոտ, որպես թրով զարկած աչք.
Երկիրը ծո՛վ էր արյան, երգը երկրում — մահվան բոթ,
Ու չէր վառվում օրերում լույս — փրկարեր մի հրաշք։
Վաղո՛ւց էր, շա՛տ էր առաջ, որ հայտնվեց մի մուժիկ,
Շուրջը խմբեց բյուրավոր ընչպարներ անօթի,
Անտուն մարդիկ հավաքեց, գործից ընկած ու բոբիկ,
Ու խմբերով նրանց խեղճ ուզեց երկիրն ազատի։

Ձայն տվեց. «— Է՜յ, ընչազուրկ, անհող մարդի՛կ,
եկե՛ք դե՛ս,
Հավաքվեցեք բյուրավոր հոսանքն ի վար էս գետի.
Հազա՜ր-հազա՜ր հավաքվեք, պիտի տանեմ
այսօր ես
Մինչև քաղաքը ցարի ձեր էս բանակն անոթի։
Պիտի Մոսկո՞վ տանեմ ձեզ... Ու քեֆ պիտի
անեք դուք,
Էնտեղ օղի պիտ խմեք՝ ինչքան կուզեք, ինչքան կա,
Պիտի նստեք մեծամեծ պալատներում մեծաշուք,
Ու ձայնը է՛ն գրկվածի պիտի գահի՜ց գրնգա...»։
Էսպես կանչեց։— Ու եկան հազարավոր, բյուրավոր,
Եկան, բոլո՛րը եկան, ով որ չուներ խա՛տա-տուն,
Եկան, բոլո՛րը եկան, հավաքվեցին նորից-նոր։
Ու բանակը ծավալվեց օվկիանի պես ծփուն։
Ինչպես անտառը խշշար, ինչպես ծովը շառաչեր,
Ինչպես մրրիկը շաչեր — բանակից էդ բազմամարդ
Ամբողջ երկիրը գնգաց ու դղրդաց ծերից-ծեր՝
Երգը գնգաց բանակի՝ հազարաձայն ու զվարթ։
Ու անտառի նման էն բանակը էդ շարժըվեց,
Հորձանք տվեց ու ծփաց հոսանքն ի վեր էն գետի.
Ու հեղեղի պես սրբեց շեն կալվածներ մեծամեծ
Ու հողերի վրա տեր նստեց մուժիկն անոթի։
Էդ քանի օրը մի քիչ զուլալ էր աչքն արևի՝
Կարծես դեղդիր էր քաշել արնոտ աչքին իրա էն.
Արևավառ ծփացին տափաստաններն հեռևի,—
Զուրկ մուժիկները ելան, որ ստեպները վարեն։
Էսպես եղավ։ Եվ հանկարծ, ինչպես հեղեղը հորդի՝
Ահեղ սուրաց վերից-վար արնախում զորքը ցարի.
Եկան, կռիվ եղավ մեծ, կռվեց բանակն անոթի,
Որ հույսը զուրկ մուժիկի անվերադարձ չմարի։
Երկա՜ր-երկա՜ր կռվեցին։— Ու ետ առան նորից էն

Քաղաքները գրաված ու հողերը խեղճերի,
Իշխանների կիսավեր պալատները հոյաշեն —
Ու բյուր, հազար անոթի տարան հետները գերի։
Ու բռնեցին սևաչյա առաջնորդին նրանց մեծ,
Վանդակ դրին, որպես մութ սարից բռնած մի գազան
Դեմքին ներկեր քսեցին, արնոտեցին ու էդպես
Մոսկով տարան — ցարանիստ քաղաքը էն սրբազան։
Էնտեղ տարան։ Ողջ երկիրն արդեն գիտեր ծերից-ծեր
Առաջնորդի մասին էդ անտունների բանակի,
Գիտեր, որ ռուս աշխարհի, ժողովրդի էդ անտեր
Պաշտպանն է նա ու մեռնի՝ պիտի մահով կրկնակի։
Գիտեր.— ու սուգ էր անում։ Մինչ ղողանջը զանգերի
Արքայանիստ Մոսկովում ահասարսուռ զրնգաց,
Ու ամբոխը հավաքեց, և հսկային էն բերին,
Դահիճն եկավ—ու քաջի գլուխն ընկավ ուսից ցած։
Իսկ նրանց, որ նրա հետ գերի էին վերցրել—
Հոշոտեցին դահիճներն անգղների նման գեշ,
Պատառ-պատառ արեցին ու փորեցին աչքերն էլ
Ու փռեցին դաշտերում հազա՜ր դիակ, նեխած լեշ։
Էսպես արին։ Ու էսպես թաղեցին բախտը խեղճի
Ու ծիծաղը մի օրվա նրա քթից բերին ետ։
Նորից արևը ելավ, ինչպես ձեռքից դահիճի՝
Աչքը թարախ ու արյուն ու շողերը — մեկ-մեկ նետ։
Բայց ժողովուրդը երկա՜ր իր երգերի մեջ երգեց
Քաջի մասին էն խիզախ՝ ժողովրդին մխիթար,—
Հազա՜ր երգեր հորինեց էն հսկայի մասին մեծ,
Որ ճորտացած մուժիկին ազատություն պիտի տար։

## II

Ու տարիներ սահեցին դանդաղ, իրար ետևից...
Եվ արևը բարձրանում ու իջնում էր արյունոտ։
Պատերազմներ էին միշտ ու նախճիրներ էն թևից՝
Սովն էր իշխում սանձարձակ ու աշխատում էր տենդոտ։
Էնտեղ թաթարն էր զարկում։ Թուրքն էր էնտեղ։ Էնտեղ լեհ
Զորքն էր մտնում ընդարձակ, շեն կալվածներն արքայի։
Տենդ ու երաշտ էր երկրում, հիվանդություն ամեն տեղ,
Ու թռչում էր գեղից-գեղ սև ուրվականը մահի։
Ձեռքին կոտրած գերանդի՝ անցնում էր մահն անկշտում,
Սավառնում էր ձյունաբուք մրրիկներում սպիտակ,
Հունձք էր անում ժրաջան, հազարներով գլխատում
Ու մեռնում էր կյանքն, ինչպես ջրով լցված մի փեթակ։
Էս ժամանակ էր ահա, որ հյուսիսի դաշտերում
Երկաթակամ ու համառ մի նոր մուժիկ երևաց,
Ճուրջը մարդիկ հավաքեց ու վրեժով աններում
Կովի ելավ ահավոր ու արշավեց սրընթաց։
Նորից անտուն, անոթի հողազուրկները եկան,
Հավաքվեցին գյուղերից, քաղաքներից հեռավոր,
Հոծ բանակներ կազմեցին ու համայնքներ գյուղական
Ու խմբերով իրենց բյուր կռվի ելան նորից-նոր։
Ասին՝ երկրի վրա թող ո՛չ մի իշխան չմնա,
Մա՛հ դիշատիչ ու գազան իշխաններին հողատեր.
Այլևս ռուս աշխարհում հողատեր է միայն նա,
Ով փոցխ ունի իր ձեռքին և կարող է աշխատել։

Ասին՝ էսպե՛ս կլինի։ Եվ երբ իշխան չմնա—
Բոլորը գոհ կլինեն ու կաշխատեն ժրաջան,
Ու ժողովուրդը ամբողջ օր ու արև կիմանա
Ու քարե՛րը անգամ մեծ խնդությունից կճչան։
Ու քշեցին այրուձի՛ն։ Առան գյուղեր, քաղաքներ,
Ձյունե ուղին բռնեցին արքայանիստ Մոսկովի,
Բայց զորքն իջավ ցարական՝ խեղճի ցավին
անտարբեր,
Ու բանակները նրանց տվեց քամուն ու հովին։
Երկա՜ր-երկա՜ր կռվեցին մարտիկները գյուղացի,
Բայց զորքերը ցարական ո՛չ մի մարտիկ չթողին.
Առաջնորդին բռնեցին, իսկ նրա քաջ այրուձին
Ահից եղավ ցիրուցան ու հանձնվեց հաղթողին։
Ու սրանց էլ անվեհեր առաջնորդին սևաչյա
Վանդակ դրին ու տարան մայրաքաղաքն արքայի.
Ճամփին հազա՜ր սրիկա թքեց դեմքին ու նրա
Արևառ դեմքն արնոտեց, որ վանդակից չնայի։
Ու բերեցին սրան է՛լ, ինչպես էն հին հսկային,
Հազարամյա Մոսկովի հրապարակն ահավոր,—
Նորից ահեղ գղրդաց զանգերի խումբն ահագին
Ու դահիճը ելավ վեր՝ ոտից-գլուխ հագած նոր։
Ու դուրս եկավ վանդակից առաջնորդը սևաչյա,
Կանգնեց՝ ըմբոստ ու արի, աչքը հառեց ամբոխին,
Աչքերը հուր շանթեցին, ուզեց կանչի ու ճչա,
«Ելե՜ք» ասի — բայց նրան կապկպեցին, չթողին։
Ուզեց կանչի, համոզի ժողովրդին իր էն ռուս,
Ելի՜ր, ասի, բարձրացի՛ր իշխանների դեմ գազան,
Ճզմի՛ր ահեղ հարվածով իշխաններին էդ գոռոզ
Ու պաշտպանի՛ր, ինչպես մարդ, իրավունքդ
սրբազան։
Բայց ի՞նչ ասեր... Դահիճի հարվածներից ահավոր

*Խեղդված մանկան նման մի — ձայնը խզվեց ու դողաց.*
*Ձեռքերը ետ կապեցին, ծունկի բերին նորից-նոր,*
*Գլուխը վար թեքեցին ու դանակը շողշողաց...*
*Ու ժողովուրդը նորից մնաց թշվառ ու անտեր,*
*Նորից արևը ելավ՝ արյուն հագած ու մոխիր—*
*Ու տարիներ տահեցին անմխիթար, անտարբեր,*
*Ու չձգտեց ո՛չ-ոք էլ կյանքի ընթացքը փոխել։*
*Նորից երկրում ծերից-ծեր անհուսությունը իջավ*
*Ու մորեխի պես նստեց հոգիների վրա խեղճ։*
*Սովը նորից տարածվեց ու արշավեց սրընթաց,*
*Ու տարիներ անցան մութ ու աղետներ եղան մեծ։*
*Եվ չէր մուժիկն հավատում էլ ո՛չ մի նոր հեկայի.*
*Մեծ էր ոստխն ավելի, քան ուժերը մի-երկու*
*Ըմբոստ, խիզախ քաջերի, որ օրերում ամայի*
*Ելնում էին ու վառում փոթորիկներ ահարկու։*
*Ու ժողովուրդը լռեց։ Կրեց վիճակն իր դժվար,*
*Որպես վերից սահմանված անմխիթար կյանքի բեռ։*
*Դարեր անցան ու դարեր։ Մի՛շտ նույն երկինքը մռայլ,*
*Նո՛ւյն իշխաններն ամեհի ու արքաներն անտարբեր...*

. . . . . .

## III

*Էսպես երկար տարիներ ժողովուրդը տառապեց*
*Եվ օրերը նրան նոր առավոտներ չբացին—*
*Մինչ բացվեցին ամենուր գործարաններ մեծամեծ*
*Ու խուլ, խավար գյուղերից քաղաք եկավ գյուղացին։*
*Եկան, լցրին քաղաքներն հազարանուն խմբերով,*
*Խուլ գյուղերից անոթի բազմություններ եկան մեծ,*
*Հավաքվեցին երկաթե աշխատանքի տներում*
*Ու վաճառքի հանեցին հաղթ մկանները իրենց։*

Նրանք ոչինչ չունեին ու էլ ոչինչ չունեցան,
Նո՛ւյն անոթին մնացին քաղաքների մշուշում,
Բայց սրտերը վառվեցին ու մկաններն ամրացան—
Չէին նման էլ նրանք էն անիմաստ գյուղացուն։
Քաղաքների անողոք աշխատանքի հնոցում
Շչակները ճչացին աշխարհների մասին նոր,
Ու երկաթե երկնահուպ ծխնելույզի փնչոցում
Բոլո՛րն հանկարծ լսեցին մի աղաղակ ահավոր։
Մեքենաները նրանց ըմբոստ երգեր երգեցին
Եվ աշխատանքը հոգու մի նոր թռիչք ստեղծեց․
Ջղուտ բանվոր էր արդեն դաշտ ու սարի գյուղացին
Եվ ընկերներ ուներ բյուր ու երազներ ուներ մեծ։
Էսպես եղավ։ Եվ ահա քաղաքներում ամրակուռ
Մի առավոտ երգեցին ծխնելույզները բոլոր—
Բանվորների մասին մերկ, տառապանքի մասին լուռ
Ու բովանդակ աշխարհի մե՜ծ պայքարի մասին նոր։
Ասին՝ համայն աշխարհում երկու բանակ միայն կա՝
Մեկը — խարդախ տերերի, հարուստների անկշտում,
Որ լիանում են առատ, վայելում են անխնա,
Նստում են շեն տներում և երբեք չեն աշխատում։
Նրանք, որ տաք են հագնում, ու միշտ մաքուր, ու միշտ նոր,
Գլխի տեղ վի՛հ ունեն մի ու անկշտում մի բերան,
Որ հարբում են ու փսխում, որ կերակուր ուտեն նոր,
Եվ ափսոսում են միայն, որ աշխարհը չկերան։
Նրանք, որ տերն են հիմա քաղաքների, գյուղերի,
Պալատների, բերդերի, բարիքների բոլոր մեծ—
Նրանք, որ հացն են ուտում կիսաքաղցած բանվորի,
Ջո՛ւրկ թողնելով միշտ նրան, որ էդ բարիքն ստեղծեց։

Սակայն բանակը մյուս, մյուս բանակը էն մե՛ծ—
Աշխատավոր բյուրերի բանա՛կն է էն անսասան,
Նրանց, որ բյուր դարերի աշխատանքը ստեղծեց,
Որ աշխատանքն եղան մեծ, բայց բարիքներ չտեսան։
Նրանց, որ բյո՛ւր են հիմա, անհաշիվ ու անհամար,
Որ մկաններ ունեն կուռ ու երակներ վիթխարի —
Ու հոգիներ ունեն մեծ՝ արևների նման վառ,
Եվ ստեղծում են բոլոր հրաշալիքներն աշխարհի։
Նրանք, որ հողն են փորում, ճեղքում են կուրծքը հողի,
Ու վիթխարի գետերին հոսանքներ են տալիս նոր—
Կուրծք են տալիս ծովերի հորձանքներին կատաղի,
Գնացքներ են շարժում բյուր ու հանքեր են փորում խոր։
Նրանք, որ ուժն են կյանքի, կյանքի բազուկն ստեղծող,
Որ շինել են, ինչ որ կա, ինչ որ դեռ պե՛տք է լինի.
Ասին՝ ամբողջ աշխարհում ինչքան հանք կա, ինչքան հող,
Ինչքան բերք կա ու բարիք — պետք է նրա՛նցը լինի։
Էսպիսի վա՜ռ երազներ մեքենաները ասին,—
Ու երկաթի անողոք շշուկներով ահարկու
Մեքենաները մի օր ահագդորդ ճչացին.
Որ պիտ կռվի ելնեն մեծ էդ բանակները երկու։
Ու տարածվեց վիթխարի քաղաքներից հեռավոր
Ըմբոստ մի ճիչ հրեղեն, մի աղաղակ հրաշեկ—
Քաղաքներից երկաթե մի աղաղակ թռավ նոր.
— Պրոլետարնե՛ր աշխարհի, հավաքվեցե՛ք, միացե՜ք։
Ու միացան, ամրացան նրանց շարքերը փշուր,
Ու սրտերին նրանց կուռ մեքենաները ասին,

Որ պայքարի համար մեծ ու հաղթության
համար նոր
Պետք է բոլո՛րը ելնեն ու պայքարեն — միասին։
Ու պայքարի ելան մեծ նրանք մի մութ իրիկուն,
Երբ պատերազմ էր երկրի սահմաններում հեռակա,
Ելան բանվոր-գյուղացիք խենթությունով անհարկու
Ու բանակներ հանեցին արիասիրտ ու հսկա։
Քաղաքներում կարմրավառ դրոշակներ պարզեցին,
Կուրծք տվին-տվին զորքերին արյունարբու արքայի,—
Սակայն չօգնեց բանվորին դաշտ ու սարի
գյուղացին,
Անշարժ մնաց, անհաղորդ՝ աչքը ահի ու մահի։
Ինչքա՜ն արյուն հոսեց վառ, ի՜նչ ընկերներ
վիթխարի
Զինվորների թրերից տապալվեցին ու կորան,
Եվ ի՜նչ ահեղ ցասումով բազմություններ
բանվորի
Արյունոտած ձեռքերով վերադարձան գործարան...
Նրանք, տխուր, քաշվեցին, բայց պայքարի
համար նոր
Զնդաններում, բանտերում նրանց հոգին ամրացավ,
Ու տառապանքը անհուն նրանց հոգին կրեց յուռ,
Մինչև աղետ եղավ մեծ ու ժողովուրդն արթնացավ։

IV

Աղետ եղավ։ Պատերազմ։ Ու ժողովուրդը անտեր
Ջավակներին իր հեռու թշնամու դեմ ուղարկեց։
Ձեր հաղթանակում, թե ինչո՞ւ. ինքը ոչինչ չգիտեր։
Գնաց երկրորդ զավակն էլ — ու տունն ամբողջ
մնաց խեղճ։
Ու հազարներ գնացին, ու միլիոններ, ու բյուրեր,

Դեպի դաշտերը հեռու ուղարկվեցին շարեշար.
Գիտի այնտեղ նրանց տաք գնդացիրը համբուրեր,
Գիտի գնդակը սուլեր ու թնդանոթը ճչար։
Այնտեղ խեղդող գազերի ամպերը տոթ ու դեղին
Գիտի հանկարծ իջնեին բանակների վրա էն,
Գիտի արյուն թքեին ու արնահաղ մեռնեին—
Մա՛հն էր նրանց սպասում գզվանքներով հրեղեն։
Երեք տարի շարունակ սպասեցին տներում,
Որ կռիվը վերջանա— չվերջացավ սակայն նա.
Աչքերը ջուր կտրեցին՝ հառած արնոտ էն հեռուն,
Մահն էր էնտեղ դեգերում ու գլխատում անխնա։
Այդ նույն ձմեռը քո ցուրտ հոգում,
Եվ հուսահատ ու որբ կլինես
Ինչպես հեռու այս Վենետիկում...

# 1927

## ԲԱԼԼԱԴ ՔՍԱՆԸՎԵՑԻ ՄԱՍԻՆ

### I

*Ամեն առավոտ ծեգին,*
*Երբ քնից զարթնում է Բաքուն,*
*Երբ, ելած գիշերվա մեգից,*
*Արթնանում է կյանքը քաղաքում,-*
*Երբ ձայնով աշխույժ ու հնչուն,*
*Քաղաքի բոլոր մասերից*
*Շչակները գործի են կանչում*
*Պրոլետարներին,—*
*Քաղաքի ծայրերից բոլոր*
*Ձգվելով երբ շարան-շարան*
*Բանվորները հոծ խմբերով*
*Շտապում են դեպ գործարան,—*
*Ամեն առավոտ ծեգին,*
*Այդ ժամին գորշ, մխերանգ —*
*Ձուլվելով երթին ամենքի —*
*Քաղաքից անցնում են և նրանք։*

## II

Քսանըվեց հոգի են նրանք —
Եվ խոհուն, մտազբաղ են բոլորը։—
Առջևից գնում է նա —
Երկաթյա Կարմիր Կոմանդորը։
Քայլերով հաստատ, համաչափ,
Հետևում են նրան ընկերները,
Ընթանում են քայլերով շտապ,
Շտապում են դեպի վիշկաները։
Աննկատ, ձուլված ամենքին,
Քայլում են նրանք դեպի ծովը.
Ողջունում են ջրերը դեմից,
Համբուրում է հովը։
Համբուրում է դեմքերը քամին,
Շշնջում է խոսքեր հյուսիսի.
Երկաթյա շքախումբ է դա մի —
Գնում է զորահանդեսի։—

## III

Քայլերով հաստատ, համաչափ
Ընթանում են նրանք խմբովին,
Անցնում են բուլվարի միջով,
Մոտենում են ծովին։
Խփում է ծովը ափերին,
Երկինքը գորշ է, կապար,
Ճոճվում են նավերը սևերիզ՝
Շղթայով ափին կապած։
Իսկ հեռուն — ուրի՞շ նավեր,
Կողերով ծանր նստած՝
Սահելով գնում են վեր —
Դեպի Պարսկաստան...

Գնում են դեպի Էնզելի.
Գնում էին դեպի Իրան,
Տանում են երկրից Լենինի
Մի հեղուկ ալ-հուրհուրան։
Նայում են նրանք նավերին
Եվ իրենց շրթերով անբառ,
Անսահման խինդը դեմքերին՝
Շշնջում են.— Բարի՜ ճամփա...

IV

Տեսնում են ապա հեռևում
Եվ ուրիշ նավեր նրանք.
Մշուշում նրանց երևում,
Արևում են ափեր հուրհուրան։
Տեսնում են նավեր ծանրակող,
Որ ջրերը խորունկ արխած՝
Գնում են դեպի Կրասնովոդսկ,
Գնում են դեպի Հաշտարխան...
Նայում են կարոտով անդուլ
Այդ հեռու ափերին նրանք.
Մի երգ է այնտեղից թնդում,
Խնդալով ողջունում նրանց։
Դաշտերում անբեր ու ամա
Տեսնում են հազա՜ր նվաճում.
Երկաթե անտառի նման
Սերունդնե՜ր են ելնում ու աճում։
Հասնում են նրանց ականջին
Վիթխարի մուրճերի ձայներ.
Շչակնե՜ր են թնդալով կանչում,
Աշխատանքն է հնչում այնտեղ։

Լսում են նրանք այնտեղից
Բյուրավոր ոտքերի դոփյուն։
Քրտի՛նք է բարձրանում հանդերից,
Մի կուրծք է անդուլ տրոփում։
Նայում են հրճվանքով անհուն —
Ու խնդուն եռանդով ջամբած՝
Կոմանդորը ձեռքով է անում,—
Ու թեքում են նրանք ճամփան...

V

Ու, կրկին հեռուն նայելով,
Քայլերով հաստատ, համաչափ,
Անցնում են նրանք Բայիլով,
Մտնում են քաղաքը նվաճած...
Տարինե՛ր են անցել կռվի,
Սուրացել, գնացել անդարձ —
Ու ելել է նահանջող ծովից
Մի ամբողջ նո՛ր նավթանտառ։
Որ ծովն էր առաջ շառաչում
Եփվելով զուր եռանդից —
Վիշկանե՛ր են հիմա աճում,
Վիշկաներ անծայր, անթիվ։
Թնդում 'է երկիրը նվաճած,
Շնչում է եռանդ ու կրակ,
Անցնում են քայլերով համաչափ,
Երկաթե քայլերով նրանք։
Դեմքերով՝ վառված արևից,
Մազութով, մրով ծեփած՝
Վիշկաները կեցած բարևի
Ասում են։— Բա՛րև, Ստեփա՛ն...

*Աշխատում են, ևռում են բոլորը.*
*Մրոտած դեմքեր ու ձեռներ։—*
*Հիացած՝ Կարմիր Կոմանդորը*
*Շշնջում է.—Բարև՛, ընկերնե՛ր։—*
*Ու մտնում են նրանք վիշկաները,*
*Երկաթե քայլերով շրջում.—*
*Դառնում են փոկերն, անիվները,*
*Եռանդի ձայնով շշնջում։*
*Շշնջում է Կարմիր Կոմանդորը*
*Փոկերի աղմուկի միջից —*
*Եվ լսում են, լսում են բոլորը*
*Նրա ձայնը ջինջ ու վճիտ։*

## VI

*Եվ ասում է նա — Կոմանդորը.*
*«— Տոկացե՛ք, ընկերնե՛ր անգին.*
*Ձեր ամեն մի փորած նավթահորը*
*Մի քա՛յլ է ցանկալի կյանքին։*
*Բացվել է հորիզոնը լուսե,*
*Պայքարով ակոսել մի կյանք.*
*Ձեզ համա՛ր գիշերով մի սև*
*Ավազե դաշտերում մենք ընկանք։*
*Քսանըվեց էինք մենք, քսանըվեց,*
*Բայց անթի՛վ, անթի՛վ է մեր անունը.*
*Ոչ գնդա՛կը մեզ սպանեց*
*Եվ ո՛չ էլ կսպանե հոգնությունը։*
*Քանի կաք, ընկերնե՛ր, քանի կաք,*
*Քանի կա աշխատանքը անդուլ —*
*Մեր երթին — վախճան չկա,*
*Մեր պայծառ գործին — պարտություն։*

Տոկացե՛ք, ընկերնե՛ր, մենք ձեզ հե՛տ ենք
Տոկացե՛ք, ընկերնե՛ր անգին,
Որ անցնենք այս նեղ արահետը
Եվ հասնենք ցանկալի կյանքին...»։

## VII

Շշնջում է Կարմիր Կոմանդորը
Փոկերի աղմուկի միջից —
Եվ լսում են, լսում են բոլորը
Նրա ձայնը ջինջ ու վճիտ։
Ու անտես ամենքին, ինչպես ռիթմը,
Այնտեղից ելնում են նրանք,
Թողնելով սրտերում հուր շռինդ մի,
Վառելով անմար մի եռանդ։
Ու կրկին, հրճվանքով անհուն,
Գլուխը բարձր ու ուղիղ՝
Կոմանդորը ձեռքով է անում
Եվ փոխում են նրանք ուղին։
Հռնդում է դեմից քամին,
Բայց անշեղ քայլերով նրանք
Անցնում են Բալախանի,
Մտնում են գործարան ու հանք։
Շրջում են այդպես ամենուր,
Մտնում են գործարան, զավոդ,
Դեմքերին իջնում է մուր,
Շորերին նստում է նավթի հոտ։
Եվ մինչև բարձրանում է օրը,
Դառնում է թնդացող ցերեկ —
Շրջում է Կարմիր Կոմանդորը,
Լինում է ամենուրեք։

Ձուլվելով դարձող փոկերին,
Աղմըկող ռիթմերի միջից
Խոսում է ընկերներին
Իր ձայնով հաստատ ու վճիտ։
Ու, ռիթմի նման անտես,
Ձուլվելով սրտերին նրանց —
Շշնջում է, շնչում է անվերջ,
Անդադար ավյուն ու եռանդ։

## VIII

Եվ ապա, երբ դառնում է օրը
Շառաչուն, թնդացող ցերեկ —
Իրարից բաժանվում են բոլորը,
Ցրվում են ամենուրեք։
Մտազբաղ, գլուխը թեքած,
Քայլերի համաչափ զարկով —
Ստեփանը գնում է Ցեկա,
Ջափարիձեն — դեպի Սովնարկոմ։
Գնում են և մյուս ընկերները,
Ամենքին անտես քայլերով
Անցնում են բոլոր փողոցները,
Մտնում են հիմնարկները բոլոր։
Սրտերում անբոց մի կրակ,
Պայքարում կոփված խոսքերով
Ամենուր շնչում են նրանք
Անդադար եռանդ ու կորով։
Աշխատանքը անտակ է, մեծ է,
Թշնամին անտես ու դժնի —
Եվ շրջում են այդպես Քսանըվեցը,
Մինչև իրիկունը իջնի։
Շրջում են անվերջ, շշնջում են,
Առօրյա աշխատանքը հսկում,

Մինչև իրիկունը իջնում է
Ու վառում կրակներ ոսկուն։
Եվ իջնում է երբ իրիկունը,
Որ հոգնած սրտերին նստի —
Քանըրվեցը անխոս հեռանում են,
Գնում են հանգստի։

## IX

Եվ ամեն առավոտ, երբ օրը
Բարձրանում է՝ հոգսը թևին —
Շրջում է Կարմիր Կոմանդորը՝
Քանհինգ ընկերներ հետևից։
Շրջում են բոլոր վիշկաները,
Մտնում են գործարան ու հանք —
Քանըրվեց կարմիր ընկերնե՛ր են,
Քանըրվեց մարտիկներ նրանք։
Զուլվելով դարձող փոկերին,
Աղմըկող ռիթմերի միջից
Խոսում են ընկերներին
Ձայներով հաստատ ու վճիտ։
Ասում են նրանք.— Տոկացե՛ք,
Տոկացե՛ք, ընկերնե՛ր անգին,
Վառվել է հորիզոնը լուսե,
Առավոտը ցանկալի կյանքի։
Քանի կաք, ընկերնե՛ր, քանի կաք,
Քանի կա աշխատանքը անդուլ —
Մեր երթին — վախճան չկա,
Մեր պայծառ գործին — պարտություն...

# 1928

## ԲԱԼԼԱԴ ԳՆԴԱՊԵՏ ՏՈՄՍՈՆԻ, ԿՈՄԵՐԻՏ ՏՂԻ ԵՎ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՄԱՍԻՆ

*Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու,—*
*Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...*

*Ես ունեմ ընկեր մի, ընկեր մի մոտիկ,*
*Նա մեջքին կապում է մի բարակ գոտի,*
*Նա գլխին դնում է հասարակ կեպի —*
*Իսկական մի հերոս է չգրված վեպի,*
*Հասարակ բանվոր է նա Բալախանում —*
*Փորում է նա հողը ու նավթ է հանում։*

*Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու,—*
*Որքա՜ն հեքիաթներ կան այս գորշ քաղաքում...*

*Այս վտիտ բանվորը, այս վտիտ տղան*
*Այն տարին եղել է համարյա խոխա։—*
*Այդ այն մութ տարին էր, երբ ծովի բացից*
*Գրավեց քաղաքը մեր — անգլիացին։*

*Երբ եկավ, նստեց նա ու հպեց պատին*
*Մեր ըմբոստ քաղաքն ու պրոլետարիատին։*
*Տոմսոնի կոշիկն էր քաղաքում տիրում.—*
*Թշնամին դաժան էր, բարեկամն — հեռու...*
*Բայց ե՞րբ է բանվորը լռել աշխարհում,—*
*Նա խուլ պայքարո՛ւմ էր, անդո՛ւլ պայքարում։*

*Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու,—*
*Որքա՜ն հեքիաթնե՜ր կան այս գորշ քաղաքում...*

*Այդ մութ օրերին էր, երբ մի օր բերին*
*Լցրեցին բանտերը մեր ընկերներին։*
*Եվ վաղ առավոտը, հանկարծ, դեմուդեմ —*
*Մեր վտիտ տղին այս կանչեց Կոմիտեն։*
*Գաղտնի Կոմիտեն մեր կանչեց ու ասաց.*
*«— Դու քաջ կոմերիտ ես՝ հասակդ առած,*
*Քո հայրը բանվոր է, ինքդ — պրոլետար.*
*Տեսնո՞ւմ ես թղթերը.— վերցրո՛ւ ու տա՛ր։*
*Մերոնք գործադուլ են պատրաստում արդեն.*
*Այս խոզ գնդապետը ելել է մեր դեմ —*
*Ուզում է ողջի՛ն նա դարձնի գերի.*
*Կտանես այս թղթերը նրա զորքերին,*
*Կմտնես փողոցները խռիվ ու բանուկ —*
*Իբրև թե աֆիշ ես հանգիստ բաժանում»։—*

*Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու,—*
*Որքա՜ն հեքիաթնե՜ր կան այս գորշ քաղաքում...*

*Հրճվանքից շողաց մեր քաջ տղի հոգին,*
*Կարծես թե նա տերը դարձավ քաղաքի.*
*Աչքերում ցոլաց մի խնդություն անհուն.—*
*Տեսեք՝ ինչ գործե՜ր են նրան վստահում...*

*Ճերմակ թերթիկները գրպանը խոթեց.—*
*Իսկի չվախի՛ թող գաղտնի Կոմիտեն։*
*Ու վազե՛ց, վազե՛ց Նա սրտի դողոցով.*
*Դիմացից՝ մի վա՛շտ էր անցնում փողոցով.—*
*Զսպելով սրտում իր մի կրծող, մութ բան —*
*Մոտեցավ նրանց Նա ու ասաց «գուդբայ»...*
*Ասաց, ծիծաղեց նա կամաց, ինքնիրեն —*
*Ու հանեց թերթիկները, սկսեց ցրել...*

*Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու,—*
*Որքան հեքիաթնե՜ր կան այս գորշ քաղաքում...*

*Այս ի՜նչ քաջ տղա՛ է, այս ի՜նչ լավ ցրիչ...*
*Բոլոր զինվորները մեկ-մեկ վերցրին.*
*Սակայն հայհոյանքը կոկորդում զսպած՝*
*Մեր տղի գլուխը արնոտեց սպան։*
*Հարվածեց, գլուխը արնոտեց տղի —*
*Կարմիր կաթիլները թափվեցին հողին...*
*Բայց երկրորդ հարվածը երբ օդում շողաց —*
*Արդեն չքացել էր, կորել էր տղան...*

*Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու,—*
*Որքան հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում*

*Հևի՜հև հասավ մեր Կոմիտեն տղան.*
*Արնոտած երեսը հրճվանքից շողաց.*
*Կապեցին գլուխը, դրին անկողին.*
*Ուղարկող ընկերը համբուրեց տղին...*
*Հետո գործադո՛ւլ մեծ եղավ քաղաքում —*
*Ելան բանվորները — ու հաղթեց Բաքուն։*
*Ամբողջ պրոլետարը կանգնեց դեմուդեմ —*
*Խոզուկ Տոմսոնի՛ն այն հաղթեց Կոմիտեն...*

Հաղթեց գործադուլը ինգլիշ զորքերին —
Բաքվի պրոլետարը չդարձավ գերի.
Սարսեց գնդապետը մեր ուժից անթիվ —
Եվ ելան ընկերները Բայիլի բանտից...

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու,—
Որքան հեքիաթնե՞ր կան այս գորշ քաղաքում...

Կեցցե՛ գործադուլը, կեցցե՛ Կոմիտեն,
Կեցցե՛ և փոքրիկ այն, կոմերիտ տղեն,
Կեցցե՛ մեր պայքարը ու կամքը արի —
Կեցցե՛ն բանվորները համայն աշխարհի...

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու,—
Որքան հեքիաթնե՞ր կան այս գորշ քաղաքում...

# ԻՄ ԸՆԿԵՐ ԼԻՊՈՆ

**(Բալլադ մանկության, բախտախաղի, պայքարի և հերոսության մասին)**

**Ընկեր Լիպարիտ Մխչյանի հիշատակին**

*Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է գինով…*
*Ես մի ընկեր ունեի՝ Լիպո անունով։*

*Ինչքան հիշում եմ նրան՝ աչքերիս հանդեպ*
*Մի Նայիրյան տեսարան բացվում է հապճեպ։*

*Փռվում է դեմս իսկույն մի փողոց խաղաղ,*
*Ու փողոցի անկյունում — մի վտիտ տղա։*

*Նիրհում է Կարսը՝ խաղաղ ամառնամուտին…*
*Ինչքա՜ն վտիտ է տղան այդ ոտաբոբիկ։*

*Նա նստած է մի քարի — տասնամյա տղան,*
*Ու նիրհում է առաջին — մի ցածլիկ սեղան։*

*Կլոր սեղան է ցածլիկ, մեջտեղում — մի չարխ.*
*Բախտախաղ է մանկական — կոպեկնոց վիճակ։*

*Տո՛ւր մի կոպեկ ու խփի՛ր,— թե բախտդ բանեց —*
*Մի տուփ լուցկի, կամ մի տուփ քորոց կհանես։*

Կապուտաչյա այդ տղան, ա՜խ, ինչքա՜ն էր չար.
Մեզ հետ կռվում էր հաճախ, ծեծվում չարաչար։

Բախտը ժպտար եթե մեզ ու լուցկի հաներ —
Նա իր չարխը կծռեր ու կռիվ կաներ։

Ուներ բարի նա մի մայր՝ ծեր ու չքավոր.
Միակ նեցուկն էր նա տան՝ բոլորին պահող։

Ինչքան հիշում եմ հիմա մանկությունս ես —
Կապուտաչյա այդ տղան ելնում է իմ դեմ։

Տեսնում եմ միշտ նրան ես իր չարխի առջև...
Հետո օրեր անցան շատ, սլացան հապճեպ։

Ու կորցրի ես նրան։— Աշխարհում այնինչ
Եկան օրեր հուրհրան, տարիներ անշինչ։

Պատերազմներ եղան մեծ, պայքարներ բազում —
Եվ ամբողջ կյանքը փոխվեց, ինչպես երազում։

Դասակարգեր ընկան հին ու ելան նորեր —
Օրեր վառվառ ու անգին, անմոռա՛ց օրեր...

Մի օր ելանք ու առանք Երևանը մենք —
Հետո դաշնակը շարժեց մաուզեր ու զենք։

Նահանջեցինք քաղաքից մենք լուսաբացին —
Եվ ընկերոջս նորի՛ց ես հանդիպեցի.—

Երկու ամիս էր արդեն ճակատում էինք —
Վերջին օրերը միայն մենք հանդիպեցինք։

Լիպարիտ էր դարձել նա, իմ ընկեր Լիպոն.
Արշավում էր բանակում՝ ռազմի շապիկով։

Նա զինկոմն էր մեր գնդի, մեր գնդի հոգին.
Անճանաչ էր համարյա՝ գորշ շինելն հագին։

Ճանաչեցի սակայն ես։— Մոտեցա նրան,
Ասի՝ հիշո՞ւմ ես, Լիպո՛, Կարսը նայիրյան...

— Հիշո՞ւմ ես չարխը քո էն...— Նա ժպտաց ու խիստ
Ասաց.— Գնում ենք էգուց. պատրաստվի՛ր, Եղի՛շ։

—Դե, էն չարխը... նա չկա՛... չկա... Հիմա մենք
Ուրի՜շ չարխեր պիտի այս աշխարհում շարժենք։

— Բախտախաղ չէ սակայն սա, այլ կռիվ ու կամք.
Լուսաբացին մենք պիտի առաջանանք...

— Դաշնակը խաղ է կարծում, հանաք է անում...
Դե, կխոսենք մի լավ — Երևանում...

. . . . . . . . . . .

...Լուսաբացին մենք անցանք գրոհի,—
Լուսաբացին խփեցին Լիպոյին...

Լուսաբացին նա ընկավ կռվում,
Երբ հաղթանակն էր վառվում, փռվում։

Ընկավ կռվում
Մեր զինկոմն արի.
Ընկավ Լիպոն
Երևանի
Ճանապարհին...

...Լուսաբացին Երևանը երևաց.
Լուսաբացին մենք մտանք Երևան։

Լուսաբացին մեր բանակը հաղթական
Քաղաք մտավ՝ հետը կարմիր մի դագաղ...

Լուսաբացին ո՛չ մի «ախ» —

Սակայն —

Լուսաբացին դրոշներ հուրհուրան
Իջան ընկեր Լիպարիտի
Վրա...

Խոնարհվեցին դրոշները բանակի —
Ու պառկած էր իմ ընկեր Լիպոն՝
Ռազմի կարմիր իր զգեստներն հագին։

— Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ,
Մեր զինկոմ
Արի.—
Փառք, որ ընկար
Հաղթանակի
Ճանապարհին...
. . . . . . . . . .

Հիմա Լիպոն իմ չկա, նա չկա հիմա,—
Ո՞վ չի սակայն երազում այդպիսի մի մահ

Նա պառկած է
Կոմունարների
Այգում.
— Փա՛ռք քեզ, ընկած

Մեր քաջարի
Ջինկո՛մ։

Դու պայքարի
Դրոշ եղար
Վառ մի.
— Թե տեսնեի՜ր ի՜նչ է դարձել
Մեր Բանակը
Կարմի՛ր։

Նա աշխարհում բանակն է, օ, առաջի՛նը։
Եվ ո՛չ մի ուժ չի՛ դիմանա առաջին։

Ննջի՛ր խաղաղ
Կոմունարների .
Այգում.
— Փա՜ռք քեզ, ընկած
Մեր քաջարի
Ջինկոմ...

## ԲԱԼԼԱԴ ԳԵՂՋԿԱԿԱՆ

(Աղջիկները պարում են ու երգում)

*— Սիրո՛ւն աղջիկ, ո՞ւմն ես սիրում աշխարհում —*
*Սավետական էս մեր սիրուն աշխարհում։*

*— Քաղքից էկած էն տղին եմ ես սիրում,*
*Ճակատը բաց էն տղի՛ն եմ ես սիրում,*
*Աչքերը շող էն տղին եմ ես սիրում,*
*Մաշին քշող էն տղին եմ ես սիրում...*

*— Ընչի՞ համար դու չես սիրում էն տղին,*
*Բոյը սիրուն, բուսը սիրուն էն տղին,*
*Հոնքը կիտած, բեղը սրած էն տղին,*
*Գլխին սև-սև փափախ դրած էն տղին,*
*Մաուզերը կողքից կախած էն տղին,*
*Մեր հանդերից հեռու փախած էն տղին...*

*— Ընչի՞ սիրեմ բեղերը ցից էն տղին,*
*Հո՛ղը դնեմ սև ու անսիրտ էն տղին,*
*Ձեռքը տռուզ, խելքը տռուզ էն տղին,*
*Թալան տվող, լիրբ ու հարուստ էն տղին,*
*Մաուզերին ձեռքը դրած էն տղին,*
*Ըռանչպարի շիվան ու լաց էն տղին...*

— Էն ո՞նց եղավ, որ քեզ սիրեց էն տղեն։
— Շեկ մազերի՛ս աչքը չռեց էն տղեն,
Արնոտ աչքը վրես ածեց էն տղեն,
Մաուզերից կրակ բացեց էն տղեն,
Ալևորիկ մորս ծեծեց էն տղեն,
Ջահել սրտես արուն ծծեց էն տղեն...

— Ե՞րբ պատահեց էդ բոլորը աշխարհում։
— Երբ դեռ սև էր խալխի օրը աշխարհում,
Երբ դաշնակի ձեռն էր տիրում աշխարհում,
Երբ ունևոր-տե՛րն էր տիրում աշխարհում,
Երբ ռանչպա՛րին արև չկա՛ր աշխարհում,
Երբ ռանչպարի օրն էր խավա՛ր աշխարհում...

— Էն ո՞նց եղավ՝ քշեց հորըդ նա գեղից,
Եկավ, քշեց քաչ ախպո՛րդ նա գեղից,
Կրակ տվեց, ավար հանեց նա գեղից —
Քիչ էր մնում՝ քեզ էլ տաներ նա գեղից...

— Էդ էն կրակ, ցավ տարին էր մեր գեղում,
Երբ սև կրակ ու արին էր մեր գեղում,
Ռանչպարը թվանք առավ մեր գեղում,
Էն սև տղեն մի հավ դառավ մեր գեղում։

Հետո էն սև Սեպուն էկավ մեր գեղում,
Էկավ, փռեց կրակ ու ցավ մեր գեղում,
Ռանչպարին գերի արավ մեր գեղում,
Արունն էլավ — սելավ դառավ մեր գեղում...
— Թվանք առած՝ փախավ հերըս մեր գեղից,
Հետը փախավ քաչ ախպերըս մեր գեղից,
Ինչքան ռանչպար-տղամարդ կար — մեր գեղից
Ելան գացին Ղազախու սար մեր գեղից...

— Հետո էկավ, գեղը տիրեց էն տղեն,
Շեկ մազերիս աչքը չռեց էն տղեն,
Արնոտ աչքը վրես ածեց էն տղեն,
Մաուզերից կրակ բացեց էն տղեն,
Ալևորիկ մորս ծեծեց էն տղեն,
Ջահել սրտես արուն ծծեց էն տղեն...

— Հետո էկան վառման օրեր, հետո կռվի օրեր էկան,
Գեղից գացած իմ ախպերներ պոպոզավոր,
հուրհեր էկան.
Ալևորիկ իմ հե՛րն էկավ,
Իմ բայլշևիկ ախպե՛րն էկավ...

— Էն օրվանից, երբ ախպերս էկավ գեղ,
Երբ բայլշևիկ, ռանչպար հերս էկավ գեղ —
Կարմիր գարուն, կանաչ արև էկավ գեղ,
Բանվոր տղից, քաղքից բարև էկավ գեղ...
Մաշին նստած՝ բանվոր տղեն էկավ գեղ,—
Ոնց որ գարուն մի հրեղեն — էկավ գեղ...

— Ընչի՞ համար էլ ես սիրեմ էն տղին,
Մազերը սև, աչքերը սև էն տղին,
Հոնքը կիտած, բեղը սրած էն տղին,
Գլխին սև-սև փափախ դրած էն տղին,
Մաուզերը կողքից կախած էն տղին,
Մեր հանդերից հեռու փախած էն տղին...

— Իմ ուզածն է քաղքից էկած էն տղեն,
Աչքերը բաց ու սիրտը բաց էն տղեն,
Գլխին կաշվե գլխարկ դրած էն տղեն,
Ռանչպարի սրտով սիրած էն տղեն...

*— Ես էն տղի տեսքն եմ սիրում աշխարհում*
*Մաշին քշող ձեռքն եմ սիրում աշխարհում,*
*Նրա անուշ երգն եմ սիրում աշխարհում,*
*Սավետական էս մեր սիրուն աշխարհում...*

## ԽՄԲԱՊԵՏ ՇԱՎԱՐՇԸ

### I

Փողոցում լռություն էր ու թանձր խավար,
Առավոտը մոտ էր, բայց դեռ չէր բացվում —
Իսկ հյուրանոցում խմբապետ Շավարշը
Խմում էր, խմում էր ու մուժով լցվում։
Խմբապետ Շավարշը։— Մի հաղթ տղամարդ,
Երեսին՝ վերից վար՝ դաշույնի հարված.
Այդ հարվածն համարում էր իր դեմքի զարդը
Մանավանդ, երբ դժգոհ էր ու մի քիչ հարբած։
Այդ հարվածն — ու բեղերը։— Դեղին, ոլորած
Երկու խուրձ հրեղեն, երկու առու,
Որ, ծանր, իջնելով կզակի վրա —
Նրան տալիս էին «քաջի» համարում։
Եվ մռայլ աչքերը՝ բիբերում արյուն,
Եվ խիտ հոնքերի գերանդին...
Նա իրեն համարում էր — անհաղթ արու,
Որպես հրաշք՝ ելած հայ ցեղի արգանդից։
Շավարշը խմում էր։— Լուռ, մռայլ բազմած,
Սեղանի գլուխը, որպես ամպ ծանր.
Եվ ամեն մի բաժակը քամած
Նրան դարձնում էր ավելի համր։
Մենակ չէր Շավարշը։— Նրա հետ նստած

Նրա՛ քաջ խոխեքը, իր խմբի տղերքը՝
Իրենց խմբապետի հուշակին վստահ՝
Անվերջ խմում էին — ու հոսում էր երգը։
Իգդիրցի Եգորը, Կարսեցի Հարոն,
Մշեցի Թաթիկը ու Սաքոն Ղաշաղ,
Որոնցից վախենում էր անգամ ինքը — Դրոն,
Որ իրենց կանչել էր առավոտը վաղ։
Նա նրանց կանչել էր առավոտ վեցին,
Շավարշին կարգադրել էր, որ բերի իր խումբը.
Գիտեին, որ ուզում է ուղարկի գործի,—
Եվ ահա Շավարշը մինչև այդ — խմում էր։
Շավարշը մռայլ էր։ Մի մթին կասկած
Օձի պես կրծում էր նրա սիրտը.
Սեղանի գլուխը մութ, մռայլ բազմած՝
Անդադար խմում էր ու հայացքը — բիրտ էր։
— Կանչել է Դրոն առավոտ վեցին,—
Մտածում էր Շավարշը,— բայց ինչո՞ւ է կանչել.
Ասաց՝ ղրկելու է կարևոր գործի —
Եվ թողեց, որ կասկածը մինչև լույս տանջե
Եվ ուտի իր սիրտը։— Ինչո՞ւ չասաց,
Թե այդ ի՞նչ գործի է ուղարկում նա.
Ուղեղում վխտում էր կասկած հազար,
Մտածում էր՝ գնա՞, թե չգնա։
Ո՞վ գիտե Դրոյին։ Այո։ Ո՞վ գիտե։
Կարո՞ղ է սարքել հազար դավ։ Դրոն։
Դժվար է կռվել հետը։
Զուզեց խաթրով անի — կանի զոռով։
Կհանի իր վրեժը։— Երեկ չէ՞ր միթե,
Որ Շավարշն սպառնաց շտաբը քանդել։
Ինչո՞ւ։— Որովհետև
Ռուսահայ սպաներն են իշխում այնտեղ։

Ռսացած սպաները։— Օսլայած տղերք,
Ձեռքերին՝ ձեռնոցներ, դեմքերին՝ պուդրա՝։
Ո՛չ զենք են տեսել, ո՛չ կռիվ։— Մերկ
Աղջիկներ են միայն տեսել դրանք...
Եվ դրանք ահա, այդ լակոտները,
Որոնց ինքը կարող է տանել բաղանիք —
Ուզում են, որպեսզի խմբապետները
Իրենց ձեռքին դառնան կույր խաղալիք։
Ուզում են տիրանան երկրին, բանակին,
Հաստատեն ռսացած մի իշխանություն.
Բայց ո՞նց նա կռանա դրանց տակին.
Կնի՞կ է ինքը, թե կատո՞ւ...
Իսկ Դրոն, իգդիրցի այդ խմբապետը,
Որ եղել է հերոս, անվախ տեռորիստ,
Դրոն — նրանց հետ է
Եվ ուզում է դառնա մինիստր։
Ռազմական մինիստր։— Լա՛վ։ Լա՛վ։
Հետո՞։ Ի՞նչ պիտի անի հետո նա։
Դե, որ մինիստր դառավ —
Կարող է բոլորին տա գետնովը։
Կարող է հավաքի իգդիրցիներին,
Բռնոտի բոլորին, զինաթափի,
Սպանի, ջանդակները շներին քցի,
Որ ծաղկի իր շտաբը....
Խռնվեցին մտքերը Շավարշի գլխում.
Գլուխը. ծանրացավ. լցրեց ու խմեց։
Սրտում մրմռացող կասկածը խուլ
Դառնում էր հետզհետե մեծ։
Դե, Դրոն — թագավոր է։— Դեռ երեկ էր
Սպանեց իր տղերքից երկուսին,
Որովհետև այդ տղերքը
Հարբած՝ թքել էին մեկի երեսին։

Կառքից իջեցրել էին ու դեմքին թքել.
Հետո դուրս էր եկել, որ մինիստր է...
Դե, տղերքը — հարբած են եղել.
Հարբածին էլ ի՞նչ մինիստր։
Թքել էին դեմքին ու նստել նրա կառքը,
Մինիստրի կառքը, — վա՛յ, հարամզադե՛ք...
Բայց հո չկործանվե՞ց աշխարքը.
Մինիստրը աշխա՞րք էր ազատել...
Իհարկե, սխալ էր։ Իհարկե, Դրոն
Վարվել էր անվայել, վարվել էր տմարդի.
Խաբելով կանչել էր նրանց միլիցատուն —
Այդպես չի վարվի տղամարդը։
Խաբելով կանչել էր, թե կների.
Տղերքն էլ եկել էին, — և ահա միամիտ
Նրանց հանել էին կամերից
Ու կռնակից խփել... Միայն մի
Ինչ-որ հարբած մարդու ներկայությամբ...
Սուս ու փուս։ Գաղտագողի։ Անձեն։
Ո՞վ գիտե Դրոյին... Ինչքա՛ն է նա
Այդպես գաղտագողի հնձել...
Մեկը — Թևիկն էր, Եգորի եղբայրը.
Եգորը Դրոյին կների՞։ — Ոչ։ —
Ահա նստել իր մոտ — խմում է անդադար
Ու հարբած՝ համբուրում է ընկերոջը —
Կարսեցի Հարոյին։ Լա՛վ։ Լա՛վ։
Եգորը իր մարդն է այսուհետև։
Եղբոր պես լինելու է մոտիկ, հալալ,
Նույնիսկ կռվեն եթե։
Ա՛յ քեզ մինիստր... Ա՛յ քեզ Դրո։
Ա՛յ քեզ խմբապետ քաջ...
Ձեռքը խփեց սեղանին Շավարշը —
Հողը դողաց։

Խփեց ու խմեց։ Նորից լմեց։ Մռայլ
Ու ոչ մի բառ չասաց։ Գլուխը
Ծանր՝ դրեց կրկին իր բռունցքի վրա.
Այդպես անշարժ — մնաց։ Իսկ շուրջը աղմուկ էր
Երգում էր Ղաչաղը։— Բայաթի՞ էր, թե ե՞րգ
Թուրքերեն, որ լսել էր Շավարշը.— Ե՞րբ։
Գլխում ծանրացել էր մի թանձր մեգ.
Սրտում խլրտում էր կասկածը դեռ։
Ուզում էր բարձրանա, թքի հացին,
Իրենց կերած հացին. շուռ տա սեղանը։—
Արդեն մոտենում էր լուսաբացը.
Իսկ նա դեռ տատանվում էր. չգիտեր,
Թե կատարի՞ արդյոք Դրոյի հրամանը։
Ուզում էր տասնոցը հանի, կրակի,
Բայց իրեն զսպում էր. մտածում էր։
Վերջապես տղամարդի վարտիկ է հագին,
Երակներում — արյուն է, և ոչ թե — մածուն էր։
Գիտե, Դրոն թագավոր է։— Ու թո՛ղ լինի։
Բայց հո չի՞ կարող այդ մարդը
Ինչ ուզենա — անի.—
Բա իրա՞ — Շավարշի՞ — աշիրա՞թը։
Իր հետ է աշիրաթը։—Շավարշը հիշեց.
Ուղեղում բացվեց լայնանկատ —
Ալագյազը... դուման... անպատող գիշեր...
Շների ռռնոց անհանգիստ...
Անցնում են գյուղերից։ Աուշնից — տավարը՝
Հայկական, Թուրքական գյուղերից քշած։
Գյուղերում — ընկել է հավարը.
Լաշա՞կ էր էդ գյուղերի գլխին քաշած...
Ծռճռում են սայլերը. ձիերը դոփում։
Սայլերին — երեխեք, կնանիք. բեռ...

Դումանը շոյող է, ինչպես զեփյուռ,
Ձիերի դոփյունը, ինչպես երգ…
Առջևից — տավարը, հետևից — աշիրաթը՝
Շավարշի աշիրաթը.— խնուսցիներ,
Որոնց տեղահան էր արել —
Պատերազմի թաթը —
Ու աշխարհում ցրել։
Շատերը՝ կորցրած տուն, տեղ,
Ընտանիք, երեխեք, հայր, մայր,—
Այժմ պատրաստ էին ամե՛ն ինչ քանդել
Մի լավ ձիու, կամ մի բեռ ալյուրի համար։
Ով էլ հանդիպեր, ումն էլ լիներ.
Ռսի, Թուրքի, հայի — միևնույն չէ՞։
Միայն թե քաղցից չոռնար կինը.
Միայն թե երեխեն շունչը չփչեր։
Խնուսից — Ալաշկերտ։ Հետո Կարս։
Ցուրտ, մերկ, սով, տիֆ։
Ինչքա՜ն, ինչքա՜ն մեռան,
Քաղցից, կամ ետ չեկան ֆրոնտից։
Ամբողջ ճանապարհը — դիակներ, մահ։
Ով որ մնաց՝ մնաց։ Հասան վերջապես
Այն ռսի երկիրը, որի համար
Այնքան արյուն էին իրենք թափել…
Հասան։ Թափվեցին կիսամերկ։ Եվ ի՞նչ.
Մնացին երկնքի տակ բաց,
Ցուրտը հետևից, քաղցն առջևից —
Ոչ օգնություն, ոչ բան։
«Ռուսահայ եղբայրնե՞րը»… հա՜ — հա՜…
Ընդունեցին — Թուրքից էլ վատ, այո՛.
«Ռուսահայ եղբայրնե՞րը»… «Հայրենի՞ք». «Հա՞յ».
Կուշտ.ականջները դինջ. ապահով։

Բայց ինչո՞ւ ընդունեցին այդքան վա՛տ, վա՛տ,
Օտարի, թշնամու, գրողի պես.
Դե, հայեր են լիրբ, մուխաննաթ,—
Մտածում էր Շավարշը,—հայեր են գեշ,
Այլասերված հայեր, ռսացած.— ոչ
Կովի երես տեսած, ոչ կովի ահ.
Եվ դա չէ՞ր պատճառը, որ
Ոչխարների նման սարսափահար,
Նրանք փախան ֆրոնտից, տվին էրզրումը,
Հետո Կարսն, Ալեքպոլը... վա՛յ ձեզ, հայե՛ր...
Շավարշի գլուխը մտքերից եռում էր.
Շավարշը դառը ծիծաղեց.
Խմեց. ու հոսեցին կրկին մտքերը —
Իրարից ավելի պղտոր ու ծանր,—
Իսկ Ղաշաղը երգում էր, դեռ երգում էր,
Հոսում էր դառնությունը համր...
Եվ հանկարծ Շավարշը — այնքա՜ն պարզ —
Կարծես դեմը լիներ, կարծես կենդանի —
Հիշեց.— առավոտը բացվում էր, թարմ,—
Շրջապատել էին թուրքական Թալինը:
Երեք օր էր արդեն — կռվում էին.
Շրջապատել էին գյուղը չորս կողմից խիտ.
Մարմանդ լուսաբաց էր, երբ
Գյուղը զարթնեց հանկարծ թանձր ծխից.—
Շավարշի տղերքը գիշերը
Վառել էին գյուղը մի ծերից — ու հիմա
Չորս կողմից խուժեցին նրանք ներս՝
Փռելով իրենց շուրջը ահ, մա՛հ, մա՛հ:
Աղմուկ, ճիչ, լաց, սմբակների շռինդ.
Ինքը, նստած սև ձին, ձեռին մաուզեր,
Փափախը թեք դրած, մի ձեռով պինդ
Գրկած ձիու բաշը՝ արշավում էր...

Եվ հանկարծ.... ծառս եղավ Շավարշի ձին. ի՞նչ,
Ի՞նչ զարմանալի հրաշք Շավա՛րշ...
Դիմացից դուրս թռավ մի հրեշտակ, չէ՛. կի՛ն.
Ձին սանձեց Շավարշը — ու մնաց։
Ջաննաթի փերի էր, կին չէ՛ր, չէ՛.
Չէր տեսել Շավարշը այդպիսի կին.
Սարսափած աչքերով կինը նայեց շուրջը —
Աչքերը սև էին, սև ու ջինջ։
Սև մազերը թափված ուսերին, կուրծքը բաց.
Ալաբաստրե, ճերմակ ձյուների նման
Շողշողում էր կուրծքը, ինչպես լուսաբացին
Ալագյազը, երբ ցնդում է դումանը։
Շավարշը սանձել էր ձին, քարացել.
Ազդեցիկ էր տեսքը՝ հագի
Կաշվե սև զգեստը, ձին տակի,
Որ սարսափահար ծառացել՝
Խփում էր մի ոտքը հողին, վրնջում էր,
Աչքերից թափում էր բոց, շանթ, աղամանդ, ծուխ.—
Շավարշը լսում էր իր ձիու վրնջյունը
Եվ ուռչում էր կուրծքը, ուռչո՛ւմ, ուռչո՛ւմ, ուռչո՛ւմ...
Տեսարանը շքեղ էր. ինքը — զարհուրելի,
Ծառացած կնոջ առջև, ինչպես սուրբ Գևորգ.
Ու կնոջ աչքերը՝ սարսափով լի,
Աչքերը, որպես գիշեր։ Ու թվում էր — ցնորք է։
Մի վայրկյան էր միայն, որ տևեց
Երկար, ինչպես դարը։— Շավարշը մի պահ միայն
Ուզում էր բաց թողնել ձին հետևից,
Վախենալով, որ կինը կանէանա,
Կտեսլանա հանկարծ, կցնդի,
Կդառնա գարնանային մշուշ, ամպ, ցող —
Ու կմնա լոկ ինքը ու ձին՝
Գյուղամիջին ահից խրխնչացող.—

Բայց պատահեց հանկարծ զարմանալի,
Զարմանալի մի բան.— կինը, հևհև,
Ինչպես ճերմակ փրփուր, ճերմակ ալիք —
Փլվեց, փռվեց Շավարշի նժույգի առջևը.—
«Կուրբա՛ն»,— կանչեց կինը.— «կուրբա՛ն սյանի,
Սյա՛ն մյանըմ իգիթըմ, սյա՛ն մյանի ալ.
Մյան սյավարըմ սյանի, իգիթ էրմյանի» —
Ձայնը՝ աղբրի՛ նման, աղբրի՛ նման զուլալ...
Ի՞նչ էր, ի՞նչ էր, ի՞նչ էր. ցնո՞րք էր, զառանցա՞նք, տե՞նդ.

(Քրտինքի մեջ կորած ձին
Լիզում էր թաց լնդերքը
Եվ հազիվ էր դիմանում սանձին) —
Երբ դիմացից հանկարծ, դիմացի խրճիթից
Դուրս թռավ մի զինվոր՝ ձեռքին դաշույն,—
Հետո հիշում է Շավարշը մի զարհուրելի ճիչ,
Հետո մշո՛ւշ, մշո՛ւշ, մշո՛ւշ...
— Չե՛մ տա,— գոռաց զինվորը,— չե՛մ տա, Շավարշ, ի՛մն է.
Իմ ձեռքերից փախավ շան քածը...
Վրա պրծավ մռայլ,— ու շողշողաց դաշույնը,
Ու Շավարշին թվաց, թե հարբած է։—
Ու հիշում է Շավարշը.—կինը՝ վերքը կողքին՝
Թավալվում է իր կարմիր արյան մեջ — և —
Իր մաուզերի շո՛ղքը, իր մաուզերի շո՛ղքը,
Ու զինվորի դիակը — իր ձիու սմբակների առջև...

. . . . . . . . . . .

Այն ի՞նչ էր, ի՞նչ էր, ի՞նչ էր. ցնո՞րք էր, զառացա՞նք, տե՞նդ.
Խենթի պես, նրանց դիակների վրայով, քշեց իր ձին,
Այրեց, ջարդեց, թափեց, քանդեց, քանդեց,
Գյուղը դաշտ դարձրեց կարմիր հնձի։

Կոտորեց. չհարցրեց ծեր, կին; աղջիկ, մանուկ,—
Մինչև ուշ գիշեր, մինչև ուշ գիշեր ասպատակեց.
Հետո լուսինը կարծես արյան մեջ էր լողանում,
Իսկ գյուղը դիակ էր կարծես՝ կապված իր ձիու ասպանդակից։
Ուղեղում մշուշ էր — կարմիր, ալ, արյունարբու,
Ուղեղում թուրք կնոջ մարմինը վառվում էր, որպես վերք.
Հետո հարբեց Շավարշը. գայլը արյունով է հարբում,
Իսկ Շավարշը — մի գայլ էր, որ կորցրել էր մի էգ —
Մի սպիտակ, մի մաքուր, մի հրաշալի...
. . . . . . . . . .Շավարշը
Բռունցքը խփեց սեղանին. խմեց. և երբ
Սրբեց բեղերը բռունցքով — հիշեց իր ձիու բաշը,
Իսկ Ղաչաղը երգում էր դեռ։

## II

Արդեն փողոցում ցրվում էր խավարը,
Մոտենում էր առավոտը, պղտոր բացվում,—
Իսկ խմբապետ Շավարշը
Դեռ խմում էր, խմում էր ու մուժով լցվում։
Տղերքն հարբել էին։— Թաթիկը՝
Սիրեկանի նման գրկած Հարոյին՝
Համբուրում էր նրան հարյուրապատիկ —
Իսկ Եգորը հայհոյում էր Դրոյին։
Շավարշը մտածում էր։— Մտքերի թելը,
Որ այնպես տարածվել էր Ղաչաղի երգից՝
Թողնելով հիշողության, անցյալի ելը՝
Դրոյի շուրջը ոլորվեց կրկին։
Արդեն բացվում էր առավոտը.— արդեն

Բաց-կարմիր թանաքի նման Երևանի վրա
Թափվում էր հորանջող ու մգլած այգը —
Եվ Եգորի հայհոյանքն էր ողջունում նրան,
Միայն այդ հայհոյանքը։— Քաղաքում դեռ
Մարդիկ քնած էին ծանր, տագնապալի քնով,
Եվ բացվող առավոտը անտանելի մի բեռ էր,
Որ իջնում էր կրկին իր անմխիթար հունով.—
Քաղաքը դեռ քնած էր լուռ, համր, ծանր,
Ներքևը միայն, հյուրանոցի առջևը, փողոցում
Կանացի՞, մանկակա՞ն, թե՞ պառավային մի ձայն
Վնգստալով օդն էր սղոցում.—
Շավարշը մտածում էր. հարկավոր էր իսկույն
որոշել.
Հարկավոր էր գնալ, կամ չգնալ. մնում էր
Մի-երկու ժամ միայն։— Եվ նա որոշեց.—
Նա կգնա, բայց մենակ. խումբը՝
Կազմ, պատրաստ՝ կսպասի քաղաքից դուրս,
Փարաքարի մոտի այգիներում. հետո —
Հետո հայտնի կանի։— Զինվորներից լոկ չորսը.
Կգնան իր հետ առավոտուն.—
Եգորը, Ղաչաղը, Թաթիկը, Հարոն.—
Հենց սրանք — բավական են. կարո՞ղ է՝
Թող հարձակվի Դրոն.—
Բայց ո՞վ է... նրա ձեռքը... պահողը...
Կարող է բանտարկել։ Կարող է հանկարծ
Սպանի տղերքից սրան, կամ նրան։
Ոլորեց Շավարշը իր պղտոր հայացքը —
Հիշեց արյունոտ այն տեսարանը.—
Միլիցիատան բակում, ավազին,
Իրար կողքի ընկած — երկու դիակ.
Իգդիրցի Թևիկը և Աղասին՝
Լուռ, արնաշաղախ. միայն

Ծոծրակների վրա — փոքրիկ վերքեր.
Խփված էր կռնակից... Այդպե՛ս։—
Դեպի մաուզերը տարավ
Շավարշը իր ձեռքը.
Արյունը գլուխը խփեց —
Հարբեց...
. . . . . . . . . . . .
Ես ո՛չ թե քամին է փողոցում շաչում,
Ով ոչ էլ հրթիռը հրդեհում խավարը,—
Իր խմբի տղերանց հետ դա հյուրանոցում
Խմում, աղմկում է խմբապետ Շավարշը։
Այդ նա էր, որ տարավ ձեռքը մաուզերի՝
Հանեց. քաշեց.— և վաղ առավոտվա մեջ
Ջարագուշակ, դաժան երգեց մաուզերը
Արյան, մուժի, մահի, ասպատակի երգ...
Հետո ձայնակցեցին նրան մյուսները՝
Եգորը, Թաթիկը, Ղաչաղ Սաքոն,—
Իսկ քաղաքը, սմքած, դեռ քնել էր
Ու զառանցում էր մաուզերի կրակոց։—
Ինչպես տիֆով հիվանդի զառանցանքում հրե,
Նախճիրի պես բացվող առավոտվա ֆոնին
Գծելով տագնապի հնչնագրեր —
Երգում էր մաուզերների սիմֆոնին։
Կրակում էին տղերքը — բաց պատուհանից.
Իրար կողքի կանգնած, հայացքները դեպի
լուսաբացը.
Համազարկը թռչում էր տանիքից-տանիք,
Առավոտվա միջով, որ նրանց պես հարբած էր։
Պղտոր առավոտվա միջով, առավոտվա մեգին,
Քաղաքի վրայով, որ զառանցում էր,—
Սավառնում էր խմբապետ Շավարշի հոգին,
Հարբած, մռայլ, դաժան, ինչպես ձյունը,

Որ բուք դարձած՝ խեղդում է, տրորում,
Դարձնում աշխարհը, կյանքը, ամեն ինչ — տենդ.—
Կրակում էր խումբը ու նայում հեռուն՝ աչքերում
Արյան, մեգի, մահի, տագնապի նախճիրներ…
Շուտ եկավ հետո Շավարշը. մաուզերը ձեռին —
— Գնա՛նք,— գոռաց տղերքին,— ու պրծավ դուրս.
Խուպոտ՝ հորդեց կոկորդից քրքիջը,
Հետո — հայհոյանքը. հետո —
— Եզո՛ր,— կանչեց,— լսո՞ւմ ես. մեզ Դրոն ուզել է,
Ուզում է ուղարկի երկինք՝ եղբայրներիդ քով…
Ու կրկին շառաչեց Շավարշի մաուզերը —
Ասպատակի, մահի, արյան երգով։
Անհուելի էր Շավարշը. ձեռքին մաուզեր՝
Օրորվելով, գնում էր մեգի միջից.
Հետևից — իր տղերքը. բոլորի ձեռքին — զենք,
Բոլորն էլ — իր նման հարբած։— Առաջից
Քայլում էր, որպես սպառնալիք, ինքը. կողքեկողք
Ընկնելով — գնում էր. այրում էր սիրտը տապը.
Հետո բռնեց նրան մի խեղդող դող.
Գլուխը շուռ եկավ. սիրտը թափեց —
Հենց այնտեղ, փողոցի մայթերին։— Տղերքը
Բռնել էին նրան։— Փողոցում,
Ուր դադարել էր արդեն մաուզերների երգը —
Մի ծանր խռպոտ էր միայն օդը սղոցում։—
Մեկը, մոտիկ ընկած, մեռնում էր երևի.
Կի՞ն էր, տղամա՞րդ էր, երեխա՞,— անհայտ էր.
Ո՞չմ ինչ, թե նայիրյան ծագող արևին
Խռպոտով էր դիմավորում այդ մարդը։—
Հանգստացավ Շավարշը։— Եվ երբ,
Բեղերը սրբելով, անցավ առաջ — երկու
Զառանցանքի նման երեխաներ,
Աչքերով ամեհի, ահարկու —

Ինչպես շները սովամահ, դաշտում դեգերող,
Հղի կանանց նման փորներն ուռած,
Մագիլների նման ձեռքերով
Հարձակվեցին Շավարշի փսխածի վրա —
Եվ սկսեցին լափել ագահաբար՝ ընկած
Երեսնիվայր մայթին, ինչպես շներ,—
Ու նրանց աչքերում պսպղում էր քաղցը՝
Անասնական, անեզրական, անեզր...
. . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . .
Գնում էր փողոցով խմբապետ Շավարշը,
Հետևից — տղերքը, իր նման հարբած։
Արդեն արթնանում էր զառանցող քաղաքը,
Արդեն առավոտ էր դառնում լուսաբացը։
Տներից ելնելով հետզհետե՝ մարդիկ
Անխոս գնում էին՝ դեմքերին հոգս։—
Անցնում էր Շավարշը, իր խմբով, մայթից,
Տարածում էր շուրջը զարհուրանք, դող։
Եվ հանկարծ — կրկին նա քաշեց մաուզերը,
Առաջին հանդիպած մարդուն հրամայեց.
— Դեպի պա՛տը ռեխդ, դե շո՛ւռ տուր երեսդ,
Տեսնո՞ւմ ես՝ անցնում են մայթից — ահա ե՛ս։—
— Շավա՛րշն է անցնողը։— Տղերքը զվարթ
Հռհռացին բարձր, հայհոյեց Հարոն,—
Ու շուռ եկավ մարդը, նայեց դեպի պատը,
Եվ անցավ Շավարշը՝ հայացքը արյուն։
Եվ հետո — ինչքան նա հանդիպեց մարդու՝
Բոլորին հրամայեց նայել պատին.
Բոլորի դեմքերին նա վախ էր կարդում
Եվ դա համարում էր — բարձր պատիվ,
Եվ այդ պատճառով էլ — չափազանց հպարտ էր։

Մի ամբողջ փողոց նա այդպես անցավ,
Մինչև հանդիպեց մի մարդու,
Որ երեսը շրջել չկամեցավ...
— Երե՛սդ,— գոռաց Շավարշը,— դեպի պատը,
Թե չէ՝ ուխ-մուխդ հիմի կջարդեմ...
Բայց այդ զարմանալի մարդը
Մաուզերը քաշեց — ու կանգնեց նրա դեմ։
Շավարշը շվարեց. երա՞զ էր, տե՞նդ,—
Ուզեց մաուզերի բլթակը քաշի,
Երբ հանկարծ հետևից մի ծանր ձեռք
Բռունցքով խփեց Շավարշին։
Շավարշը օրորվեց, ընկավ մայթին.
Փողոցը երերաց աչքերում. մթնեց.
Ու թվաց Շավարշին, թե այդ մարդը
Քաշեց իր ուղեղում երկաթե պատնեշ...
Զլսեց էլ Շավարշը իր խմբի տղերանց
Մաուզերների ձայնը և չզգաց անգամ,
Թե ինչպես Եգորը հանկարծ
Քարի պես ծանրածանր — իր վրա ընկավ։
Զտեսավ Շավարշը և այն, թե հետո
Իր խմբի մնացորդը ո՞նց նահանջեց.
Լոկ թվում էր նրան, թե մեկը երկաթով
Այրում է իր ականջը։
Եվ տանը միայն, երբ աչքերը բացեց,
Ուշքի եկավ մի քիչ — հասկացավ, որ այդ մարդը,
Որին հանդիպել էր — եղել է իր մեծ
Խաչեղբայր — խմբապետ Սմբատը։
. . . . . . . . . .
. . . . . . . . . .

# 1 9 3 1

## ԲՈՐԻՍ ՁՆԵԼԱՁԵ

> Где он, бронзы звон, или гранита грань...
>
> ВЛ. МАЯКОВСКИЙ

*Ահավասի՛կ այստեղ, Ալեքսանդրյան այգում,*
*Որ կոչվում է հիմա 26-ի անվան,—*
*Այս պատանին,*
*Անպարտ այս ղեկավարը,*
*Պատվանդանի վրա բրոնզացել է անմահ։—*

*Հայացքը դեմն հառած,*
*Դեպի անհուն հեռուն,*
*Կուրծքը տված գալիք մրրիկների թափին.*
*Հոկտեմբերի հրդեհը իր բիբերում՝*
*Նա նայում է հեռուն,*
*Հեռուն,*
*Ուր ծագում է մի նոր, անեզրական արևի։*
*Նա կանգնել է հաստատ, այդ պատանին.—*
*Բրոնզացել է, որպես երիտասարդ տիտան.—*

Նա հիմնադիրն է Վրաստանի
Լենինյան
Կոմ —
Երիտ —
Միության։

Հիսուն հազար բրոնզյա ընկերների ձեռքով
Այս երգեցիկ բրոնզում իր ընթացքը դրած —
Հերոսության, փառքի մի երեկո
Նա բարձրացավ այս վեհ պատվանդանի վրա։—

Նա բարձրացավ հաստատ, ինքնավստահ,
Այնպես, ինչպես կյանքում դեռ ո՛չ մի ծեր,
Լեգենդական հերոս՝ իր նժույգին նստած՝
Փառքի պատվանդանին չի՛ բարձրացել։—

Ո՞ւր եք դուք, հերոսնե՛ր, որ ձեր փառքին վստահ,
Պատմության քառուղիներով, որպես լեգենդ,
Անցնում էիք՝ մարմարյա նժույգներին նստած՝
Գեղեցիկ ու սնամեջ ձեր փառքի հետ...

Ո՞ւր եք դուք, ոսկյա Աքիլլե՛ս և Պատրոկլե՛ս
մարմար,
Ու արագատոտն Ովիս — հովիվների արքա...
Անհավատի՛կ բրոնզյա այս Աքիլլեսը,
Որի Հոմերոսը դեռ պիտի գա։—

Դուք կործանեցիք հեքիաթի Տրովադա՛ն,
Ով երգեցին դարեր ձեր գործերը ռազմի,—
Անհավատի՞կ սակայն մեր նո՞ր Աքիլլեսը,
Որ կործանեց Տրովադան կապիտալիզմի...

Նա կանգնած է հաստատ։ Կուրծքը բաց,
Դեմքը քամուն տված, հայացքն հեռուն՝
Նա նայում է պայծառ, ինչպես լուսաբացը
Իր հայրենի, հանդուգն իր լեռներում։

Նա կանգնած է անպարտ — Իր բրոնզաձույլ սրտով
Նա լսում է տրոփը սրտերի բյուր,—
Նա տեսնում է իր դեմ՝ իր նման
Բրոնզադեմ պատանիների երթը —
Այստեղ, իր շուրջը — և ամենո՛ւր։—

Նրա բանակը մե՜ծ է։— Վրաստանից մինչև
Ավղանստան, մինչ Հնդկաստան ու Ճավա՛,
Մինչև Հոնգ — Կոնգ, մինչև Աշխարհը Նոր —
Օ, ամենո՛ւր, ուր կա աշխատանքի բանակ՝
Պայքարի է ելնում ամենուրեք անահ
Նրա բանակն ահա երկաթակուռ։—

Այս չէ՞ պատճառն արդյոք, որ երգում է բրոնզը,
Որ զնգում է բրոնզը, որպես քայլերգ,—
Այս զնգոցի ռիթմով պայքարներում գալիք
Միլիոնավոր բրոնզյա պատանինե՛ր պիտի
Դեպի գրոհ քայլեն...

Երբ բարձրանում էր նա՝ իր բրոնզը երգում էր
Ընկերների ոսկյա երակներում,—
Եվ այդ պահից ահա նա անդադար երգում է,
Տարածվում է երգը հեռու.—
Երգում է բրոնզը
Հիմա իր լեռներում,
Երգում է հանքերո՛ւմ,
Գործարաններո՛ւմ,

Հնգամյակի համար գոյամարտի ելած
Կոմերիտ անթի՛վ գնդերում,
Չինաստանի կարմիր դիրքերում,
Յունգշտուրմի երկաթյա շարքերում։—

Երգում է բրոնզը
Երկրից — երկիր,—
Բրոնզը երգում է
Հերոսության երգեր...

Օ, ե՞րբ է զնգացել ջահելությո՛ւն այսպես,
Ինչպես այս բրոնզյա պատանին —
Այստե՞ղ —
Կանգնած գրանիտյա իր պատվանդանին...

Ահավասիկ, պոե՛տ, բրոնզի զնգոցը,
Որ դեռ երկար պիտի այստեղ հնչե
Եվ աշխարհի բոլո՛ր, բոլո՛ր գոտիներից
Միլիոնավոր բրոնզյա պատանիների
Հերոսության, փառքի ու պայքարի կանչե։—
Նա և՛ կյանք է, և՛ երգ է, և՛ լեգենդ,—
Այսպե՞ս է զնգում բրոնզը, պոե՛տ։—

# Ծանոթագրություններ
# և
# տեքստային
# տարբերություններ

Ե. Չարենցի Երկերի ժողովածուի II հատորում զետեղված գործերից մեծ մասի համար հիմնական տեքստ է ծառայել բանաստեղծի 1932 թ. Երկերը (Երևան), որ ծանոթագրություններում հիշատակվում է Երկեր, տեքստային տարբերություններում՝ Երկ անվանումով։

1922 թ. Մոսկվայում հրատարակված Երկերի ժողովածուն ծանոթագրություններում և տեքստային տարբերություններում նշվում է ԵԺ II համառոտագրությամբ։

Տեքստային տարբերություններում և ծանոթագրություններում հիշատակվող ԺԳ-ն 1927 թ. Թիֆլիսում հրատարակված պոեմների ժողովածուն է։

Առաջին անգամ առանձին գրքույկով և հենց իր վերնագրով տպագրված երկը տեքստային տարբերություններում նշվում է I տպ (տպագրություն) անվանումով։ Առանձին գրքույկով, բայց և այլ գործերի հետ մի ընդհանուր վերնագրով տպագրված գործերի համար տեքստային տարբերություններում նշվում է ընդհանուր վերնագիրը՝ հետևյալ համառոտագրությամբ.

ԲԲԲ — Բոլորին, բոլորին, բոլորին (Երեք ռադիոպոեմ), 1920 թ., Երևան։

ԵՓՊ — Երեք փոքրիկ պոեմ «Լենինի» շարքից, 1925 թ., Բեռլին։

ՉԲ — Չորս բալլադ, 1929 թ., Մոսկվա։

Առաջին անգամ մամուլում տպագրված գործերի համար ծանոթագրություններում և տեքստային տարբերություններում նշվում է թերթի կամ ամսագրի անունը հետևյալ համառոտագրությամբ.

ԳՀ — Գրոհ, ամսագիր, Թիֆլիս։

ԽՀ — Խորհրդային Հայաստան, օրաթերթ, Երևան։

ԿՄՄ — Կեցցե Մայիսի մեկը, միօրյա թերթ, Երևան։

Կոմ — Կոմունիստ, օրաթերթ, Բաքու։

Հմբ — Համբավաբեր, շաբաթաթերթ, Թիֆլիս։

ՄՃ — Մաճկալ, օրաթերթ, Երևան։

Մտկչ — *Մարտակոչ, օրաթերթ, Թիֆլիս։*
ՆԱ — *Նոր ակոս, շաբաթաթերթ, Երևան։*
ՆՈւ — *Նոր ուղի, ամսագիր, Երևան։*
Նք — *Նորք, հանդես, Երևան։*
ՊԳԳ — *Պրոլետար օրաթերթի (Թիֆլիս) «Արվեստ, գրականություն, գիտություն» հավելվածը։*

## ԿԱՊՈՒՏԱՉՅԱ ՀԱՅՐԵՆԻՔ

*(էջ 7)*

*Գրել է 1915 թ. փետրվարին Կարսում։ Առաջին անգամ տպագրվել է առանձին գրքույկով՝ 1915 թ. Թիֆլիսում։*
*Զետեղվել է* ԵԺ II *հատորում։ Տպագրվում է վերջինից։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I տող *Վերնագրին կից ենթավերնագիրը չկա*
*1-ից առաջ կա՝* Prolog

...Երգեցի մի իրիկուն՝ երբ հոգիս լեփ-լեցուն էր
երազներով և արևով՝
Այնտեղ, մեռնող օրվա արնաթաթախ հայացքում ես տեսա-
հանկարծ հեքանո-
Հարսանիքը կապուտաչյա Սիրուհուս — Հայրենիքիս...

*2—4* Պատուհանի մոտ ու նայել հեռվում
Պահվող, խաբող ճամփաներին անանուն,
Որոնք այնքա՜ն հմայում են գրավում:
*6—7* Մեռնող կարմի՜ր համբույրներով սիրարբած.
*Խմել* անցնող *երանգները վերևի՝*
*10—12* Որ պատմում է Հողի մասին մեղմորեն —
Ու վերանա՜լ, մինչ երգ դառնա իմ հոգին,
Մինչ լույսերը մթնած հոգիս *օրորեն։*
*14—19* *Աչքերս հառել* անվերջ պահվող երազին,
*Լսել ձայնե՜ր,* որ մի գիշեր արբացան
Հովիտների մեջ այս հին:
*Ապրել՝ հարբա՜ծ* իրիկնային գույներով,
Ապրել՝ հարբա՜ծ *աղբյուրների կարկաչում.*
*Հարբե՜լ, հարբել՝* հարբեցումն իսկ մոռնալով,
*21* *Կա հոգեկան* լեցունության *մի վայրկյան,*

23—24 *Երբ* դիվային խարխափումներ էլ չկան,
Երբ *դառնում են ուղևորները ճամփից...*
26—36 Ի՛մ եղբայրներ, *բարեկամներ ու քույրեր.*
Ահա վառել եմ հրազներս անմար
Եվ ուզում եմ ձեզ պարզորեն համբուրել:
Սեղանս՝ առատ՝ սպասում է ձեր գալուն.
Մայրս արդեն պատրաստել է հաց ու միս.
Չհավատաք ստվերների դողալուն —
Գիշերն հիմա կզուրգուրի ամենիս...
Մայրս կօրհնի իմ սուրբ սեղանն անապակ,
Մայրս կօրհնի ձեր գալուստը անքաշում.
Եվ իմ ծեր մոր լալահառաչ երգի տակ՝
*Ճամփա* կընկնեք *իրիկնային մշուշում...*
37 Օ, սրբազա՛ն, *կապուտաչյա՛ Սիրուհիս...*
42—44 *Տնակս այնքա՛ն* գեղեցիկ էր ու անբիծ:
*Լսում էի ալիքների* գեջ ծափին,
*Որ ինձ* պատմում էին էջեր մեծ ճամփից:
46 *Ես գիտեի գուշակել Քո ապագան.*
49—54 *Ուռին, բարդին ու թթենին* մեղմորեն
Պատմում էին ճերմակահագ ջրերին,
Որ սիրել եմ Քեզ մի գիշեր տրտմորեն՝
Սիրով անհուն, սիրով անմեռ ու խորին:
*Ախ, իմ* Տնակս *ու իմ* Այգիս *Հայրական՝* .
Գետի ափին *իմ Երազը տխրամած...*
56 Եվ ձայնակցին քեզ տերևները կամաց...
57 Օ, սրբազան, *կապուտաչյա Սիրուհիս...*
59—60 Եվ պատմում էր, որ հմայքնե՛ր Դու ունես,
Որ աստղերը միշտ Քո մասին են խոսում:
60—64 *չկան*
64 *Ես չգիտեմ, ես չգիտեմ* թե արդյոք
67—68 Որ սիրել եմ ես կարոտով անամոք,
Որ պաշտել եմ՝ հլու Քո սուրբ հմայքին:
70—76 Երբ թրթնու լալաճառաչ երգի տակ
Լսեցի իմ կարոտիս ձայնն հպավոր՝
Որ թվաց մի մեռած բախտի հիշատակ...
Բայց ես գիտեմ, որ կտեսնեմ Քեզ մի օր —
Եվ կլինես Դու իմ անբիծ Հար~հացուն...
Կերջանկանամ ու կրխնդա՛մ բախտավոր՝

Օրհներգելով իմ հեթանոս Աստծուն:

79—80 Ես հասկացա, որ պերճանքներ դու ունիս —
Եվ *մեն-մենակ լույս ճամփաներդ ընկա...*

81 *Որոնումիս ու* փնտրումիս մեծ ճամփին

83—85 Ճամփաս լուռ էր, ճամփին՝ աստղեր ու լուսին,
Որ ինձ ժպտում էին սե՛գ:
*Գնո՛ւմ էի* լուսավորված *իմ ճամփով*

89—92 Երազորեն սայլս օրորվում էր հանդարտ՝
Ճամփաների ամայության մեջ մթին.
Հո՛յ-հո՛յ,— ես ուխտ էի գնում իմ բախտին —
Եվ տրտմորեն նիրհում էին լեռ ու սար...
Ո՛չ գիշեր էր, ո՛չ ցերեկ — այլ երկուսն էլ միասին
Փարվել էին ու քնել՝ որպես երկու ամուսին...:

93—104 Եվ *լո՛ւռ էր* այնտեղ: *Հեռու-հեռվում*
*Մի* ինչ-որ հի՛ն, հի՛ն *Վանք էր երևում*.
*Փայլում էր* ոսկի կատարը *խաչի*՝
Որպես վերամբարձ թռիչք հառաչի:
*Ճամփան ոլորուն*՝ իջնում էր վա՛ր, վա՛ր,
*Դեպի* ձորերի *գիրկը, ուր չկար*
Ո՛չ մարդկային հետք, ոչ մարդ արարած՝
*Երազ էր կարծես*՝ հանկարծ կյանք դարձած:
Եվ հանկարծ մութը գրկեց ամեն ինչ.
Կարծես չի եղել — չի՛ լինի ոչինչ:
Աղամամութը գրկեց ամեն բան —
Եվ ես կորցրի հին Վանքի ճամփան:
Եվ լո՛ւռ էր այնպես: Ոչ ոք չէր խոսում:
Գետակն էր հեռվում տաղակորեն հոսում:
Եվ սպասում էր լեռ, *հովիտ ու քար* —
*Կարծես թե մեկը այցի* պետք է *գար*:

## VII

104 հա

Եվ ահա լեռան ձյունապատ կողից
Բարձրացավ հանկարծ մի լուսավոր ձեռք.
Ծաղիկներն հանկարծ ժպտացին հողից,
Որ հազա՛ր բաքուն գանձ ունի ու բերք.

Եվ այդ լուսավոր ձեռքը Արևի
Պատռեց խավարի մորթին անթափանց։
Առանց արցունքի, առանց բարևի
Հեռացավ այն գող խավարը վաղանց.

Եվ անո՛ւշ, անո՛ւշ կանչը զանգերի
Ավետեց ներկան մոտիկ Վանքերի...։

## VIII

Օ, հինավուրց Վանք... Հայրերիս բագին...
Ուր նրանց կնդրուկն է սուրբ մխացել...
Ողջունո՛ւմ է Քեզ իմ տրտում հոգին,
Որ սիրում է Քո վեհությունը ծեր։
Ես այստեղ եկա։ Աղոթքո՛վ, հույսո՛վ
Անցա իմ ճամփան՝ ամայի ու սին.
Տաքցրի՛ հոգիս չմարող լույսով՝
Փարված Մեծ Հույսին։
Ողջո՜ւյն, Վանահայր... Եկել եմ ահա
Վանքիդ մեջ հոգուս էն աղերսելու.
Խո՛ւնկ դիր մխացող բուրվառիդ վրա,
Որ ես աղոթեմ՝ տրտմորեն-հլու։
Այս պատերի մեջ — ես գիտե՛մ, գիտե՛մ —
Ապրում է Հոգիս՝ կույս ու անապակ.
Լույս աղոթքներով ես գուցե գտնեմ
Նրա Հրաշքի դարբասները փակ։
Մտնում եմ ահա Վանքիդ մեջ։— Հոգիս
Զոհելու այն Մեծ Հրաշքի համար.
—Օ, կապուտաչյա, անբի՜ծ Սիրուհիս...
—Օ, աստվածային հրաշքների Մայր...

## IX

Հինավուրց Վանքի կամարների տակ,
Ուր մի սրբազան, անիմանալի
Գոյության ճախրում կա լուռ ու պարփակ —
Ես ծունկ չոքեցի՝ աղոթքներով լի։
Թեկուզ չվառվեց տոնական բույլով

Ջահը վերևի, ջահը հազարաչ.
Թեկուզ շխնդաց երկնամերձ բույրով
Օծած խորանի վարագույրը խաչ.
Թեկուզ ո՛չ մի երգ չլսվեց Վանքի
Այն հազարամյա գմբեթների մեջ —
Բայց ես զգացի մի խոր բերկրանքի,
Բախտավորության ու սիրո վայրէջ:
Հասկացա հանկարծ, որ այս հինավուրց
Վանքի մեջ Նրա շունչը կա անանց՝
Որպես երբեմնի դյութող, հոգեցունց
Ժպիտ անապակ ու թախծող կանանց:
Հասկացա, որ այս գմբեթների տակ
Հսկել է Նա իմ երազներիս էն —
Եվ սուրբ Երազիս դյութանքին գիտակ՝
Աղոթել է լուռ, լացել տրտմորեն:
Եվ հասկացա, որ ուխտս ապարդյուն
Չի՛ անցնի երբե՛ք — կգա, կլինի...
Եվ ժպտում էր ինձ խորանը տրտում —
Խորանը ցավի, սուգի, արյունի:

X

Օրհնվա՛ծ լինի Սիրունիս ջահել,
Օրհնվա՛ծ լինի Սերս աստվածային,
Որ հոգուս խորքում անմար է պահել,
Ճերմա՛կ Հայրենի՛ք, Քո հմայքը հին.

Օրհնվա՛ծ լինի Տնակն այն հեռու
Եվ Գետն ու Այգին, որ մի իրիկուն
Պատմեցին հոգուս հմայքն ապրելու
Եվ աղոթելու՝ լույսերի՛ն թափուն...

Օրհնված լինիս և Դո՛ւ, գթառատ
Աստվա՛ծ... Օրհնությո՛ւն արևի՛դ, հովի՛դ...
Օրհնությո՛ւն և Քեզ, իմ սո՛ւրբ, անարատ,
Ջահե՛լ, իմաստուն, Հայրենի Հովիտ...

XI

Վանքից դուրս եկա զինով ու լեցուն,
Հավատո՛վ, սիրո՛վ ու հույսով հսկա.
Ձոնս թողեցի իմ սեգ Աստծուն —
Հազար երազով նորից տուն եկա:
Երբ վանահոր հետ բաժանվում էի
Նա մեղմ համբուրեց ճակատս ջահել.
— Հավատա, որդի՛, հարսնի՛ք կլինի,
Հարսանի՛ք բերքառա՛տ, աստվածավայել...
Չի՛ անցնի, տղա, մի քանի տարի —
Կօրհնեմ սեղանիդ լիությունն անափ
Եվ դու կխնդաս՝ անսահման բարի՛...
Օ, հոգու խնկույք... Օ, երազի՛ ծափ...
— Կօրհնեմ Հարսանի՛քդ այնքան սպասած.
Լույսերի՛ Հարսնիք, հույսերի՛ Հարսնիք...
Ուխտդ ապարդյուն չի՛ անցնի, տղա...
— Օրհնվա՜ծ լինիս, առա՛տ Հայրենիք...

127—129 Ուղարկել է Մայրս հնձվորներն արդեն
Եվ ինքը մեռել՝ հեզ շեմքիս վրա...

Ուղարկել է Մայրս հնձվորներն արդեն:

133—136 Գիտե՞ս, տրտմության մեջ ավելի խոր
Ուրախություն ու բերկրանք կա հոգու՝
Էլ *ինչո՞ւ է սիրտս* այսքան *բախտավոր*,
Էլ *ինչո՞ւ է ցավն* այսքան *ամոքում*...

140—141 Հնձվորների սեգ *կրծքերը մաքուր*...

*Իսկ ես* տրտմորեն *սպասում եմ* լուռ՝

143 Օ, անապակ *Քույր*, *օ*, լուսավոր Քույր...
144 հա

XIII

Օ, ոսկեզիրկ, արևաշա՛տ Հայրենիք...
Ես, Քո որդին, Քո զավակը անառակ —
Պատրաստել եմ խրախճանքի մի ընթրիք՝
Վառելով սերս՝ որպես լուսին ու ճրագ:

Երիկնամուքն արդեն իջավ դաշտերին.
Հնձվորները, վաստակավոր, կգան տուն.
Թող կուշտ ուտեն սեղանիս բերքն ու հացն,
Եվ թող խնդա՛ ճրագիս լույսը արթուն:
Օ, որքա՜ն, արեգնազա՜ն Հայրենիք...
Ես ցանե՛լ եմ՝ սիրո՛վ, սիրո՛վ լեփ-լեցուն.
Ունեմ հազար զոհաբերում ու բարիք
Քո գրկառատ ու հեթանոս Աստծուն:
Հունձքը կանցնի: Հավաքելով ամեն ինչ՝
Ամեն ժպիտ, ամեն արցունք ու բարիք՝
Տուն կդառնան հնձվորները քիչ-քիչ
Եվ կօրհնեն Քեզ, Կապուտաչյա՛ Հայրենիք...

163—164 Վաղը, վաղը՝ գինետան հարսանիքը կըտոնենք.
Կապուտաչյա՛ Սիրուհիս...— մեզ աստվածներն են
կանչո՜ւմ..

166—169 Վաղը կա մի հարսանիք, մի հարսանիք գինեծոր.
Հրավիրել եմ արդեն ես աղջիկներ սիրասուն՝
Որոնց ձայնից կուսական խնդալո՛ւ են սար ու ձոր...
Գինինե՛ր եմ ես բերել, հյութե՜ղ, հյութեղ ու կարմիր

171 Սեզ *ծաղիկներ* կան բերված հովիտներից *բազմերանգ*
173—174-ը և հտ
*Առասպելնե՛ր ապրված*, առասպելնե՛ր դյութական՝
Անցորդների մասին, որ մի օր անցան ու չկան:
Եվ որսեր եմ ես բերել՝ անտառներում զարնված՝
Ճերմակ, ճերմակ, որպես ձյուն՝ երկնքի մեջ սերմված:
Խաղողներ կան սեղանիս, որ քաղել են կույս ձեռքեր՝
Երբ ուզեցել է քամին նրանց գովքը սիրերգել:
176 հտ Այնքան կարկաչ *ու ծիծաղ, այնքան ցնծանք արյունի*
*Եկե՛ք, եկե՛ք,* մոտեցե՛ք արևառատ սեղանիս.
Կերե՛ք բերքերն՝ իմաստուն աշխակեզներն եղանիս՝
Որ բերել եմ հայրենի հովիտներից բախտավոր...
Կերե՛ք հացերս իմաստուն՝ որպես նոթի ուխտավոր:

**ԴԱՆԹԵԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ**

*(էջ 14)*

*Սկսել է գրել 1915 թ. վերջերին, ավարտել՝ 1916 սկզբին Կարսում։ Առաջին անգամ տպագրվել է 1916 թ. Թիֆլիսում՝ թվագրված 1915—1916, Տաճկաստան-Պարսկաստան, ռազմաճակատ։*

*Զետեղվել է* ԽԺ II *հատորում, ապա* Երկերում: *Տպագրվում է վերջինից։*

**ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

I տպ *Վերնագրին կից՝ «Միհրան Մարգարյան, Ստեփան Ղազարյան և Աշոտ Միլիոնչյան նահատակ ընկերներիս, որ ընկան սրբազան մարտում Սրբազան և սիրասուն Հայրենիքի համար...»։*

ԽԺ II *Վերնագրին կից՝ (Հիշողություններ պատերազմի դաշտից) և ապա՝ «Միհրան Մարգարյան, Ստեփան Ղազարյան և Աշոտ Միլիոնչյան նահատակ ընկերներիս, որ ընկան Սուլդուզի դաշտում 1915 թվի դեկտեմբերի 25-ին»։*

I տպ 3 Եվ խնդում էր *մեր ճամփորդի հոգին՝*
6 Քրոջ պե՛ս սիրուն, մոր պե՛ս գրկաբաց:
10 Իսկ քաղաքն հեռվում մարում էր քիչ-քիչ:
12 *Կախարդել էր մեզ* ճամփան ամոքիչ:

18 հռ Արևը արդեն բարձրացել էր վեր,
Երբ վերջին անգամ, վերելքի կեսին,
Տեսանք հեռևում ոսկի գմբեթներ՝
Արևի պես վառ, Արևի պես հին,
Խաչակնքեցինք բաց կրծքերը մեր
Եվ նորից խնդա՛ց մեր ջահել հոգին:

26—27 Անցնում էինք *մենք — կա՛յտառ ու ջահել։*
*Մեր հոգին ուներ* արծիվների՛ *թև։*
32—33 *Վրանները արդեն զարնված էին,*
*Երբ նույնպես ուրախ,* նույնպես անվտանգ,
37 *Լուսինկան արդեն բարձրացել էր վեր*
39 Հագեցած *մտանք վրանները մեր,*
44—46 *Բայց հետո հանկարծ բացվեց* մեզ համար
*Մի ավե՛ր ուղի, ուր* մի դարավոր

Անեծքի, ախի կնիք կար նրանում:
48 *Մեր չահել հոգին* և մեր սիրտը — չար:
56—57 *Կանգնեցինք,* անխոս *նայեցինք իրար.*
Նեխվել էր, *փտել անձրևների տակ.*
63 *Բայց* գուցե՞ *նա էլ կրել է զենքեր,*
68 Հորիզոնն հանկարծ երևաց մաքուր:
70—72 Եվ որպես սիրող ու փայփայող քույր,
Կանչեց ինձ նորից ավերված ու հին
Այդ ճամփան անվերջ, անողոք ու կույր:
77—78 Նորից տղերքը երգեցին.— Է՜յ, ջա՛ն,
Մուստաֆա Քեմալի վրա — *1923 թվից Թուրքական բուրժուական Հանրապետության առաջին վարչապետը, այսպես կոչված, ժողովրդա-դեմոկրատական կուսակցության առաջնորդը։ 1934 թ. ստացել է Աթաթուրք (1880—1938) անունը։*

Անա Թոխատլյանը — *Նկատի ունի դրամատեր Թոքատլյանների հյուրանոց-ճաշարանը Պերայում։*

Ահա „*Restaurant Splendid*" — *Թոքատլյան հյուրանոց-ճաշարանի նախկին անունը։*

Կոտի-Լորիգան է այդ հոտը — *20-ական թվականներին տարածված օծանելիք։*

Ջազբանդ — *Անգլերեն բառ է, նշանակում է ջազային նվագախումբ։*

Թագսիմ — *Փողոց Պերայում։*

Նավաստի Ալին — *Ակնարկվում է «Լեննինն ու Ալին» բալլադի հերոսը։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I տպ, ԺՊ *6 Ու հասել է* էստեղ —
*10—11* Ոնց որ *մահը՝ դաժան ու ահեղ,*
Ոնց որ *մահը՝ միակ։*
*27 Անցել են* էն *օրից դարեր,*
*33 Ու ո՛չ թե* էս *մեռած պատին,*
*35* էս *մռայլ,* էս *անտեր երկրի...*
*42—43 Նստել է* էսօր *էլ նա* էստեղ,
էս *սունկի պես ուռած Ստամբոլում,*
Երկ II *53 Որին տա* պետությունը *տուրք.*
*59—60* էս *բոլորը ճիշտ է, ի՛հարկե,*
էս *բոլորը հզոր է ու նոր,*
I տպ *61 Բայց նո՛ւյնն է* — երկրի վերնահարկը,
I տպ, ԺՊ *67—68* Ոնց որ դու, *կամ սուլթան Մեջիտ....*

*Նստել է* էստեղ, ոնց որ *դուք,*
*73* էնտեղ —
*112* էստեղ —



92—23

122—124 Կոտի-Լորիգան է էդ հոտը...
Բայց էդ հեչ...
Գիտես էդ դու հո...
129 Հասկանո՞ւմ ես՝ էստեղ վիոլոնը
136 Ու պարում են էդ հեշտին տակտով —
141 Հալվում են՝ էնքա՜ն մոտիկ...
ԺՊ 168 էնքան շա՜տ են
I տպ, ԺՊ 175 էստեղ կա թե՛ չին, թե՛ հնդիկ.
199 Որպեսզի — բարեկիրթ էդ տները
212 Ծախվում է ամեն ինչ էստեղ։ —
217 Բայց ի՞նչ...
226—227 (էդպես է օրենքը Ստամբուլի) —
Մի գին են վերցնում էստեղ —
I տպ 256 Ոնց հոլը՝ նետված էնտեղից։
ԺՊ 256 Ոնց հոլը՝ նետված էնտեղից։
I տպ, ԺՊ 257—258 Քանի դեռ նստած է էստեղ
Բարեկիրթ էֆենդին էս դեղին։
261 Միայն ֆեսն է ձեր էդ, որ հնից է։
I տպ 272 էս խոսքիս նախատինք կարդա —
ԺՊ 272 էս խոսքիս նախատինք խառնի —
I տպ 274 — Միջազգային բարդակ...
I տպ, ԺՊ 275—277 Հենց էսպե՛ս,
Ոնց որ էսօր...
Ճի՜շտ էսպես առկայծել է Պերան,
283 Երբ էնտեղ հրեշ մի դեղին
287 Իսկ էնտեղ քսան խեղդամահ
289 Ինչ հե՜շտ է բարձրացել էդ օրը
293 Իր հոգին էն օրը, օ, էն օ՜րը
299—301 Հենց էսպե՛ս,
Ոնց որ էսօր...
Ճի՛շտ էսպես առկայծել է Պերան,
312—313 էստեղից քշեց Անտանտին —
էսօր չէ էգուց — համբերե՛ք —
318 Որ էստեղ դուք, էֆենդի՛,

## ՊՈԵՄ ՀԵՐՈՍԱԿԱՆ

*(էջ 227)*

*Գրել է 1925 թ. փետրվարին Հռոմում։ Առաջին անգամ տպագրվել է ԽՀ 1925 թ. № 272։*

*Զետեղվել է* **ԺԳ** *և* **Երկերում**: *Տպագրվում է վերջինից։*

**Լեֆյան թմբուկը բաղած մի կողմ** — *Լեֆ* (Левый фронт—*Ձախ ճակատ*) *գրական խմբակցության անունից, որը Վ. Վ. Մայակովսկու (1893—1930) գլխավորությամբ սովետական իշխանության առաջին տարիներին հանդես էր գալիս արվեստի «ձախ» լոզունգներով։ Լեֆը համարում էր իրեն հեղափոխական նոր գրականության միակ ստեղծողը. ըստ էության ձևապաշտական հոսանք էր սակայն, և Մայակովսկին ինքը հետագայում հրաժարվում է նրա սկզբունքներից։*

**Չեկա** *(հապավում* —Чрезвычайная Комиссия — *Արտակարգ հանձնաժողով բառերից)* — *Հեղափոխության թշնամիների, սպեկուլյանտների և հանցագործների դեմ պայքարելու պետական օրգաններ՝ ստեղծված Սովետական Միության Կենտգործկոմին կից 1918 թ.։ Գոյություն է ունեցել մինչև 1922 թ.։*

**Քեռի Նիկոլը** — *Նիկոլայ ցարն է, ցարերը առհասարակ։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ԽՀ 3 Կրկին խրթին մի ու խոր գողով*

**ԺԳ** *121 Գիտեմ՝* **երգերս** *ինձ փառք կտան*

## ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

*(էջ 232)*

*Գրել է 1925 թ. ապրիլի 12—մայիսի 28-ին Բեռլինում։ Առաջին անգամ տպագրվել է պոեմից մի հատված (II գլխից, որ տրըվում է տեքստային տարբերություններում)՝ Մտկչ, 1925 թ., № 172։*

*Ամբողջությամբ «Մյուր դե Ֆեդերե» (Կոմունարների պատը Փարիզում։ Նվիրվում է Ա. Մյասնիկյանի հիշատակին) խորագրով տպագրվել է ԽՀ 1925 թ. № 191, 192, 195, 196, 197։*

Նույն թվին տպագրվել է նաև առանձին գրքույկով, որը, սակայն, չհաջողվեց գտնել:

Ջնջվել է ԺԳ և Երկերում. տպագրվում է վերջինից:

Ալեքսանդր Մյասնիկյան—*Մարտունի* (1886—1925) — *Կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ. պոեմը գրված է նրա մահվան (ինքնաթիռային վթարից) թողած անմիջական տպավորությամբ:*

Քանդակել է տաշ նա մի կին — *Ակնարկում է ֆրանսիական նշանավոր քանդակագործ Ֆրանսուա Ռյուդի (1784—1855) «Կամավորների ելույթը 1792 թ.» բարձրաքանդակը Փարիզի Հաղթության կամարի վրա, որ լայնորեն հայտնի է «Մարսելիեզ» անունով և դարձել է ֆրանսիական ժողովրդի ազատասիրության խորհրդանիշը:*

„La Commune est mort—vive la cómmune“ — *Փարիզյան կոմունայի պարտության օրերին հռչակված լոզունգ: Նշանակում է՝ «Կոմունան ընկավ, կեցցե՛ Կոմունան»:*

Տյեր—*Տյեր Ադոլֆ (1797—1877) — Ֆրանսիական պետական գործիչ, պատմաբան. Փարիզի կոմունայի (1871 մարտի 18—մայիսի 28) անկման օրերին իր դաժանությամբ հռչակվել է որպես Կոմունայի դահիճներից մեկը:*

„*Ciy*“ — С. Ciy и K° *կամ* A. Ciy и K° — *Առևտրական ընկերություններ ցարական Ռուսաստանում. առաջինը՝ սուրճի, կակաոյի և հրուշակեղենի, երկրորդը՝ օծանելիքների և օճառի. ակնարկում է հավանաբար առաջինը:*

«Բոդլո» — Э. Бодло и K° — *Օճառի և օծանելիքի առևտրական ընկերություն ցարական Ռուսաստանում:*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ՁՀ վերնագրից հետո՝* I.—ԳԱՏԸ

*1—5* էտեն՛ղ է:

«Մյուր դե Ֆեդերէ՛»

էսպե՛ս 'է կոչվում էտեղ նա:

Բարձրացել է դեմս նրեն:

Փլատակ է:

Գառ է դեղնած:

8—10 Ոնց որ էր՝
Մնացել է էն օրից էդպես:
Վրեն
12 Գնդակների նետեր:
14 Հենց էդ հին քարերի վրա,
41—42 Որը թվեմ,
— էդ նրա՛նց է,
46—47 էդ նրանց վրայո՛վ է, ո՛ր
Պատվանդան շինելով էդ դիե՛րը՝
50 ...էստեղ են խմբերով բերել
55—56 Կրծքերին,
Կամ ճունճին մեկի, ճակատին,
61 Կուտակվել են մինչև
63 Դիակների պատեր,
67 Տեսնո՞ւմ ես՝ էս քարի՛ն,
69—71 Թքե՛լ են թշնամու աչխին:
Ոնց որ կարմիր դրոշ՝
Բարձրացրել է մայրն երեխին:
73 Ոնց որ սամում —
78—80 Հիմի չկան նրանք,
Հիմի չկան:
Բայց տեսնո՛ւմ եմ ես ահա ոնց որ
82 Աչքե՛րն էն կոմունար աղչկա,
85 Մնացել է նրեն
87 էն քարերի վրա,
92—93 Մենք էսպես — ընկած-սպասո՛ւմ ենք,—
Սպասում ենք՝ հպած էս պատին.
99 Մյուր Ֆեդերն,—
103 Պատին կռթնած նրեն՝
109 Մեկը թե գար հիմա և ինձ էստեղ տեսներ՝
114 Գնդակով էս պատին քանդակած,—
117 Նայում եմ ես փորած ձեր դեմքերին նրեն —
128 Ոնց որ տեսել էի
143 Մեր պայքարում փոքրիկ նա մի դեպք է թեպետ...
146 N քաղաքում էր,
161 Կապել էր փողոցները, ոնց որ հանգույց,
166 Եվ Սերգեյին հասավ,—
175 Եվ քշեց՝ Սերգեյի վրայով...

176—177 — Եգի՛շ, Եգի՛շ — գոռաց
Սերգեյը ներքևից:
181 Քունքը *կիսեց,*
183 հտ Եվ հիմա — էստե՛ղ եմ,
Կոմունիստնե՛ր, ձեզ հետ:
Դավանա՞ն եմ եղել —
Կասեք:
Բայց գիտե՞ք՝ վայրկյան էր մնացել,
Որ կիսվեի ես է՛լ:
Եվ գիտե՞ք՝ ինձ է՛լ ոնց որ էն
Վայրկյանին կիսել, հարվածե՛լ են.
Էն վայրկյանից — գիտե՞ք — մինչև օրս
Ես լսում եմ — լսում եմ... Նրա ձենը:

Ի՛նձ էր կանչում.
Ինչո՞ւ...
— Երեխա՛ էր Սերգեյը...
Օ, մանո՛ւկ էր նա ոնց որ մի:
Տեսնում եմ, սակայն, որ նա է՛լ
Նայում է իրեն ձեր օրից...
Ո՞նց է թողել էստեղ՝
Կոզակի հարվածը ճակատին,
Ու նայում է էսպես,
Ձեզ պես
Պեր-Լաշեզի պատից...

. . . . . . .

Թող պառկի՛, պառկի թող նա էստեղ,
Ձեզ հետ,
Հենց էս պատի ներքո:
Միևնույն չէ՞ ընկած կոզակի,
Թե վերսալցու ձեռքով:
Ընկերներ:
Թող պառկի՛ Սերգեյը ձեր քով...

. . . . . . . .

Էսպես էր, ընկերներ, էդ դեպքը:
Էսպես էր, Պեր-Լաշե՛զ:
Իսկ հետո՞...

Ինչ որ եղավ հետո
Ես ո՞նց ասեմ...

. . . . . . .

186—189 Փոխեցի շորերս,
Փողոց ելա:
Ու քայլեցի մթում,— ոնց որ կատու
Արյունը հոսում էր քաղաքում, ոնց որ սելավ:
191 Խուզարկեցին վրես,
198—200 Ինձ էլ խառնած նրանց՝ դաշտը քշին:
Ճամփին նայում էի
Շուրջս
Ուշիմ:
207—210 Հիմք դիակ դարձած,
Ցիրուցան·
Էշելոններ մսի:
Սակայն էդ էլ ոչի՛նչ:—
Կայարանին մոտիկ
212—216 Ցուցանակի նման ցցված էր նա էնտեղ՝
Զույգ սյուների, ոնց որ, զույգ ոտների վրա,
Ա՛յ, Ciy-ի հենց էդ ցուցանակի վրից
Կախված էին մերոնք... Հինգ ընկերներ մեկտեղ:
Ինչ-որ կիներ, հարբած, շուրջը շրջում էին
219—222 Էնտեղ, դռան մոտին,
Կային երկու լապտեր՝ սովորական գազի,
Չորս ընկերներ էդտեղ մեկտեղ կախված էին,
Սև լեզուները հանած և ոտքերը գետնից
226 Եվ փորեցինք ահա մեր ձեռքերով մի մեծ
228—229 Երկու հազար ընկեր մենք դրեցինք էդտեղ,
Լցրինք իրար վրա, ոնց որ ձկներ մգլած,
231 Նրան նետում էին էդպես՝ մի աչքը բաց,
233 Թե ի՞նչ ապրեց հոգիս էդ գիշերին,
242 Եկել էին ոնց որ
246 Հոսում էր, ոնց որ թերմացք,
249 Մեր զինկոմին՝ տկլոր, ոնց որ մորութ,
251 Կարմիր դրոշ ուներ ոնց որ բռնած
255—256 Սապոնի էր՝ վրան գրած «Բողլո»,
Նա բարձրացավ վրեն՝

260—262 Նա նայեց էդպես իրա շուրջը՝
Հայացքը ոնց որ գերանդի։
Ու գլխատեց ոնց որ Նա հայացքով իր էդ —
265 Ոնց որ հնձի։
281 Էսպես է ահա։ Պեր-Լաշեզ։
289 Հասկանո՞ւմ եք դուք այս, ընկերներ,
293 Էս պատերի տակին երբ ընկավ
296 հտ Մեր պայքարի, ճամփին
299 Եվ ուրի՞շ է, ուրի՞շ է էդ մի պատը...
302 Էստեղից հեռո՛ւ է։
308 Պառկած են էնտեղ ընկերներ,
316 Նրանո՛վ ենք էսօր
318 Մե՛նք ենք փորել էդ պատը հաղթանակից հետո։
320—321 Նա հաղթական կամա՛ր է։
Էստեղից է անցնում մեր հիմնակա՛նը, հո՛ւնը։
323 Ամեն մի քար էնտեղ։
327 Որ աշխարհում հիմի
329 Եվ պառկած են էնտեղ քով-քովի
336—337 Հաղթանակի հի՛մնը։
Եվ առաջին էդ մեր
339 Պառկած են էնտեղ ընկերներ,
341 Որ պայքարի համար հաղթական
343 Սակայն բոլոր էդ մեր շիրիմների կողքին
345—346 Էդ բոլորի կողքին — էն մեծագո՛ւյնը կա։—
Կանգնած է Նա էնտեղ, իբր անհաղթ փառքի
348 Պառկած է էնտեղ — Իլյիչը...
351—352 — Էդպիսի ղեկավար — չի՛ք.
էդպիսի ղեկավար — եղել չի,
356 Իլյիչը —
364—365 Իլյիչը —
Դե ոնց որ երկրագունդը։
368 Իլյիչը —
374—375 Դրել էր նրա մեջ իր բոլոր մեծությունը։
Նա շնորհք,
378 Դիսցիպլի՛ն էր Իլյիչը
383 հտ Նրա միտքը —
Օվկիան էր լեն:

Մռնչող Ատլանտի՛կ էր.
Ուրի՛շ էր:
Ասում են՝ թե պայթի հյուլեն —
Աշխարհնե՛ր կըճանդե նրա ուժը:
Հյուլեի տարրը թե ճալչի —
Մեն մի հատիկ հյուլեն
Երկրներ, լեռնե՛ր կըճալե:
Էղպես,
Հոսում էր ուղեղն Իլյիչի —
Տարրալուծված հյուլե:

Եվ գիտե՛ր, գիտե՛ր Իլյիչը
Բազմություններ կռել:
Գիտեր կամքեր հազար
Իրար բերել:
Կտրներ կամքը ռսի,
Կամ գերման, կամ չին բանվորի —
Հազոյի կամքին կըկապեր:—
Էսպե՛ս կռեց բռունցքը
Բանվորական դասի
Եվ դրեց անունը —

Р. К. П.

386 *Որ ծնվեր հանճար մի էնպիսի,*
388—477 փխ Գիտե՛ր, գիտե՛ր Իլյիչը բազմություններ կռել...

. . . . . . . . . . . . .

Բայց կամա՛ց, կամա՛ց, ընկերներ...
Մոտենում է ոստիկանը:
Գալիս է:
Ստիպված եմ կտրել ակամա
Ես կարմիր ճուչերս:—
Թողեք երբամ հիմա:
Կգամ — գիշերը:

## II.— ՆԵՐՔԵՎՈՒՄ ՔԱՂԱՔԸ

Գիշեր:
Մշուշ:
Փարիզ:
Ելնելով մշուշից,

Հրեն,
Բարձրանում է դեմս նորից
Պեր-Լաշեզը —
Մյուր դե Ֆեդերե՛ն:

Ու նորից հենվել եմ պատին,
Կեցել եմ՝
Վիթխարի թախիծը ճակատիս:

Ետևից —
Պատից —
Քարերը փսփսում են, խոսում են:
Կամաց:
Հատիկ-հատիկ,
Կաթկթում են բառերը:

Լռել եմ:
Լսում եմ:
Ներքևում հևում է քաղաքը:
Բարձրացած առկայծող խավարից՝
Ներքևում հևում է վիթխարի
Փարիզը:

Կարմիր լամպերը երիզել՝
Պսակներ են կապել ճակատին:
Առկայծում են Լե Շան դ Էլիզեն*,
Պսպղում է Կոնկորդը** վիթխարի:
Մեջտեղում ցցվել է Էյֆելը***,
Ու չուրջը,
Շրջագծում լույսե —
Վիտրիններն ահա, կաֆեները
Դառնում են, ոնց որ կարուսել:

Ներքևում,
Ետև-ետևից
Թռչում են թեթև ավտոները:

---

* Փարիզի ամենագեղեցիկ թաղամասերից մեկը։
** Փարիզի մեծ հրապարակներից։
*** Փարիզում հայտնի աշտարակ։

Փողոցներն իրար շաղախել՝
Այտոները դողում են։
Խողովակներ ոնց որ ջերմաչափի՝
Փողոցները եռում են
Այտոների տապից։

Իսկ ներքևից, գետինը քերելով,
Փորելով գետինը —
Սողում են մետրոները, գալարվում են։
Ալիքնե՛րն են դրանք քաղաքի.
Ամբոխները սառել են բկին.
Պղտորել է արյունը։
Կատաղել է մետրոն տենդից,
Չմարսելուց դեղնել —
Ու թքում է էստեղ ու էնտեղ
Մարդկային հսկա հեղեղներ։
Թափում է խորխը դուրս
Բելվիլում, մոտերքն էյֆելի —
Ամբոխներ է հորդում,
Որ կլանե էլի։

Եվ լապտերի լույսում.
Բոլորովին հանված՝
Անվախ՝
Լողանում են դրսում
Օթոբուս ու տրամվա։
Պոռնիկներ են ոնց որ հոլանի,
Գալարվում են կրքից մերձիմահ.
Փախել են ոնց որ հենց հիմա
Շաբանեի տնից։
Գալարվում են մի լարուն տենդից,
Խմել են աբսենտ ու ջին —
Մութ անկյուն են փնտրում, որ էնտեղ
Հանձնվեն
Առաջինին։—

Ներքևում առկայծող լույսերից
Հորիզոնը կարմիր է։
Երկինքը ոնց որ ալ մշուշ է։
Չեն երևում թեկուզ,
Բայց տեսնում եմ ես մի առ մի՝
Օպերա՛ն,
Ֆրանսիական կոմեդին,
Մուլեն — Ռուժը։

Էդ նրանք են վառել մշուշում
Էլեկտրական լույսի օվկիաններ հրեղեն։

Վառել են,
Հսկում են ուշիմ,
Որ բուրժույը ճամփան չշեղե։
Լույսեր օրանժ ու շեկ,
Լույսեր դեղին,
Գալարվում են շամբշոտ մշուշում,
Ոնց որ օձեր հրեղեն։
Օդում թարթում են, կախարդում,
Որ անցորդն անսխալ կարդա,
Թե ինչո՞վ, ինչո՞վ է հարուստ
Գիշերվա
Մոնմարտրը։

Բայց ինչո՞ւ կարդալ «Մուլեն—Ռուժ» —
Եվ ինչո՞ւ մտնել կազինո,
Երբ բոլոր փողոցներդ,
Օ վիթխարի Փարի՛զ,
Վիտրիններ են սիրտ։
Փողոցներում էն լույս,
Մինչև առավոտ
Վխտում են պոռնիկները
Գինով։
Թաքուններով էստեղ
Թափառում են, կանչում —
Է՛գ ձիերի նման, փողոցների տենդում։
Վրնջում։

Ու պարում վիթխարի՛ էդ,
Իր ճարպոտ մռութը տնկած օդում՝
Հառաչում է բուրժույը։
Փնտրում է միս կնոջ։
Ոչի՛նչ, որ ինքը որձ է փտած։ -
Օ, բուրժույը բարի՛ է.
Թե չտվեց ձեզ սու —
Հո սիֆիլիս կտա՛։

Մյուզիկ-հոլլ.
Բալ-կաբարե։
Վարյետե։
Սինեմա։
Թատրոն։

Կարելի է հղփանալ,
Պարել։
Իսկ հետո —
Որկորում իր տաք —
Ձեզ կըտանի մետրոն։

Մետրոն բարի՛ է։
Երեսունհինգ սանտիմ —
Եվ կընետե մետրոն ձեր քամած մարմինները
Էդ լուսավոր, շողուն շրջանակից անդին։
Բանվորական թաղերը
Խավարում
Որոնում են սու ու սանտիմ։
Էլեկտրական լույսի փոխարեն
Գազե լամպերն էնտեղ
Ճպռոտ աչքերը խրել՝
Տնտղում են խավարը։
— Էդ խավարի՛ն տարեք
Ձեր քամած մարմինները.
Փարիզում էր խավա՛րը միայն,
Անվերապահ կերպով ձեզ համա՛ր է։

Դե, Փարիզը կենտրո՛ն է,
Առա՛նցքն է աշխարքի:
Ի՞նչ կլինեն աշխարքը,
Թե չքանար Փարիզը
Քաղաքների շարքից...
Թե որ միս է՛լ չտան —
Էլ ինչո՞ւ են շնչում գավառները.
Բանվորական թաղերն էլ ինչո՞ւ են.
Օ, չգիտե՛ք միթե՝
Փարիզում մեռնելը —
Հանույք է, երկնային մի շու է...

Ու մեռնում են:
Մեռնում են խմբերով:
Տեղերը բռնում են —
Մերոնք:
Դեպի շուկան սիրո
Տոներով դրկում են հղկած միս:
— Թե չլինենք մերոնք —
Բուրժույը ո՞ւմ քամի...

. . . . . .

Գիշեր է:
Մյուր Ցեղերե՛:
Նստել եմ՝ հենված մի քարի:
Ներքևում հևում է վիթխարի Փարիզը...
Օ, վիթխարի՛ Փարիզ...

Էնտեղ Փարիզը
Եփում է եռանդ ու արկած:
Տագնապից դղրդում է երկիրը:
— Թագավոր է էնտեղ — Առարկան,
Դիկտատոր է —
Ի՛րը:
Ամբոխների մեջքին
Նստել, ոնց որ վիշապ՝
Քշում է, ուր որ կուզե:
Մարդը — անհա՛յտ է լոկ,
Մի գտնելի նշան.—

x.
y.
z.

Գրում ու ջնջում է Մեքենան,
Փոխում է հարցանիշը:
Հանգում է.
Պահանջում է եռանդ ու արկած,
Որ բազմանա, անի առարկան,
Մարդու ձեռքով սարքած
էդ ֆետիշը:

Եվ առարկան անում, բազմանում է:
Եվ անումը նրա — աննվազ է:
Եվ ահա — անթի՛վ է իրը,
Ինչ որ քանակը աստղերի
Եվ ծովերի ավազը:

Եվ էդպես —
Երբ անում են իրերը —
Բարձրացնում են բունտ:
Լցնում են խանութները,
Շուկաներն հորդում:
Էնքա՛ն են անում մի տարում,
Որ բոլոր շուկաները նվաճում են:
Բայց ընչի՞ն, ընչի՞ն է իրի
էդ անտեղի անումը...

Բարձրանում է խուճապ:
Ամբարներից իրենց, դարակներից
Իրերն հորդում են դուրս:
Կրծոտում են շղթան գների,
Թափվում են փողոցները՝
Խռիվ,
Հորդա-հորդա:
Վազում են կոշիկները
Ուզում են հագվել ոտքերի:

Էլ չեն ուզում լինեն
Վիտրինների գերի։
Մուրճերը ծեծել են ուզում,
Մեքենաները ննջել
Եվ չմնալ իզուր,
Որ ժանգը ճանկերով իրենց հոգին խանձե։

Եվ ես բոլորը — ե՞րբ։
Երբ բոքիկ է բյուրը։
Տկլոր են երբ ու մերկ
Բազմությունները իրենք,
Որ կռել են, կոփել էդ իրերը։
Երբ բյուրերի փորերը
Կշտացած հո չի՞.
Երբ ուտում են նրանք
Կեղտ ու ոջիլ...

Ահռելի՛ է սակայն, Պեր-Լաշե՛զ,
Երբ բունտ է իրերի։
Երբ մարդը ճորտ է լոկ՝
Իրին գերի։
Երբ բողոքում է իրը՝
Սպառվելու տենդով
Ցնցելով երկիրը
Հնդկաստանից Լոնդոն։
Երբ ծախվելու խանդոտ եռանդով
Ապստամբեց իրը, որ աշխարհում բազմի —
Վերջացավ.—
Բյուրե՛րն էլ գան թող
Պատերազմի...

. . . . . .

Էսպես մի օր —
Երեկ —
Չիկագոյից մինչև Ստամբոլ —
Երկրներում բոլոր
Իրեն ապստամբեց։

Բարձրացավ Լոնդոնում, Ռուրում,
Փարիզից քշեց մինչև Չին
Եվ հանեց թնդանոթ ու ռումբ
Եվ դարձրեց մարդուն
Ոնց որ հարդը՝
Չնչին:

Հասկանո՞ւմ եք՝ որպեսզի չարչին
Նոր ճամփաներ հարթի ապստամբած իրին,
Որպեսզի իրը չփախչի
Իր ճարպոտած ձեռից —
Մարդկային կյանքը ողջ հանձնեց իրի:

Եվ շենքե՞րից ահա, քաղաքներից,
Հիմալայից մինչև Նիագար՝
Բանվորական խմբեր
Ու թաքուններ գերի
Լցվեցին դիրքերը:
Գաղութներից քշած,
Գավառներից՝
Բերեցին բռնի՝
Թափեցին դիրքերը:

Տերը,
Նստած մեջտեղում,
Իր լիության թասի
Ոսկիները դեզին
Թափում է հորդառատ
Բանվորական դասի
Դահիճների ռեխին:
Դեմքին դիմակ առած,
Հագած խոսքեր ստի՝
Բանվորական գնդերը
Նրանք
Կապեցին թնդանոթի:

Կարելի էր էստեղ դեռ անթիվ
Ածականներ շարել:

Ընկերնե՛ր:
Չգիտե՞ք միթե,
Թե դրանք ովքե՛ր են:—

— Վարպետներ են դրանք հանճարեղ,
Որ գիտեն նոտուկներ քերել
Եվ կոպեկներ քերել...

Նրանք խոսքեր ունեն
Առածիգ,
Ոնց որ ռեզին:
Խիղճը նրանց ճղճիմ,
Ոնց որ չղջիկ,
Աշխատում է գիշերը:
Նրանք կարող էին
Անկյունից խփել Ժորեսին,
Որ վնգստան հետո բանվորական դասին
Խոստումներն իրենց
Զազիր
Եվ քոռ գրոշ չարժող իրենց «սերը»:

Էդպես պոռնիկը
Կարմիր է քսում երեսին,
Որ նմայե մարդու:
Էդպես ճնածախը
Երբեմն
Գործածում է արթուկ:
Ասում են նրանք «Հայրենիք»,
«Մշակույթ» են ասում.
Լսո՞ւմ եք.—
Էդպես նյամ նյամը վայրենի
Օղեր է շարում իր քթին,
Որ ծածկե իր քոսոտ մերկությունը...
Էդպես «լուսավոր» չինգոխտը,
Որպեսզի վզերին նստի

Եվ քամի քրաինքը հյու —
Դեպի վայրերը վայրենի
Տանում է գույնզգույն ջուրբը (* խմբ.)
Ու կոպեկենց հույունք:—

. . . . . . . .

Էն ծայնը,
Որ պիտի կատաղի մռնչար,
Պիտի թքեր աշխարքը մորթողների ոտքին'
Գնդակով լռեց' չհնչած:
Գնդակով հպած մի պատի'
Ընկավ ղեկավարը
Դավադիր
Դահիճների ձեռից:

Բայց էն ծայնը —
Ձայն չէ՛ր հո անհատի.
Անհատի ցանկություն հո չէ՛ր:—
Դեռ մի տարի չանցած' նա դղրդա՛ր պիտի,
Բանվորական շարքերը
Գրոհների կոչեր:—

Էն ծայնը.
Չանցած մի տարի —
Պիտի հնչեր էնտեղ — Կինտալից,
Ցիմմերվալդում հետո նա դառնալով որոշ
Պիտի պարզեր կարմիր գրոհների դրոշ:
Կարելի՞ էր արդյոք էն ծայնը
Խեղդել հեղեղ դարձած արյան մուժում:
Էն ծայնը —
Շուտո՛վ,
Շուտո՛վ,
Շուտո՛վ,
Պիտի բողո՛ք դառնար
Եվ անողոք'
Բանակների բոռուն սիրտը խումբեր:
Տարածվելով էդպես, ծավալվելով անշեղ,
Լեռնանալով կարմիր էն ծովերում արյան —

Պիտի հնչեր հեռու, պիտի կանչեր՝
«— Եկի՛ր, պրոլետարիատ...»

. . . . . . . .

Խանգարեցին թեկուզ նրան մարդիկ կուզեք,
Համոզել ձգտեցին թեկուզ,
Որ դասակարգը մեր
Իր իրավունքը
Մուրացկանի նման՝ տիրողների՛ց ուզի.
Կիսեցին թեկուզ երկուսի
Բանվորական բանակը —
Սակայն կրկին՝
Երբ ժամանակն եկավ՝ իջա՛վ բռունցքը մեր
Տիրողների բկին

Տիրողներին ծախած
Իրենց հոգին՝
Նրանք ձգտում էին
Մեզ կապել թոկի:
Երբ բազմանում էր, աճում էր
Օրեցօր մեր թիվը՝
Նրանք ձգտում էին
Ընտանի շնիկ դարձնել
Մեր ծավալուն կռիվը:
Սարքել էին իրենք
Թեկուզ «Միությո՛ւն» մի,
Սակայն —
Բավական էր մի ռումբ, որ ցրեր
էդ «Միությունը»...

Նրանք բացել էին էդ «Միությունը»,
Որ ով էլ դիմի —
Սախեն նրան փքով
Թնդանոթի միս:
Եվ ծախեցին ձրի:
Սակայն մինչ էդ՝
Երկաթե ձայնը Լենինի
Բանակներում հնչեց:

Կանչեց ձայնը նրա
Բանակից-բանակ՝
Տիրողների վրով
Երկարել ձեռքերը
Եվ եղբայրանալ:
Կանչեց ցնցել գիրքերը
Տիրողների գահի —
Եվ պայքարի ելնել
Դասակարգային...
Եվ մեռնել ելա՛ն:
Դարձրին սվինները
Տիրողների վրա՛:
Սակայն նրանք
Փորձեցին կրկի՛ն մեր կռիվը
Դարձնել ազգային չազքանդ...
. . . . . . .

Ներքևում Փարիզը
Հևում է շնչասպառ:

Ցնցեցին աշխարհը թեկուզ
Հոկտեմբերյան թինդերը —
Սակայն նա դեռ
Տենդագին սարսափը հոգում
Համառում է՝ շնթռած էստեղ:
Սվինների թոկով երկաթել
Բանվորական գնդերը՝
Կուտակել տանկեր ու հանքեր
Եվ կարծում է՝
Տեր է:

Իբր
Կրկին էնտեղ
Գանանչում է գրգիռ ու արկած.
Քրտինք է ուզում լցնի փորը:
Մերձիմահ,
Կիսամեռ ընկած
Էդ գերի — գիկտատորը...

Կարծում են մեղմեցին՝ նրա բռնակը...
Նրա կողը
Երելով թնդանոթ ու դանակ՝
Քաշեցին արյունը
Ու գրեցին բինտեր,
Որ հանգստանա:

Սակայն տենդից հետո
Քաղցած, ոնց որ գազան՝
Մռլտում է՝ շնթոկած էնտեղ նա:
Խժռում է խոժոռ մռութով
Բազմությունները բազում —
Ու արյուն է հազում՝
Տենդից դեղնած:

Ծրախով երկաթե՛ իր
Լափել է ուզում անհագուրդ —
Հանք,
Քրտինք,
Ոսկի ու վարսակ:—
Բայց տագնապով խժռած
Յուրաքանչյո՛ւր կաթիլը
Հոփնդով հորդում է դուրս՝
Դեռ չմարսած:

Հոնդում է
Թնդում ջղաձիգ,
Տագնապից դղրդում է երկիրը:
Չգիտե՞ն խեղճերը,
Որ լծկան անասուն նա չի՛
Աշխարհի դիկտատորը —
Տերը...
Իհարկե, կարող են նրանք
Հողը
Մի տագնապով վերջին
Դարձնել կրկի՛ն արյան ծով:—
Բայց չի՛ հաջողվի նրանց նա
Դարձնել իրը — շնիկ.

Ու մռուքը ցանցել
Հնի
Էն ժանգոտած ցանցով:

Էս անգամ էլ եղավ
Թե քունս իրերի՝
Մենք գիտենք՝
Լինելու է
Քիմիական կռիվ:
Հիշում եք, ընկերներ...
Երեկ —
Պատերազմ էր գազի:
Բայց էն,
Ինչ լինելու է վաղը —
Գազը նրա կողքին
Հազ է հազիվ:

Ծառագայթներ ունեն
Նրանք հիմա,
Որ տարածում են
Երաշտ ու մահ:
Հիմի ռումբեր ունեն,
Որ պայթելուց բացի —
Կարող են տարածել
Սիֆիլիսի բացիլ:
Կարող են տարածել տենդ:
Տիֆ:
Ժանտախտ:
Մի ժամում կարող են
Երկրագունդը,
Հո՛ղը ողողել
Դիակներով անթաղ:

Ինարկե՛, կարող են:
Եվ կփորձեն անել:
Եվ կանեին հիմի —
Թե թողնեինք կրկին

Դարձնել մեր դիերը
Թնդանոթի միս:

Մեր միսը,
Մեր դիե՛րն անգամ
Նրանք վաղո՞ւց ճիմի կըլինեին մարսած
Թե չչրջեր ներքևը
Մեր կարմիր Ուրվականը,
Որ կոչում են նրանք —
«Կոմունիզմի Սարսափ»...
Թե որ լիներ մեր վիզը
Նրանց առջև կքած.—
Թե չիմանար Փարիզը,
Որ էգուց կըգանք...

## III.— ՄԵՆՔ ԴԵՌ ԿԸԳԱՆՔ

Անը
Գրկել է նրանց ճիմի դե:
Աշխարհին տիրողը
Ինչի էլ ուզում է դիմի —
Կարո՞ղ է դարձնել էլ միթե
Բանվորական գնդերը
Թնդանոթի միս:—

Տեսնում եմ՝
Ներքևում ճիմի,
Դե՛մս,
Դե՛մս,
Էնտեղ —
Փողոցների եռում,
Շառաչում —
Լսո՞ւմ եք՝
Բառաչում է սարսափը...

Հեռուն,
Բանվորական թաղերը խավարում —
Լսո՞ւմ եք.

Փսփսում են.
Խոսում են:—
Ինչ որ վրեժ մի ալ՝
Հոսում է էնտեղից սարսափը
Դեպի էտուալ*.
Սարսափը
Սահում է էստեղից, ձեր Րովից,
Փչում է Մոսկովից, ինչ որ հողմ:
Ինչ որ միրաժ մահու՝
Հռնդում է սարսափը ու սահում
Տիրողների չորս կողմը...

Հողմը,
Ձեր հողմը,
Հոկտեմբերի հողմը
Դարձել է հիմի ուրագան:
Նիագարից մինչև Արագած
Հռնդում է հիմի երկրագունդը:
Պատռելով լռության ցելերը՝
Հողմե՞ր են հասցրել արդեն
Մի առավոտ
Էստեղ
Ձեր ցանած ծիլերը:

Եվրոպայում արդեն Կոմունիզմի Ուրուն
Մարմին է ստացել ու միս:
Շրջում է Լոնդոնում, Ռուրում,
Բալկաններում հիմի:—
Ելնում է Գրեն Բելվիլից**
Կարմիր բանակ դարձած՝
Տիրողների հոգում տարածում է հիմի
Անպատմելի սարսափ...

. . . . .

---

* *Ամենաարիստոկրատ թաղերից մեկը Փարիզում։*

** *Բանվորական թաղ Փարիզում։*

Երկիրը,
Ափե-ափ,
Լցված է մեր տաղով:
Մի վիթխարի թափով՝
Լսում եմ՝
Շուրջս ահա
Հնչում են լարերը:
Սինգապուրից—Փարիզ...
Վաշինգտոնից—Լոնդոն...
Տենդով,
Թինդով,
Շռինդով,
Հնչում են լարերը:

Թիկունքս հենած էս քարին՝
Լռել եմ:
Լարել եմ ականջս:
Լսում եմ աշխարհի
Ռադիո-կանչը:

Ելնելով դեմից, Էյֆելից —
Տարածվում են լարերը:
Լարերը,
Ոնց որ հողմ,
Տարածվում են աշխարհի չորս կողմը:
Մշուշում
Թփրտում է օդը հողմանման տապից.
Ղժժում է.
— *Ժո՜ւ-ժժո՜ւո՜ւ, ժու-ժժժո՜ւո՜ւո՜ւ,*
*ժու-ժժժո՜ւո՜ւո՜ւ...*
— Շտապե՜ք, շտապե՜ք, շտապե՜ք...
Հնդկաստանից Տիբեթ —
Ու ետ՝
Դեպի Փարիզ, Լոնդոն,
Դեպի Բեռլին...

Թնդում է օդը լարերի
Տենդից:—

Ու ես,
Նստած էստեղ՝
Լարել եմ, սրել ականջս։
Շուրջս
Թռռում է —
Ռադիո-կանչը։
Ականջս նրանց թընդյունին —
Լսում եմ։

— Խոսում են Լոնդոնից։—
«— Լսե՜ք, լսե՜ք, լսե՜ք...
Խոսում է —
Ֆորիան Օֆիսի
Ռադիո բյուրոն...
x.
z.

Զերո...
Մոտենում է մարդկության ֆինալը...
Մոսկովից արշավում է —
Երրորդ Ինտերնացիոնալը...
Ամենաթարմ լուրեր...
Մոսկովի դիմակը բացված է հենց հիմա...
Կոմինտերնի բյուրո...
Զինովև՛ի նամակ...
Մոսկովից հրահրում են քանդել Ֆորիան-Օֆիսը...
Լսե՜ք, լսե՜ք, լսե՜ք»...

Հնչում է մյուսը,
Խառնվում է Լոնդոնի ձայնին —
Ոնց որ ճաքած լինի։—

Լսում եմ։
Խոսում են Բեռլինից։—
«— Ա-յի՜ի՜ի՜...
— Գտա՜նք, գտա՜նք, գտա՜նք...
Զարհուրելի սարսափ,
Կարմիր վտանգ,
Երրորդ Ինտերնացիոնալը մերկացած,
Ոչ մի կասկած չկա,

Գերմանական Չեկա՜,
Գե՜ր-մա՜-նա՜-կա՜ն-չէ-կա՜ա՜ա՜...»:

Ականջս
Գերմանական էս կանչը
Ինչքա՞ն պիտի տանջեր
Չգիտեմ դեռ էլի —
Սակայն հանկարծ...
Ճանկռում են հանկարծ ականջս.—
Խռռում են Ռեվելից.—
«— Ռռռռոյի՜,
ռռռռոյի՜
ռռռռռռռոյիի՜ի՜ի՜:

Ուրիշ ոչինչ:
Խռռում են:
Բռռում է օդը:
Երևում է՝ խեղդում են...
Ո՞ւմ...
Ո՞վ...
Ընչի՞...
Կրկին լսում եմ:

Մի անհելի ալիք դիպչում է ականջիս.
Կծկում եմ ջղերս ու լարում:
Խոսում է — Սոֆի՛ան:
«Անհելի պայքյուն տանջարում...
Հազարավոր դիակ...
Թագավորը դիպվածով ազատված,
Սարքել է — Կոմինտերնի Բուլղարական հատվածը ..
Միակ միջոցը սրա դեմ — նախատն է ընդհանուր...

Հինդենբուրգ...
Ցուգ...
Չեմբերլին...
Վաշինգտոնից Դանուբ...» —
Բռանում է ականջս,
Թաղանթը թնդում:

Հնչում է արդեն ռադիո-կանչը:
Ինձ էնպես է արդեն թվում թե —
Գայթում եմ թնդանոթում նստած:

Ականջիս թնդում են.—
«— Հնդկաստանում քուլտուր,
Մարոկկոն ապստամբ...
Ընդհանուր ցույց,
Գործադուլ:
Տեռոր...»:

Հանկարծ լռում է ողջը,
Ոնց որ սրբեն էռով,

Հետո —
*Ցնցվում է օդը*
*Մի նոր ձեռով:*

Թնդում է կրկին ականջիս
Մի անռելք ճռինդ:
Լցնում է աշխարհի լայները.
Հետո
Խառնում են ձայները.
Թռնում են ֆով-ֆովի...
Ականջս ճանաչում է կանչը...
Խոսում են Մոսկովից:—

Թնդում է սիրտս,
Լցվում է ցնծուն կրակով:—
«— Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն,
— Լենինյան նոր զորակո՛չ:
— Մտել են էռկապե ֆառորդ միլիոն բանվոր
— 5000000 պիոներ:
— Բան —
— Գյուղ.
— Զին —
— Կոմ —
— Թղթակից,

— Բանվոր Չագինը,
— Հնարել է ննձի մեքենա,
Կոմսոմոլը մտնում է կարմիր բանակ...»:

Թարձր,
Բարձր,
Անահ
Հնչում են լարերը:
Թնդում են ականջիս դեռ էլի:

Խոսում է — Երրորդ Ինտերնացիոնալը:—
«— Կոմունիստական ցույց Ռեվելում,
— Սպիտակ տեռոր,
— Հեղափոխությունը ճնշված է Անտանտի
— Դահիճների ձեռով,
— Սպանվածներ անթիվ...
— Անթիվ <1 անրնկ.>
— Պրոլետարներ, բոլոր երկրների, միացե՛ք...»

Կանչում է — Երրորդ Ինտերնացիոնալը:
Կոմունարներ,
Լսո՞ւմ եք.
Կանչում է՝
Դան,
Ազատեն,
Եվ բերեն,—Կարմիր ճառուցումը,
Կանչում է վերջի՛ն պայքարի,
Վերջին զրոհի՛ մի:
Ընկերներ,
Խախտվել է արդեն
Տիրոզների հիմքը:

Նրանք,
Ինա՛րկե,
Կարող են զարկել Մինկովին,
Ռեվելի կռիվը
Կարող են արձախեղդ անել:

— Սակայն չե՞ն կարող նրանք նա
Լենինյան բանակն սպանել:

Կարելի՞ է սաստել ուրագանը,
Կամ լեռնացող ալիքը,
— Կոմսոմոլը,
— Հոսող ժամանակը...
— Էդ կենդանի գ'ոլիքը...
— Կոմսոմոլը...
— Այսինքն նրա՞նք,
Որոնց հանդեպ ես ինքս,
Պոետս —
Հնադարյան մամոնտ եմ թերևս,.
Միջնադարյան տեսիլ...
— Նրա՞նք,
Որ բացել են աչքերը —
Հոկտեմբեր են տեսել...

Հասնում են,
Ուռճանում են նրանք,
Հասակ են քաշում, ոնց որ անտառ:—
Աշխարհը բովանդակ
Դղրդում է նրանց արշավից.—
Անթիվ,
Անթիվ,
Անթիվ,
Աճում են,
Բազմանում են նրանք —
Ծլնում են Թուրից,
Վարշավից...

. . . . . .

Վայրկյանը
Լարուն է հիմի, ոնց որ երկունք:
Գալարվում է աշխարհը,
Պիտի ծնի՞:—
Դեմ առ դեմ —
Բանակներ երկու:

Պայքար է գալիքի
Եվ համառող ճճի:

Հինը
Հևում է հրեն ներքևում:
Տագնապից գալարվում է:
Նվում է:
Հավաքում է ուժերը,
Կուտակում —
Խեղդել է կամենում բնում —
Լեռնացող ընդհարումը...
Սարսափից դեղնել է
Երեսի կաշին:.
Ռանգը թափել:
Ձռել է աչքերը,
Հառել հյուսիս:
Ջառանցում է նոր Ռուր,
Պեր-Լաշեզ.
Դիե՛ր,
Դիե՛ր,
Դիե՛ր,
Էշելոններ մսի:—
Կարծում է գալիքը.
Անխուսափելին
Գալու է հյուսիսից:

Ինա՛րկե, էնտե՛ղ է
Գլխավոր մեր բերդը:
Մեր գլխավոր ամրոցը — ինա՛րկե, հյուսիսո՛ւմ է:—
Կըդիմանա՞ր սակայն մինչև օրս մեր բերդը,
Թե չլիներ կյանքում
Հնդկաչինից Ջանգու
Մեր կենդանի հոսումը...

Թե չլիներ մեր շունչը Փարիզում,
Չլիներ Լոնդոնո՛ւմ կամ:
Երկրագնդի եթե
Յուրաքանչյուր մասում

Զբաղմունք, չասեմ
Հոկտեմբերի նույնը:
Յուրաքանչյուր ընչում թե շշաչեր
Մեր պայքարի. շռինդը ճռնդում —
Հիմի նո չէ՞ր Փարիզը գալարվի ներքևը
Հոգևարքի տենդում...

Դե իհա՛րկե — Լենի՛նն է
Գլխավոր մեր բերդը,
Բայց էդ բերդից բացի —
Կա մի ուրի՛շ բերդ է՛լ,
Մի բերդ է՛լ,
Որ կոչում են նրանք —
«Կոմունիզմի բացիլ»:

Եվ էդ բերդից բացի՛ էլ
Կան դեռ բազում բերդեր.
Ով խելացի է՝ բաց են
Նրա դեմ էդ բերդերը...

Մեզ հե՛տ է —
Հասկանո՞ւմ եք՝ ի՛նչը —
Աշխարհի դիկտատորը,
Տերը...

Մեզ հետ է —
Իրը...
Մեր հիմնական ընկերը,
Եվ գուցե՛ —
Մեր մեծագույն, մեր մեծ,
Գերագույն դաշնակիցը...

Մեզ հետ է տարկան,
Այո՛:—
Աշխարհի մեծագույն ապստամբը.
Եփելով գրգիռ ու արկած՝
Կարծում են նրան կխամբե՞ն,
Կամ կսանձե՞ն...

Քրտինք է պահանջում առարկան
Եվ ընդհանուր լարում,
Եվ ո՛չ թե «մասնավոր» կամ «սեփական» ձև,:
Մեզ հետ է վերջապես ինդուստրիան
Եվ մեքենան — մեզ հե՛տ է:
Մեզ հետ է էյֆելյան աշտարակը,
Մեզ հետ են և նրա՛նք, որոնք
Օ, ո՛չ թե ուտում են ուստրից —
Այլ ուղեղը, մի՛տքը որոնց
Հանճարեղ է, թռիչք է — ու արա՛գ !...

Մեզ հետ են էյնշտեյնը, Շայլոխը <՞ խելք >:
Եվ ծերուկ էդիսոնը.
Լսո՞ւմ եք...
Մեզ հետ է թռչող ժամանակը
Եվ պատմության հոսումը:

Ապագայի շենքին ով դնում է մի քար
Կամ մի կաթի՛լ անգամ —
Նա մեր մե՛ջ է, մեզ հե՛տ է —
Իր կամքից անկախ...
. . . . . . .

Ես ի՞նչ եմ.
— Չնչին մի հյուլե՛:
Բայց թիկունքիս ունեմ —
Կազմակերպված բյուրե՛ր:
Լեցո՞ւն է սիրտս
էդ վիթխարի բախտով:—
Անա՛ թե ինչու, ընկերնե՛ր,
Ձեր քարերին նստած՝
Մեր գալիքին վստահ՝
Նայում եմ Փարիզին, ոնց որ հաղթող...

Թեկուզ գիտեմ, որ դե՛մն է
Մեր գլխավոր կռիվը,
Թեկուզ գիտեմ, որ դե՛մն է —

Բայց գիտե՞մ, ՞գիտե՞մ ես,
Որ հաղթանակը — մերն է:
Գիտեմ,
Որ ունենք մեր դեմը —
Քանի՞ Հոկտեմբե՛ր դեռ...
Ինչքա՞ն դիրքեր դեռ կան,
Ինչքա՞ն բերդեր...
Գիտեմ, որ լարել են մեր դեմ
Իրենց բոլո՛ր ուժերը,
Պողպատե՛լ են դիրքերը.
Երկաթե՛լ,—
Բայց գիտե՛մ, գիտե՛մ ես,
Որ հաղթանակը մե՛րն է,
Հաղթական գալիքը — երբ էլ գա թե...

Նա դիկտատո՛ր է, տե՛ր է,
Նրան էլ վախ չկա,
Ում աչքերում վառվել է
Ապագայի մի կայծ:
Ով տեսել է գալիքը
Ավելի՛ մոտից,
Քան կոշկակարը տեսնում է
Կոշիկն իր ոտի:
Ով ո՛չ թե տեսնում է Ապագան,
Այլ շոշափո՛ւմ է.
Ով իր ամե՛ն նյարդով
Եվ մազերո՛վ անգամ
Զգում է անդադար — գալիքների հպումը...
. . . . . . . . . .
. . . . . . . . . .

Էստե՛ղ է:
«Մյուր Տեղերե՛»:
Էսպե՛ս է կոչվում էստեղ նա:
Բարձրացել է դեմս հրեն:
Փլատակ է:
Պատ է դեղնած:
Մնացորդն է առաջվա պատի:
Մի փոքրիկ կտոր:

Ոնց որ էր՝
Մնացել է էն օրից էդպես:
Վրեն՝
Հատիկ-հատիկ՝
Գնդակների հետքեր:—

Քշեցին հորդու-հորդու
Եվ բերեցին էստեղ:
Ի՞նչ:
Թողեցին ձեզ թե՝
Կարծում են՝ խեղդեցի՞ն ապագան:
Ընկերնե՛ր,
Ընկանք թե որ դուք —
Բայց —
Լսո՞ւմ եք —
Մենք կանք —
Դեռ կգանք...

Լցված է կյանքը հիմա
Մեր արշավի թինդով:
Մեր հոինդով լեցո՛ւն է:—
Շուտո՛վ,
Շուտո՛վ կգանք,
Կբերենք Կարմիր հատուցումը...

Արդեն առել ենք մենք
Աշխարհի վեցերորդը:
Եվ կան
Եվ կան թեկուզ,
Դեռ կան բազում բերդեր —
Սկսվել է սակայն հաղթանակի երթը,
Շուտո՛վ,
Շուտո՛վ,
Շուտո՛վ,
Փարիզի՛նն է հերթը,
Ընկերնե՛ր...

475 *Ներքևում* նրեն
476—478 *չկան*
481 Փսփսում են
483—484 Ոնց որ *վրեժ մի ալ՝*
*Հոսում է* էնտեղից *սարսափը*
492 *Դողում է,* ոնց որ *տերև, գալիքների ահից։*
494—495 էդ *թաղերի վրա*
*Շուտով կելնի արևը,* ոնց որ *դահիճ...*

**Р. К. П.**—Российская коммунистическая партия —*Ռուսաստանյան կոմունիստական կուսակցության սկզբնատառերն են։*

**Շարանթի տնից** — *Հասարակաց տուն Փարիզում։*

**Աբսինտ** — *Համանուն բույսից պատրաստված խմիչք (լիկյոր), որի գործածությունը չափազանց տարածված է Ֆրանսիայում։*

**Ջին** — *Օղի. առանձնապես շատ է գործածվում Հոլանդիայում ու Անգլիայում։*

**Ֆրանսիական Կոմեդիան** — *Ֆրանսիայի հնագույն դրամատիկական թատրոնը. հիմնադրվել է 1680 թ.։*

**Մուլեն-Ռուժ** — *Կաֆե-շանտան Փարիզում։*

**Կազինո** — *Զվարճատուն։*

**Մոնմարտր** — *Թաղամաս Փարիզում, որտեղ տեղավորված են գիշերային զվարճության հաստատությունները։*

**Սու** — *Ֆրանսիական հնագույն մանր դրամը։*

**Սանտիմ** — *Կոչվում է ֆրանսիական մանր դրամը։*

**Մյուզիկ-հոլլ** — *Հասարակական հավաքույթի երաժշտական մեծ սրահ։*

**Կաբարե** — *Զվարճավայր մարդկանց նեղ շրջանի համար. սկըզբում առավելապես արվեստագետների։*

**Ժորես Ժան** *(1859—1914) — Միջազգային սոցիալիստական շարժման ականավոր գործիչ, պատմաբան և աշխարհահռչակ հռետոր. ֆրանսիական կառավարության միլիտարիստական քաղաքականության կրքոտ մերկացումների համար սպանվել է 1914 թ. հուլիսի 31-ին։*

**Ցիմմերվալդ և Կինտալ** — *Ակնարկում է Ցիմմերվալդի և Կինտալի Միջազգային սոցիալիստական կոնֆերանսը. առաջինը տեղի է ունեցել 1915 թ. սեպտեմբերին, երկրորդը՝ 1916 թ. ապրիլին։*

**Միություն** — *Ակնարկում է Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին իմպերիալիստական տերությունների խմբավորումները՝ Անտանտա և Եռյակ միությունը։*

**Ֆորիան օֆիսը** — *Անգլերեն արտաքին և բաժին բառերն են ներկա դեպքում՝ արտաքին հաղորդումների բաժին։*

**Երրորդ ինտերնացիոնալ** — *Կոմունիստական ինտերնացիոնալ. միջազգային պրոլետարական կազմակերպություն—հիմնվել է 1919 թ. և գոյություն ունեցել մինչև 1943 թ.։*

**Խոսում է—Սոֆիան** — *Ակնարկում է Բուլղարիայի բանվոր դասակարգի ելույթները Ցանկովի ֆաշիստական կառավարության դեմ 1923 թ. սեպտեմբերին, կառավարական միջոցառումները Բուլղարիայի կոմունիստական կուսակցության դեմ 1924 թվականին, պայթյունը Սոֆիայի տաճարում 1925-ին։*

**Հինդենբուրգ**—*Պաուլ ֆոն (1847—1934) — Գերմանական ֆելդմարշալ, միապետական և հետադեմ. 1925—1934 թթ. Գերմանիայի վարչապետ։*

**Յուզ** — *Ջարլզ Էվանս (1862—1949) — Ամերիկյան պետական գործիչ, 1921—1925 թթ. Ամերիկայի պետական քարտուղարը։*

**Չեմբեռլին**—*Օստին (1863—1937) — Անգլիայի արտաքին գործերի մինիստրը 1924—1929 թթ.։*

**Կոմունիստական ցույց Ռևելում** — *Ակնարկում է բանվորական ցույցերը Տալլինում (քաղաքը նախկինում կոչվել է Ռևել), ապստամբությունը 1924 թ. դեկտեմբերի 1-ին, որ պարտության է մատնըվում. գնդակահարվում ու աքսորվում են շուրջ երեք հազար բանվոր և գյուղացի։*

**Զառանցում է Նոր Ռուր** — *Ակնարկում է օտարերկրյա զորքերի և գերմանական բանվոր դասակարգի արյունահեղ ընդհարումը 1923 թ. մարտին։*

Էյնշտեյն—Ալբերտ (1879—1955) — Ամերիկյան աշխարհահռչակ ֆիզիկոս։

Էդիսոն—Թոմաս Ալվա. (1847—1931) — Ամերիկյան հայտնի էլեկտրոտեխնիկ, գյուտարար։
Տողատակի ծանոթությունները հեղինակինն են։

## ԷԼԵԳԻԱ, ԳՐՎԱԾ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

(էջ 250)

Գրել է 1925 թ. մարտից հետո, հավանաբար արտասահմանից վերադառնալուց հետո և Երևանում։ Առաջին անգամ տպագրվել է Նք 1926 թ. I գրքում։
Զետեղվել է ԺԳ և Երկերում: Տպագրվում է վերջինից, որտեղ պոեմը սխալմամբ թվագրված է 1925 թ. հունվար, Վենետիկ։

**Տեսի երկիրը ես Իտալիո, և Վենետիկը, և գոնդոլներ...**—*Արևմտահայ բանաստեղծ, հրապարակախոս և հասարակական գործիչ Նահապետ Ռուսինյանի (1819—1876) «Կիլիկիա» բանաստեղծության տողերն են՝ վերափոխված։*

**Այնտեղ շրջում էր պոետը մեր** — *Խոսքը, և առհասարակ պոեմն ամբողջովին վերաբերում է Ավետիք Իսահակյանին (1875—1957), որին Չ.-ն արտասահմանում ճանապարհորդելիս այցելել է Վենետիկում ու հյուրընկալվել շուրջ մեկ ամիս (մարտին)։*

**Իրեն կարծում էր նոր մի Նազոն** — *Ակնարկում է հռոմեական բանաստեղծ Օվիդիոս Նազոնին (մ. թ. ա. 43—մ. թ. 17), որն Ավգուստիանոս կայսեր հրամանով կյանքի վերջին տարիներն անց է կացրել հայրենիքից հեռու, աքսորում՝ Սև ծովի ափերին։*

**Ուր կուզեիր որ Զառոդ ապրի** — *Ակնարկում է Ավ. Իսահակյանի «Ալագյազի մանիներ» շարքի Զարոյին։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Նք 3* *Այնտեղ շրջում էր պոետը մեր*
*206* **էջ Անել է Մարքսը.—կեցությունն է,**
**Որ կաղապարում է ուղեղը մեր:—**

Հիմա մեզ մոտ այս իմաստությունը.
Գիտե ամեն մի պիոներ:
Նա այլ խավից էր մի օր ելել
Եվ այն, որ տիրող էր ու չար կայանք —
Նա համարում էր հավերժական
Օրենք մի — կարծր ու աներեր:

## ԲԱԼԼԱԴ ՔՍԱՆԸՎԵՑԻ ՄԱՍԻՆ

*(էջ 265)*

*Գրել է 1927 թ. դեկտեմբերի 19-ին Բաքվում։ Առաջին անգամ տպագրվել է Կոմ. 1928 թ. № 298։*

*Զետեղվել է «Չորս բալլադ» գրքույկում, ապա* Երկերում: *Տպագրվում է վերջինից։*

Երկաթյա Կարմիր Կոմանդորը — *Ստեփան Շահումյանն է (1878—1918). ականավոր բոլշևիկ, Բաքվի կոմունայի ղեկավարը։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոմ *21* Երկաթե *քայլերով համաչափ*
*33* Երկաթե *քայլերով համաչափ*
Նոր, I տպ *63 Մի երգ է այնտեղ* ճռնդում,
Կոմ *78 Ու* անդուլ *եռանդով չամբած՝*
*82* Երկաթե *քայլերով համաչափ*
*84 Մտնում են* Երկիրը *նվաճած...*
*140—141 Վառելով* անդուլ *մի եռանդ։*
*Ու* վերջին *հրճվանքով անհուն,*
*146 Բայց* անդուլ *քայլերով նրանք*
*152 Այստեղից սկսվում է VIII գլուխը*
*178* Երկաթե անդուլ *խոսքերով*
*180* Անսպառ *եռանդ ու կորով։*
*191 Քսանվեցը* անտես *հեռանում են,*
*207* Բացվել *է հորիզոնը* բացե,
*211 Մեր* երկրին — *վախճան չկա,*

## ԲԱԼԼԱԴ ԳՆԴԱՊԵՏ ՏՈՄՍՈՆԻ, ԿՈՄՍԵՐԻՑ ՏՂԻ ԵՎ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՄԱՍԻՆ

*(էջ 273)*

*Գրել է 1928 թ. հունվարի 1-ին Բաքվում։ Առաջին անգամ «Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմսերիտ խոխի և գործադուլի մասին» վերնագրով տպագրվել է «Պրոլետար» օրաթերթի (Թիֆլիս) «Արվեստ, գրականություն, գիտություն» հավելվածում՝ 1928 թ. № 3։*

*Զետեղվել է ԶԲ և* Երկերում*։ Տպագրվում է վերջինից։*

**Գնդապետ Տոմսոն** — *Անգլիական գեներալ։ Հյուսիսային Իրանում Մեծ Բրիտանիայի զինված ուժերի հրամանատար. 1918 թ. նոյեմբերի 17-ին գրավում է Բաքուն և հայտարարում իրեն Բաքվի ու նրա շրջանների՝ գեներալ-նահանգապետ։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԳԳ 2 *Որքա՜ն հեքիաթնե՛ր կան* քո կարծր ճագում...
6 *Իսկական* նա *հերոս է չգրված վեպի,*
ԱԳԳ, I տպ 26 *Մեր վտիտ* խոխի՛ն *այս կանչեց Կոմիտեն։*
ԱԳԳ 28 *«— Դու քաջ* կոմսոմոլ *ես* նասած —
I տպ 28 *«— Դու քաջ* կոմսոմոլ *ես՝ հասակդ առած —*
ԱԳԳ 34 *Կտանես այս թղթերը* նրանց *զորքերին,*
39 *Հրճվանքից* գողաց *մեր քաջ* խոխի *հոգին,*
I տպ 39 *Հրճվանքից շողաց մեր քաջ* խոխի *հոգին,*
ԱԳԳ, I տպ 56—57 *Մեր* խոխի *գլուխը արնոտեց սպան։*
*Հարվածեց, գլուխը արնոտեց* խոխի —
60 *Արդեն չքացել էր, կորել էր* խոխեն...
63 *Հեիհե հասավ մեր Կոմիտեն* խոխան:
66 *Ուղարկող ընկերը համբուրեց* խոխին...
ԱԳԳ 70 Ուռ Քաղա՜ք իմ, քաղա՜ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու,—
Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...
ԱԳԳ, I տպ 78 *Կեցցե՛ և փոքրիկ այն,* կոմսոմոլ խոխեն

## ԻՄ ԸՆԿԵՐ ԼԻՊՈՆ

*(էջ 277)*

*Գրել է 1928 թ. փետրվարին Երևանում։ Առաջին անգամ տպագրվել է* ԽՀ *1928 թ. № 48։*

*Զետեղվել է* ԶԲ *և* Երկերում: *Տպագրվում է վերջինից։*

**Լիպարիտ Մխչյան** *(1894—1921) — Հայաստանի հեղափոխական շարժման գործիչ. դաշնակցական ավանտյուրայի օրերին հայկական առաջին հրաձիգ բրիգադայի կոմիսար։*

**Նահանջեցինք քաղաքից մենք լուսաբացին** *— Ակնարկում է դաշնակցական ավանտյուրայի հետևանքով Հայաստանի հեղափոխական ուժերի նահանջը Երևանից դեպի Ղամարլու (Արտաշատ) 1921 թ. փետրվարի 18-ին. նահանջողների թվում էր նաև Կոմունիստական ջոկատի զինվոր Ե. Չ.-ն։*

**...Լուսաբացին մենք մտանք Երևան** *— Ղամարլուի ռազմաճակատի զորքերը Երևան են մտնում 1921 թ. ապրիլի 3-ին։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՀ 3 *Ինչքան հիշում եմ նրան՝ աչքերիս առջև*

8 Այնքան *վտիտ է տղան այդ ոտաբոբիկ։*

ԽՀ, I տպ 16 *Մեզ հետ կռվում էր հաճախ,* խաբում *չարաչար։*

ԽՀ 18 *Նա իր չարխը կծռեր ու* շալլուխ *կաներ։*

I տպ 20 *Միակ նեցուկն էր* տղան՝ *բոլորին պահող։*

ԽՀ 22 *Կապուտաչյա այդ տղան* իջնում է *իմ դեմ։*

I տպ 26 *Եկան օրեր հուրհրան, տարիներ* նապենք:

ԽՀ 30 *Օրեր* վառման *ու անգին, անմոռա՛ց օրեր...*

*35—36 չկան*

47 *Բախտախաղ չէ սակայն սա, այլ* վճիռ *ու* կամք.

ԽՀ, I տպ 50 *Դե, կխոսենք* մենք *մի լավ — Երևանում...*

ԽՀ 91 *— Թե* տեսնեի՞ր *ի՞նչ է* հիմա

## ԲԱԼԼԱԴ ԳԵՂՋԿԱԿԱՆ

*(էջ 282)*

*Գրել է 1928 թ. մարտի սկզբին Երևանում։ Առաջին անգամ «Նոր երգ» (Նվեր գեղջկուհիներին) խորագրով տպագրվել է նույն թվին ՄՃ № 19։*

*Զետեղվել է* ԶԲ *և* Երկերում: *Տպագրվում է վերջինից։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՃ, I տպ 4 Կեպի դրած *էն տղի՛ն եմ ես սիրում,*
ՄՃ 8 *Բոյը սիրուն,* տեսքը *սիրուն էն տղին,*
14 *Հո՛ղը գնեմ* աշխարհի *ցեց էն տղին*
I տպ 28 *Երբ* դովլաթի *տերն էր տիրում աշխարհում,*
ՄՃ 30 *Երբ ռանչպարի* բախտն *էր տիրում աշխարհում,*
36—38 Երբ ռանչպար խալխը ելավ մեր գեղում,
Դաշնակի դեմ *թվանք-առավ մեր գեղում,*
*էն* լիրբ *տղեն մի հավ դառավ մեր գեղում,*
44 *Հետը* գնաց *քաշ ախպերըս մեր գեղից,*
51 *Ջահել սրտես սրուն* խմեց *էն տղեն...*
54 *Գեղից* փախած *իմ ախպերներ պոպոզավոր, հուրհեր եկան.*
60 *չկա*
66 *Գլխին* գդակ *փափախ դրած էն տղին,*
70—72 Գլխին կաշի կեպի դրած *էն տղեն,*
Ձեռքերը կոշտ, աչքերը շող *էն տղեն,*
Մեր ճանղերում մաշին քշող *էն տղեն...*
I տպ 71 *Գլխին* կաշե *կեպի դրած էն տղեն*
ՄՃ 73 — *Ես էն տղի* երգն եմ *սիրում աշխարհում*
75 Ես էն տղի խելքն եմ *սիրում աշխարհում*

## ԽՄԲԱԳԻՐ ՇԱՎԱՐՇԸ

*(էջ 286)*

*Գրել է 1928 թ. նոյեմբեր—դեկտեմբերին Երևանում։ Առաջին անգամ տպագրվել է ՆՈՒ 1929 թ. № 1. վերնագրին կից՝ (Մի հատված «Ապստամբություն» չափածո վեպի առաջին գլխից)։*

*Ջետեղվել է* Երկերում. *տպագրվում է վերջինիս հեղինակի սեփական օրինակից։*

Խմբագետ Շավարշ—*Բասենցյան — խմբագետ։*

Սմբատ — *խմբագետ։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Երկ** *328* Ու *դադարել էր արդեն մառւզերների երգը*

## ԲՈՐԻՍ ՁՆԵԼԱՁԵ

*(էջ 301)*

*Գրել է 1931 թ., հավանաբար, վերջերին, Երևանում։ Առաջին անգամ համարյա միաժամանակ տպագրվել է ԳՀ 1932 թ. № 1 և ԽՀ 1932 թ. № 62։*

*«Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ տղի և գործադուլի մասին» գործի և Վ. Նորենցի «Փշե պսակ» պոեմի հետ միասին 1934 թ. տպագրվել է «Կոմերիտմիության տասնհինգամյակին» սերիայով։ Տպագրվում է ԽՀ-ից։*

*Բնաբանն առնված է Վ. Մայակովսկու «Սերգեյ Եսենինին» բանաստեղծությունից։*

Բորիս Ձնելաձե *(1901—1923) — Վրաստանի կոմերիտմիության հիմնադիրներից։*

Աքիլլես — *Հունական էպոսի՝ Հոմերոսի «Իլիականի», ավանդությամբ ամենաքաջը հին հույների մեջ՝ Տրոյական պատերազմում։*

Պատրոկլես — *Նույն ավանդությամբ հույներից քաջը Աքիլլեսից հետո, Աքիլլեսի մտերիմ բարեկամն ու ընկերը։*

Ույիս *(Ոդիսևս)* — *Հունական էպոսում հույների առաջնորդներից մեկը Տրոյական պատերազմում։*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Կապուտաչյա հայրենիք . . . 7
Դանթեական առասպել . . . 11
Վահագն . . . 37
Աթիլլա . . . 39
Ազգային երազ . . . 42
Հատված . . . 67
Սոմա . . . 71
Ամբոխները խելագարված . . . 80
Նայիրի երկրից . . . 95
Դեպի ապագան . . . 100
Բրոնզե թևերը կարմիր գալիքի . . . 103
Երգ ժողովրդի մասին . . . 107
Խաղաղության ռադիո . . . 119
Ամենապոեմ . . . 124
Չարենց—նամե . . . 151
Մանկալ Սաքոյի պատմությունը . . . 177
Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին 192
Լենին քեռին . . . [illegible]
Լենինն ու Ալին . . . 209
Ստամբոլ . . . 214
Պոեմ հերոսական . . . 227
Կոմունարների պատը Փարիզում . . . 232
Էլեգիա, գրված Վենետիկում . . . 250
Բալլադ քառորդվեցի մասին . . . 265
Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ տղի և գործադուլի մասին . . . [illegible]
Իմ ընկեր Լիպոն . . . 277
Բալլադ գեղջկական . . . 282
Խմբապետ Շավարշը . . . 285
Բորիս Ձնելաձե . . . 301
Ծանոթագրություններ և տեքստային տարբերություններ 306



*«Սոմա» պոեմի ինքնագրի առաջին էջը*

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

# ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## հատոր II

Տպագրվում է Հայկական ՍՍՌ
ԳԱ գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի հանձնարարությամբ

*Հրատ. խմբագիր Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ*
*Նկարչական ձևավորումը Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ*
*Տեխ. խմբագիր Հ. Լ. ԳՈՐՈՅԱՆ*
*Սրբագրիչ Զ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ*

*Պատ. 92, Հրատ. 2202, ՎՀ 785, տիրաժ 11000*

---

*Հանձնված է արտադրության 31/I 1963 թ., ստորագրված է տպագրության 13/VI 1963 թ., տպագր. 25 մամուլ + 6 ներդիր, հրատ. 14,9 մամուլ, թուղթ 84×108 1/32։ Գինը կազմով 1 ռ. 10 կոպ.*

---

*Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24*